ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՈԿԱԼ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Լ 730

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը

Վերմիշյան Հ. Ռ., Բալասանյան Ս. Ա., Գրիգորյան Օ. Գ., Քերոբյան Ս. Ն.

Լ 730 Լոկալ ինքնությունները Երևանում. քաղաքային տարածության կառուցվածքները: Կոլեկտիվ մենագրություն/ Հ. Վերմիշյան, Ս. Բալասանյան, Օ. Գրիգորյան, Ս. Քերոբյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 158 էջ + 1 էջ ներդիր:

Գրքում սոցիոլոգիական տեսանկյունից իմաստավորվում է Երևանի քաղաքային տարածության ձևավորման, զարգացման և փոփոխման պատմությունը: Հիմնվելով սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վրա՝ նկարագրվում և բացահայտվում են երևանյան լոկալ ինքնությունները, երևանյան լոկալ տեղերի կառուցվածքներում դրանց աշխարհագրական, սոցիալական, սիմվոլիկ դրսևորումները:

Գրքում ներկայացված հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13YR-5D0027 գիտական թեմայի շրջանակներում:

Աշխատությունը նախատեսված է քաղաքը ուսումնասիրող, դրանով հետաքրքրվող մասնագետների, ուսանողների և հանրության լայն շրջանակների համար:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

ISBN 978-5-8084-2046-5

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 5

ՄԱՍ 1. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ 11

ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 12

ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԸ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՍԻՄՎՈԼԻԿ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ 26

ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԵՂԵՐ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ . 48

ԳԼՈՒԽ 4. ՔԱՂԱՔԸ՝ ՄՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 56

ՄԱՍ 2. ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ. ՁԵՎԱՎՈՐՈՒՄ, ԸՆԿԱԼՈՒՄ ԵՎ ՍՊԱՌՈՒՄ 67

ԳԼՈՒԽ 5. ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 69

ԳԼՈՒԽ 6. ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ 80

ԳԼՈՒԽ 7. ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԱԲՆԱԿՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ 96

ԳԼՈՒԽ 8. ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 110

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 134

ՀԱՎԵԼՎԱԾ 140

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Քաղաքը, որպես հասարակության կազմակերպման տարածություն, գոյություն է ունեցել դեռևս անտիկ ժամանակաշրջանից, սակայն քաղաքի արդի մոդելը՝ ուրբանը, նոր ժամանակների ծնունդ է: Ինչպես Չ. Թիլին է նկատում, անդրադառնալով քաղաքի՝ որպես մարդկության զարգացման պատմական ֆենոմենի նկարագրությանը, *ուրբանի պատմությունը արդիականության քվինտէսենցիալ (էութենական) պատմությունն է*[1]: Քաղաքն իր արդի կառուցվածքով և արդիականության ոգու վերարտադրության ներուժով է, որ դառնում է նաև սոցիոլոգիական ֆենոմեն[*]: Սկսած դեռևս սոցիոլոգիայի որպես գիտություն կայացման շրջանից, քաղաքի՝ որպես արդիականության ոգին կրող տարածություն, վերաբերյալ դիտարկումները զուգահեռվել են սոցիոլոգիական խնդրակարգի սահմանման գործընթացներին: Մասնավորապես, քաղաքը դիտարկվել է որպես անհատների մտային կառուցվածքները պայմանավորող գործոն[2], կամ քաղաքը՝ որպես քաղաքական, տնտեսական և հասարակական կազմակերպման արդի մոդել[3]:

Արդի քաղաքը պատմական և հասարակական զարգացումների արդյունք է: Վերջինիս, որպես ինդուստրիալ հասարակության բաղադրիչ-տարածություն, զարգացման պատմությունն ուղեկցվում է

---

[1] Delanty G. & Engin F. I. (Eds.). (2003). *Handbook of Historical Sociology.* London: SAGE, p. 313.

[*] Գրքում «քաղաք» եզրույթը կօգտագործվի «արդի քաղաք» իմաստով՝ անհրաժեշտության դեպքում կօգտագործվի նաև «ուրբան» հասկացությունը:

[2] Տե՛ս Simmel G. & Wolff K.H. (1950). The Metropolis and Mental Life. *The Sociology of Georg Simmel.* Glencoe, Ill.: Free Press.

[3] Տե՛ս **Вебер М.** (1994). *Город. Избранное.* Образ общества. М.: Юристъ.

բնության դեմ մարդու գործունեությամբ. քաղաքային տարածություն է դառնում սոցիալապես իմաստավորված ֆիզիկական տարածությունը, իսկ ֆիզիկական տարածության սոցիալականացման ընթացքը ուղեկցվում է բնական լանդշաֆտի կտրուկ փոփոխմամբ: *Քաղաքը բնությունից մարդու մաքսիմալ օտարման տարածությունն է*, կամ ինչպես Ք. Լինչն է նկատում.

> *«Ժամանակակից մարդը յուրացնում է տարածությունը, կողավորում դրանք, դարձնելով վայրերը շենքեր, բնությունը՝ բնապատկեր, մակերևույթը՝ լանդշաֆտ»*[4]:

Արդի քաղաքային տարածության մյուս առանձնահատկությունը, որն այն տարբերակում է մինչինդուստրիալ հասարակություններին բնորոշ կեցության ձևերից, օրինակ գյուղական համայնքներից, *անդիմություն է:* Քաղաքն անհատների անդեմ փոխհարաբերման միջավայր է, միաժամանակ վերանհատական միավորների (օրինակ՝ քաղաքային տեղերի, դրանց կառուցվածքների և ինքնությունների) հարաբերակցման տարածություն:

Քաղաքը արդիականության կրողն է, այն բարդ և գլոբալ ֆենոմեն է՝ լինելով ու մնալով նաև լոկալ, առօրյա կենսակերպերի համադրություն: Որպես պատմական կառուցվածք քաղաքային տարածությունը, ժամանակի ընթացքում ձևավորել և զարգացրել է ինքնավերարտադրության «քաղաքային» մեխանիզմներ, որոնք էլ պայմանավորում են քաղաքային առօրյան և քաղաքաբնակի կենսակերպը: Քաղաքային տարածության վերացականությունը հաղթահարվում է ի հաշիվ քաղաքային լոկալ տեղերի և դրանք սպառող, ստեղծող, իմաստավորող ագենտների.

---

[4] **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press, p. 2.

«Տարածությունը, ի տարբերություն տեղի, վերացական երևույթ է, այն սկզբունքորեն անհասանելի է փորձին, մինչդեռ տեղը կապված է մարդու փորձի հետ»[5]*:*

Քաղաքային տարածությունը յուրատիպ աբստրակցիա է, որը պայմանավորում է քաղաքային կենսակերպ, բայց այն նաև քաղաքային լոկալ փոխհարաբերությունների, տեղերի կենսագործունեության արդյունք է: Քաղաքային տարածության մեջ լոկալ տեղերը պայմանավորում են առօրյա փոխհարաբերությունները՝ արտահայտելով (մասնավորեցնելով և ընդհանրացնելով) քաղաքային կենսափորձը: Քաղաքի զարգացման գործում իրենց ներգործուն դերն ունեն քաղաքային իշխանությունները, քաղաքաշինական սուբյեկտները, սակայն քաղաքային կենսափորձը կրողն ու վերարտադրողը քաղաքային սոցիալական տարածության և լոկալ տեղերի ագենտներն են՝ քաղաքաբնակները, այցելուները և այլն, ովքեր իրենց առօրյան կազմակերպելու համար կիրառում են լոկալ ատրիբուտներ, կամ անդեմ քաղաքային միջավայրում միմյանց նման և միմյանցից տարբեր լինելու համար կրում են «լոկալ դիմակներ»՝ ձևավորելով և վերարտադրելով *քաղաքային լոկալ ինքնություններ:*

Գիրքը բաղկացած է 2 հիմնական մասերից: Առաջին մասը տեսամեթոդաբանական է, որի շրջանակներում սահմանվում և մեկնաբանվում են քաղաքային տարածություն, քաղաքային տեղեր և քաղաքային ինքնություններ փոխկապված հասկացությունները: Քաղաքային տարածության կառուցվածքի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումների շարքում հատկապես ընդգծվում է *կոնստրուկտիվիստական ստրուկտուրալիզմը*:

Երկրորդ մասում ներկայացվում է Երևանի քաղաքային տարածության ձևավորման, քաղաքաբնակների կողմից տարածության ըն-

---

[5] **Степанцов П., Безруков В.** (2008). *Проблема Места и Я (Self) в социальной географии и философии.* Социологическое обозрение. Том 7. № 3, ст. 44.

կալման և լոկալ տեղերի սպառման առանձնահատկությունները: Երևանի քաղաքային տարածության սոցիոլոգիական հետազոտության հիմքում ընկած են եղել հետևյալ մոտեցումներն ու մեթոդները.

✓ ***Ստանդարտացված հարցազրույց***

Ինքնանույնականացման և տարբերակման լոկալ մեխանիզմների, քաղաքային տեղերի վերաբերյալ ընկալումների բացահայտման նպատակով իրականացվել է ստանդարտացված հարցազրույց 18 տարին լրացած, Երևանի շենքերում/առանձնատներում առնվազն 10 տարի ապրած երևանաբնակների շրջանում: Կիրառվել է կլաստերային ընտրանք (որպես կլաստեր դիտարկվել են ընտրատեղամասերը), ընտրանքային համախմբությունը հաշվարկվել է 400, 95% վստահության հավանականությամբ և 5% վստահության միջակայքով:

✓ ***Փաստաթղթերի վերլուծություն***

- *Արխիվային հետազոտություն.* հետազոտության շրջանակներում որպես տեղեկատվության առաջնային աղբյուր հանդես են եկել արխիվային փաստաթղթերը: Մասնավորապես վերլուծության են ենթարկվել Խորհրդային շրջանում պետական շահագործման հանձնված երևանյան շենքերի ակտերը[6] և Շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների նիստերի արձանագրությունները[7]: Արխիվային վերոնշյալ փաստաթղթերի միջոցով դուրս են բերվել շահագործման հանձնված բնակարանների նկարագիրը, բաշխման առանձնահատկությունները, բնակֆոնդի փոփոխությունները:
- *Տվյալների երկրորդային վերլուծություն.* հետոզոտությունն ուղղված է եղել Երևանի կենտրոնի գլխավոր հատակագծի

[6] Արխիվային նյութեր: ՀՀ ազգային արխիվ, Երևանի քաղաքային արխիվ: “Акты государственной приемки в эксплуатацию”:

[7] Արխիվային նյութեր: ՀՀ ազգային արխիվ: “Протоколы заседаний исполкома райсоветов»”:

փոփոխությունների ուսումնասիրությանը: Որպես աղբյուր հանդես են եկել՝ Թամանյան Ա. «Քաղաք Երևանի պլանավորման մասին»[8]; «Ա. Թամանյանի երկու նամակը»[9]; Ավետիսյան Կ. Մ., Ավետիսյան Ա. Ա., «Հայրենագիտական էտյուդներ»[10]; «Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հավելված ՀՀ կառավորության 2013 թ. մարտի 7-ի նիստի № 9 արձանագրային որոշման; ՀՀ «Երևան քաղաքի ինքնավարման» օրենք[11]:

✓ ***Մտային քարտեզագրում***

Կիրառվել է Ք. Լինչի «մտային քարտեզագրման» տեխնիկան[12], փորձ է արվել պարզելու, թե ինչպես են երևանաբնակները ընկալում Երևանի կենտրոնի հանրային տարածությունը՝ ինչպես է այն արտապատկերված քաղաքաբնակի մտքում: Մտային քարտեզագրման համար իրականացվել են 3 ֆոկուս խմբային քննարկումներ, 15-ական մասնակցով: Ընդհանուր առմամբ 45 մասնակցի ընտրության հիմնական չափանիշն է եղել Երևանի կենտրոնում լինելու հաճախականությունը. 1-ին խումբ՝ կենտրոնի բնակիչներ, 2-րդ խումբ՝ կենտրոնում աշխատող երևանաբնակներ, 3-րդ խումբ՝ Երևանի այլ համայնքների բնակիչներ: Ֆոկուս խմբի մասնակիցներին հանձնարարվել է նկարել քաղաքի կենտրոնի ուրվագիծը թղթի վրա, տալ քաղաքի այն մասերի մանրամասն նկարագրությունը, որոնք առավել

---

[8] Տե՛ս **Таманян А.** (1968). *О планировке гор. Эривани*. (1968). «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2.

[9] Տե՛ս *Ա. Թամանյանի երկու նամակը:* (1969): «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3:

[10] Տե՛ս **Ավետիսյան Կ. Մ., Ավետիսյան Ա. Ա.** (1979): Հայրենագիտական էտյուդներ: Երևան: «Սովետական գրող»:

[11] Տե՛ս *ՀՀ կառավարության արձանագրային որոշում:* (2013): *ՀՀ օրենք Երևան քաղաքի ինքնավարման:* (Տարեթիվ չկա): [Առցանց]: Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին: Հասանելի է https://www.yerevan.am/am/ra-law-on-local-government-in-the-city-of-yerevan: [Դիտված 04.09.2015]:

[12] Տե՛ս **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA:

հստակ և ցայտուն են ամրագրված հիշողության մեջ: Կոնտենտ վերլուծության միջոցով ընդհանրացվել են մտային քարտեզների բովանդակային տարրերը, հաշվարկվել է հիշատակված քաղաքային տարրերի ընդհանուր թվաքանակը/հաճախականությունը: Արդյունքում, հնարավոր է դարձել քարտեզագրել Երևանի կենտրոնի հանրային տարածության սիմվոլիկ բաշխումը:

✓ ***Կենսագրական հարցազրույց***

Երևանաբնակների շրջանում իրականացվել է 42 կենսագրական հարցազրույց՝ ուղղված բնակտարածության փոփոխման, լոկալ տեղերի սպառման անհատական ռազմավարությունների վերհանմանը: Հետազոտությունն իրականացվել է Երևանի բոլոր համայնքներում, հաշվի է առնվել բնակիչների՝ Երևանում ապրելու տևողությունը, բնակելի շենքի տարիքը և նախագիծը:

✓ ***Դիտարկում***

Քաղաքային տարածական պրակտիկաների լոկալ դրսևորումները, տարածության ներկայացման առանձնահատկությունները վերհանելու և նկարագրելու նպատակով իրականացվել են դիտարկումներ Երևանի համայնքներում: Արդյունքում, ստեղծվել է արդի Երևանի լոկալ տեղերը պատկերող վիզուալ տվյալների շտեմարան:

Հետազոտական թիմին աջակցելու և բարեխիղճ աշխատելու համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում սույն հետազոտության դաշտային աշխատանքներում ընդգրկված 2013-2014 ուսումնական տարվա ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիա բաժնի **չորրորդ կուրսի** ուսանողներ՝ *Թարգյան Հրանուշին, Թովմասյան Շուշանին, Հակոբյան Ալիսային, Գարանյան Սիլվային,* **երկրորդ կուրսի** ուսանողներ՝ *Իսկանդարյան Լիլիթին, Հայրապետյան Նունեին, Մնացականյան Նունեին, Ավետիսյան Կլարային, Ոսկանյան Իննային, Տիգրանյան Անիին, Մարտիրոսյան Նուշիկին, Գեղամյան Նարինեին, Մաղոյան Դիանային, Սարուխանյան Ռուզաննային, Մարգարյան Միշային, Ֆալբաջանյան Սուսաննային:*

ՄԱՍ 1.
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Տարածությունը, ուր մենք ապրում ենք, որը մեզ դուրս է բերում մեզնից, որում տեղի է ունենում մեր կյանքի, մեր ժամանակի ու պատմության էրոզիան, տարածությունը, որ պատառոտում ու մաշում է մեզ, նաև տարասեռ է ինքն իր մեջ:

Միշել Ֆուկո

ԳԼՈՒԽ 1.
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Քաղաքի ուսումնասիրությունը և քաղաքի ֆենոմենի սոցիոլոգիական ըմբռնումը սկսվում է արդի քաղաքի ձևավորման և զարգացման պատմության իմաստավորմամբ: Արդի քաղաքը, կրելով և կենտրոնացնելով արդյունաբերական, տեխնոլոգիական նվաճումները, հասարակության զարգացման ուղենիշ է դարձել: Լ. Մամֆորդը, քաղաքը դիտարկելով պատմական զարգացման մեջ, նշում է, որ քաղաքները գոյություն են ունեցել դեռևս քարե դարում և հատկապես այնպիսի վայրերում, որոնք գերբնական էներգիա են ունեցել: Սկզբում քաղաքն ամբողջովին կապված էր կրոնի և հավատի հետ[13]:

Ֆ. Բրոդելը, խոսելով տարբեր բնակելի գոտիների մասին, ցույց է տալիս դրանց փոխառնչությունները. *«Ավանից հավասար հեռավորությունների վրա գտնվում են գյուղերը: Ավանները և գյուղերը միասին կազմում են գավառներ: Իրենց հերթին, գավառները տեղայնացված են քիչ թե շատ զարգացած քաղաքների շուրջ և կոչվում են երկրամասեր: Երկրամասերը խմբավորվում են քաղաքների շուրջ: Այս ամբողջ կոնստրուկտը կապակցում է ազգային շուկան: Մինչդեռ ազգային շուկան առաջանում է միայն քաղաքի առկայության պարագայում,որը (քաղաքը) բարենպաստ պայմաններում է այն (ազգային շուկան) օգտագործելու համար»*[14]*:* Տարածությունը ոչ միայն առանձնացնում, այլև միավորում է, քանի որ անգամ առանձնանալը ձևավորում է պահանջմունքներ, որոնց բավարարման հա-

---

[13] Տե՛ս **Mumford L.** (1961). *The City in History: Its Origins, Its Transformations, and Its Prospects*. New York: Marcourt, Brace & World:

[14] **Бродель Ф.** (1994). *Что такое Франция? Пространство и История*. Москва: изд. им. Сабашниковых, ст. 67.

մար անհրաժեշտ են փոխհարաբերություններ: Ֆ. Բրոդելը դուրս է բերել քաղաքի բնութագրիչները՝ դիտարկելով քաղաքը գյուղերի և ավանների հետ փոխկապված:

Գյուղեր

Ըստ Ֆ. Բրոդելի՝ գյուղի ընդհանուր նկարագրություն չի կարող լինել. յուրաքանչյուր գյուղ իր տարբերիչ հատկանիշներն ունի: Առաջինը ընդհանուր զբաղվածության բնույթն է, օրինակ՝ անասնապահությունը, խաղողագործությունը և այլն: Խոսքն այն հիմնական գործունեության մասին է, որն ընկած է գյուղի կենսապահովման հիմքում՝ պայմանավորված նաև աշխարհագրական դիրքով, կլիմայական յուրահատկությամբ:

Տարբերակման հիմքում ընկած հաջորդ հատկանիշը ճարտարապետական ավանդույթներն են: Պատմության ընթացքում հանդիպում են որոշակի օրինաչափությամբ կառուցված գյուղեր, որոնցում, օրինակ, տները դեպի վեր են տարածվում կամ կառուցվում են փողոցի ծայրին:

Տարբեր գյուղերում բնակչության տեղաբաշխումը յուրահատուկ է: Դա բացատրվում և դիտարկվում է ժամանակային կտրվածքում: Նա մեջբերում է Կառլ Լամպրեխտին, ով առաջ է քաշում հակադրություն՝ Dorfsystem/Hofsystem (գյուղերի համակարգ և ագարակների համակարգ): Ագարակի և գյուղի միջև գտնվում է գյուղակը, այլ կերպ ասած՝ իրար կողքի կանգնած որոշակի տներ[15]: Այս տարանջատումը կառուցման առանձնահատկություններից է. գյուղերը շրջապատված են տներով, իսկ ագարակները կենտրոն չունեն:

Էական դեր ունեն ճանապարհները, որոնք նպաստում են որոշ տեղերում տների և բնակչության խիտ տեղայնացմանը, իսկ մյուս

[15] Տե՛ս **Lamprecht C.** (1889). *Etudes sur l'etat economique de la France pendant la premiere partie de Moyen Age.* Ed. fr.:

տեղերում՝ դրանց՝ իրարից և կենտրոնից շատ հեռու գտնվելուն: Այն գյուղակներում, որտեղ դպրոցը, եկեղեցին, գյուղապետարանը գտնվում են տարբեր հատվածներում, համայնքն իր գործառույթը բավականին բարդ է իրականացնում: Առհասարակ, եթե հաշվի չառնենք գյուղի ձևը, այլ միայն գործառույթը, տարբերություններն այդքան էլ էական չեն[16]:

Լ. Մամֆորդը ընդգծում է, որ գյուղերում դրված են կենցաղի կազմակերպման, համատեղ գոյության հիմքերը: Գյուղն իր մեջ ներառում է մի քանի ոչ մեծ ընտանեկան խմբեր և ունի իր ավանդույթները: Բոլորը խոսում են նույն լեզվով, ունեն հավաքատեղիներ: Սա ենթադրում է աշխատանքի յուրահատուկ բաժանման մեխանիզմներ: Յուրաքանչյուրն իր հարևանի մեջ տեսնում է իր իսկ կերպարը[17]:

Էական է ցանկացած գյուղի ձգտումը՝ ամեն ինչ անել ինքնուրույնաբար: Օրինակ, որոշակի քանակից ավելի բնակիչների պարագայում, ամուսնությունները գյուղի ներսում են տեղի ունեցել: Յուրաքաչյուր գյուղ ուներ իր դրվածքը, համայնքը, կոլեկտիվ սեփականությունը, ասացվածքները, երգերը, պարերը և այլն: Անգամ ընդունված էր ծիծաղել հարևանների յուրահատկությունների վրա, ինչը փաստում էր, որ յուրաքանչյուր գյուղացի ուներ իր փոքր հայրենիքը՝ իր բոլոր սահմանափակումներով[18]:

---

[16] Տե՛ս **Бродель Ф.** (1994). *Что такое Франция? Пространство и История.* Москва: изд. им. Сабашниковых:

[17] Տե՛ս **Mumford L.** (1961). *The City in History: Its Origins, Its Transformations, and Its Prospects.* New York: Marcourt, Brace & World:

[18] Տե՛ս **Бродель Ф.** (1994). *Что такое Франция? Пространство и История.* Москва: изд. им. Сабашниковых:

Սոցիալական կառուցվածքը պահպանվում էր ընտանեկան ասքերի, հերոսների օրինակների, բարոյական արգելքների միջոցով: Այն փոխանցվում էր սերնդեսերունդ՝ չփոխելով իր էությունը[19]:

Ինքնուրույնության ձգտումը լուրջ հիմնավորում ուներ. գյուղերը տիրապետում էին համայնքային սեփականությանը, ունեին անտառներ (որոնք հատկապես կարևոր ռեսուրս էին հին ժամանակներում): Բոլոր գյուղերում առաջնորդներ կային ՝ մսագործ, դպրոցի ուսուցիչ, նոտար և այլն: Նրանց քանակից կարելի էր դատել նաև գյուղի չափերի մասին, իսկ ավելի մեծ քանակի դեպքում գյուղերում կային առևտրականներ և առևտրի կենտրոններ: Այդուհանդերձ, որքան էլ գյուղաբնակները փորձում էին սեփական ուժերով բավարարել իրենց պահանջմունքները, արտաքին աշխարհի հետ կապվելու անհրաժեշտությունն անխուսափելի էր: Պետք էր վաճառել ավելորդ ապրանքը հարակից գյուղերում: Ուստի, ժամանակի ընթացքում մարդիկ սկսում են ավելի ակտիվորեն տեղաշարժվել գյուղից ավան, ավանից քաղաք:

Գյուղի և քաղաքի համագոյության կազմակերպման տեսանկյունից կարևոր էր կնոջ դերը[20]: Երեխաներին մեծացնելու համար կինը մշտական բնակության վայրի կարիք ուներ և նույն վայրում երկար ժամանակ և կայուն բնակությունը տեղի ուներ կնոջ նախաձեռնությամբ: Առաջնային նշանակություն ունեցող պարագաները թե՛ գյուղերում, թե՛ քաղաքներում ստեղծվել և պահպանվել են կնոջ շնորհիվ: Եգիպտական հիերոգլիֆներում քաղաքը նշանակող հիերոգլիֆը մայրական պաշտպանություն է խորհրդանշում: Գյուղը մարդկային գործունեության ինքնակարգավորման նոր տեսակ ձևավորեց. ի հայտ եկան ընտանիքներ, ընտանեկան ցեղեր, հարևաններ, ընտանի

---

[19] Տե՛ս **Mumford L.** (1961). *The City in History: Its Origins, Its Transformations, and Its Prospects.* New York: Marcourt, Brace & World:

[20] Տե՛ս **Бродель Ф.** (1994). *Что такое Франция? Пространство и История.* Москва: изд. им. Сабашниковых:

կենդանիներ և այլն: Առանց գյուղի քաղաքային համայնքները սոցիալական անընդհատության մեծ պակաս կունենային, քանի որ մարդկային փոխհարաբերությունների էթիկան զարգացավ գյուղերում, գյուղական նորմերում և ավանդույթներում:

Գյուղի և քաղաքի կապի մասին խոսելիս կարևոր է նաև անդրադառնալ համայնք-հասարակություն հասկացություններին: Ֆերդինանդ Թյոնիսը ուսումնասիրում է մարդկանց փոխհամաձայնեցված հարաբերությունները, արդյունքում ձևավորվում է սոցիումի որևէ տեսակ՝ խումբ, համայնք կամ ցանկացած այլ միավորում, որը գործում է որպես մեկ ամբողջ թե՛ իր ներսում, թե՛ առհասարակ: Այդ փոխհարաբերությունները, ըստ Ֆ. Թյոնիսի, կարող են լինել իրական և օրգանական (այդպիսին է համայնքը) կամ իդեալական և մեխանիկական (այդպիսին է հասարակությունը): Համայնքում որոշումների կայացումը համընդհանուր համաձայնության միջոցով է կայանում, ինչը բնորոշ է գյուղերին, մինչդեռ հասարակությունը շատ ավելի լայն միավորում է, որը բաղկացած է ամենատարբեր համայնքների տիպերից և այստեղ, բնական է, անհնար է կայացնել որոշումներ, այնպես, ինչպես համայնքներում. սա բնորոշ է քաղաքներին: Այսպիսով՝ համայնքում (*Gemeinschaft)* առկա է հոմոգեն, օրգանական, իրական, կազմակերպված կյանքի զգացում, իսկ հասարակությունը *(Gesellschaft)* հիմնված է կոնֆլիկտային և էգոիստական ցանկությունների վրա: Համայնքում սոցիալական կամքը դրսևորվում է միաձայնության, սովորույթների և կրոնի միջոցով, իսկ հասարակությունում՝ պայմանագրի, քաղաքականության և հասարակական կարծիքի: Համայնքում փոխհարաբերությունները կարգավորվում են նորմերի, կրոնի, ավանդույթների գերակայությամբ, իսկ հասարակությունում՝ օրենքների[21]:

---

[21] **Toennies F.** (2001). *Community and Civil Society*. Cambridge: Cambridge University Press, pp. 1-48.

Գյուղի և քաղաքի կապի մասին Լ. Մամֆորդը գրում է.

> *«Երբ գյուղը մեռնում է մեր մեջ, մենք կորցնում ենք համայնքային կարգի հին զգացումը, ոգին և դրանով հանգում արագ շարացող քաղաքների անկմանը: Միայն այն պարագայում, երբ գյուղը մեռնում է մեր մեջ, մենք հասկանում ենք՝ ինչքան մեծ է մեր պարտքը գյուղին, ինչքան շատ բանով ենք մենք պարտական դրան և որքան կարևոր են դրա կենսական էներգիան և ոգին քաղաքների համար»*[22]:

Ավաններ

Բնակելի գոտիների տիպաբանմամբ Ֆ. Բրոդելը անդրադառնում է ավաններին, որոնք սահմանում են թե՛ մեծ գյուղերը, թե՛ փոքր քաղաքները: Գյուղական համայնքի համար ավանը կենտրոնացնում է իր մեջ վարչական և դատական իշխանությունները, հանդիսանում է առևտրի կենտրոն. այն արտաքին աշխարհին կապող օղակն է:

Յուրաքանչյուր ավան պահպանում է իր գոյությունը, քանի որ դրանում կան շուկաներ, առևտրի կենտրոններ, ծառայություններ, հրապարակներ, որոնք օգուտ են բերում շրջակա գյուղերին և գյուղակներին[23]: Ավանը ևս, ինչպես և գյուղերը, իր գոյությունը պահպանում է ի շնորհիվ արտաքին աշխարհի հետ բազմազան կապերի: Որպես կանոն, այն գտնվում է ճամփեզրին, ծառայում տեղական շուկային և հանդիսանում ընդհանուր շուկա տարբեր գյուղերի համար:

---

[22] **Мамфорд Л.** (дата нет). [Онлайн]. Город в истории. Доступно: http://www.ukrainica.org.ua/ukr/projects/misto_i_chas/993-993. [Просмотрено 08.07.2014].

[23] Տե՛ս **Бродель Ф.** (1994). *Что такое Франция? Пространство и История*. Москва: изд. им. Сабашниковых:

Ավաններն իրենց են ենթարկում այն բոլոր մերձակա գյուղերը, որոնք դրա կարիքն ունեն: Պատմության մեծ գյուղերն ավաններից այնքան էլ հեռու չէին, որ գյուղացին կարողանար մեկ օրվա մեջ ոտքով կամ կենդանու օգնությամբ հասնել այնտեղ, իսկ երեկոյան վերադառնալ տուն: Կենտրոնական ավանն ուներ իր փոստային կետը, դատարանը, նոտարը, առևտրի կենտրոնները, տոն օրերին տոնախմբություններ էին կազմակերպվում, կային տարբեր զբաղմունքներ ունեցող մասնագետներ:

Ավանի և գյուղերի միջև փոխազդեցության այսպիսի մոդելը անընդհատ վերարտադրվել է: Ավանը ոչ միայն սոցիալական և տնտեսական գերակայություն ուներ գյուղերի հանդեպ, այլև հասարակական կարգի պահպանման տեսանկյունից «խնամակալի» գործառույթ էր իրականացնում: Պարզելու համար մենք գործ ունենք ավանի հետ թե ոչ, կարելի է օրինակ տեսնել ապրում է այնտեղ բժիշկ կամ նոտար, թե ոչ, կա արդյոք շուկա, թե ոչ:

Քաղաքներ.

Ըստ Ֆ. Բրոդելի, բոլոր քաղաքները ունեն միևնույն բնութագիրը: Յուրաքանչյուր քաղաքի գոյության համար անհրաժեշտ են մի քանի հիմնական պահանջներ՝ անընդհատ կապ գյուղի հետ, մարդկանց քանակի ավելացում, տարբերվելու այլ քաղաքների և շրջակա գյուղերի հետ կապի մեջ լինելու և, այս իմաստով, կենտրոնական տեղ ունենալու միտում[24]:

Քաղաքներն իրար հետ որոշակի կապի մեջ են. որոշները ղեկավարող են, մյուսները՝ ենթարկվող, և դրանց միջև հիերարխիկ հարաբերություններ են: Քաղաքի գոյության ամենակարևոր կետը ոչ թե

[24] Տե՛ս **Бродель Ф.** (1986). *Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв.,* т.1: Структуры повседневности: возможное и невозможное, Москва: Прогресс, стр. 509-592.

քանակն է, այլ այն, որ պետք է գոյություն ունենա ավելի փոքր քաղաք/գյուղ, որի հարաբերությամբ այն գերակա կլինի: Ֆ. Բրոդելը նկարագրում է քաղաքը որպես գերկառուցվածք: Հաջողության համար վերջինիս անհրաժեշտ է գերակա լինել:

Այն հարցը, թե որքան բնակչություն է անհրաժեշտ քաղաք կոչվելու համար, միանշանակ պատասխան չունի. տարբեր ժամանակաշրջաններում տարբեր երկրներում այդ թիվը տարբերվում է[25]: Սկզբնական շրջանում գյուղական բնակչության թվաքանակը ավելի մեծ էր, քան քաղաքայինը, բայց չնայած դրան, քաղաքն առավելություն ուներ. այն հեշտությամբ էր «իր ձեռքը վերցրել» իշխանությունը, մշակույթը և դժվար էր հանկարծակիի բերել դրան[26]:

Կարևոր դրույթներից մեկը, որը քննարկում է Ֆ. Բրոդելը, քաղաքի և գյուղի միջև աշխատանքի բաժանումն է: Քաղաքն ու գյուղը չեն դիտարկվում որպես դասային պայքարի կրող, մեկը մյուսին նախորդող կամ հաջորդող: Ծագման տեսանկյունից դրանք միևնույն ժամանակահատվածում են առաջացել: Քաղաքն ու գյուղը տարբերվել են գործառութային դերակատարմամբ. քաղաքը գյուղին մասնագետներ է առաքել, գյուղը քաղաքին՝ մթերք: Քաղաքի և գյուղի միջև առկա հարևանական կապը նպաստել է նաև գործառույթների միախառնմանը: Չես կարող քաղաքը գյուղից բաժանել: Գործում է հետևյալ սկզբունքը՝ *«ես ապեղծում եմ քեզ, դու՝ ինձ»*[27]:

Անկախ այն հանգամանքից, որ քանակը քաղաքների առկայության միակ գործոնը չէ, այնուամենայնիվ, եթե քաղաքը մարդկանց ավելացում չապահովեր, կդադարեր գոյություն ունենալ: Մարդիկ

---

[25] Տե՛ս նույն տեղում:

[26] Տե՛ս **Бродель Ф.** (1994). Что такое Франция? Пространство и История. Москва: изд. им. Сабашниковых:

[27] **Бродель Ф.** (1986). *Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв.,* т.1: Структуры повседневности: возможное и невозможное, Москва: Прогресс, стр. 509-592.

գալիս էին տվյալ քաղաք, քանի որ նախկին քաղաքները իրենց կարիքը չունեին: Նորեկները աշխատուժ էին դառնում քաղաքում: Բայց քաղաքները միայն աղքատներին չէին ընդունում, այլ ձգտում էին հարուստ առևտրականներին, մասնագետներին, ուսուցիչներին, արվեստագետներին ևս ներգրավել՝ ի վնաս այլ քաղաքների, քանզի քաղաքների միջև հստակ հիերարխիկ հարաբերություններ կային: Քաղաքներում նորեկներին ցածր վարձատրվող աշխատանք էր առաջարկվում, և աղքատացող պրոլետարիատը յուրաքանչյուր մեծ քաղաքի բնութագրիչներից էր:

Յուրաքանչյուր քաղաք ձգտում էր լինել «առանձին աշխարհ», դրա համար համարյա բոլոր քաղաքները XV-XVIII դարերում պարսպապատ էին՝ այդ կերպ ունենալով աշխարհագրական հստակ ընդգծվածություն: Վերջինիս առաջնային նշանակությունը անվտանգությունն էր: Սակայն պարիսպները ոչ միայն անվտանգության նպատակով էին դրվում, այլև մարդկային գոյության կենտրոն էին խորհրդանշում[28]: Եվ հենց պարսպի առկայությունն էր քաղաք կոչվելու իրավունք տալիս: Փարավոնների ժամանակ քաղաք նշանակող հիերոգլիֆը պատկերվում էր շրջանի մեջ դրված խաչի տեսքով, ինչը ճանապարհների խաչմերուկ և պարիսպ էր խորհրդանշում: Պարիսպը դարպասներ ուներ, որն անհրաժեշտ էր արտաքին աշխարհի հետ կապի համար: Քաղաքները ճանապարհների խաչմերուկում էին, որտեղ տեղի էր ունենում առևտուրը:

Կային քաղաքներ, որոնք համոզված էին իրենց ուժերի վրա և պարիսպներ չունեին, կային որ պարսպապատված էին վտանգ ներկայացնող կողմից: Հետաքրքիր է, որ Ֆ. Բրոդելը օրինակ է բերում Հայաստանը՝ պարսիկների սահմանին: Սա պատճառ էր դարձել, որ Ֆյուրտերի բառարանում քաղաքը սահմանվում էր որպես պատերով

[28] Տե՛ս **Mumford L.** (1961). The City in History: Its Origins, Its Transformations, and Its Prospects. New York: Marcourt, Brace & World:

ներփակված ու մարդկանցով բնակեցված վայր: Արևմուտքում ևս դա խորհրդանշում էր երկրի գիտակցաբար ձգտումը անկախության և ազատության: Բարձրահարկ շենքեր էին կառուցվում ու քաղաքն աճում էր ուղղահայաց: Ժամանակի ընթացքում քաղաքներում բնակչության հսկայական աճը անհրաժեշտ էր դարձնում պարիսպների շարժական դարձնելը, այնպես, որ հնարավոր լիներ տեղափոխել:

Յուրաքանչյուր քաղաք կառուցվում է ինչ-որ տեղ և մնում այնտեղ՝ ունենալով դրական և բացասական կողմեր՝ առևտրի կազմակերպում և այլն: Քաղաքները կապված են այն տեղին, որտեղ առաջացել են, որից ազատվելն անհնարին է[29]: Բայց քաղաքի դիրքավորումն ունի նաև դրական կողմեր և անհրաժեշտ է քաղաքի ծաղկման համար: Քաղաքների դիրքը կարող է լինել բարենպաստ կամ ոչ այնքան: Պատմականորեն բարենպաստ դիրք ունեին այն քաղաքները, որոնք գտնվում էին ծովին մոտ կամ որոնք երկու շրջանների սահմանին էին, ինչն այն փոխանակման կենտրոն էր դարձնում: Քաղաքների միջև կապն ապահովվում է առևտրի, քաղաքային շուկայի միջոցով: Քաղաքը առաջին հերթին շուկա է[30]: Եթե շուկան բացակայում է, քաղաքը կորցնում է իր իմաստը: Լինում էին դեպքեր, որ երկու ճանապարհների խաչմերուկում առևտուր էր սկսվում և դրա շուրջ քաղաք էր ստեղծվում: Ամենօրյա քաղաքային շուկաները, դրանց սոցիալական կառուցվածքները, ապահովում էին շրջակա տարածքի մարդկանց առօրյա գործունեությունը: Կազմակերպվող առևտուրը երբեմն տեղի էր ունենում պարիսպների մոտ, ուր առկա էր ոչ միայն գյուղ-քաղաք, այլև քաղաք-քաղաք առևտրափոխանակում: Տարբեր

---

[29] Տե՛ս **Бродель Ф.** (1994). Что такое Франция? Пространство и История. Москва: изд. им. Сабашниковых:

[30] Տե՛ս **Бродель Ф.** (1986). Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв., т.1: Структуры повседневности: возможное и невозможное, Москва, стр. 509-592:

հրապարակներում շուկաներ էին կազմակերպվում ու իրենց շուրջը հավաքում տվյալ տարածքի բնակիչներին՝ անգամ կազմակերպվելով կոնկրետ օրերի:

Բոլոր քաղաքների մյուս բնութագրական գիծն այն է, որ դրանք բոլորը սեփական քաղաքակրթության արդյունք են: Շատ դեպքերում քաղաքները լինում են իրար նման, քանի որ դրանք նման քաղաքակրթությունների արդյունք են, օրինակ՝ մահմեդական են և այդպես հաստատվում է քաղաքների կամ քաղաքակրթությունների միջև կապը: Օրինակ՝ մահմեդական քաղաքներում արգելվում էր բարձրահարկ շենքերը, իրար կողք-կողքի էին շենքերը ու փակում էին փողոցները՝ դարձնելով՝ նեղ: Կենտրոնում ամենամեծ մզկիթն է, շուրջը՝ առևտրական փողոցներ, հետո շրջանով տարբեր արհեստների շարքեր. արտաքին սահմանին մոտ անասնապահներ, իսկ դարպասների մոտ գյուղացիները առևտրով էին զբաղվում: Կարևոր է նաև թաղամասերի բաժանումը ըստ ռասայի և կրոնի պատկանելության: Կային քրիստոնեական և հրեական թաղեր:

Ինչքան պետությունը մեծ է և կազմակերպված, այնքան մեծ է հավանականությունը, որ մայրաքաղաքը բազմամարդ կլինի: Մայրաքաղաքները հսկայական ծախսեր են պահանջում և սովորաբար՝ ի հաշիվ այլ երկրների: Արևմուտքի երկրների մայրաքաղաքները ստեղծեցին այն ազգային շուկաները, առանց որոնց պետությունն անիմաստ կլիներ, վերջիններս առևտրի կենտրոն էին, մշակութային, ինտելեկտուալ և հեղափոխական դեր ունեին:

Այսպիսով՝ քաղաքը իր հետ բերում է գոյություն ունեցող կոնֆիգուրացիաների[31] փոփոխություն, փոխում է գոյություն ունեցող իրերի դրվածքի միջև հարաբերությունների բնույթը: Փոխվում է նաև մարդ-

[31] *Կոնֆիգուրացիա* տերմինը հանդիպում է Ն. Էլիասի մոտ, ով վերջինս սահմանում է որպես *սոցիալական գործընթացի մոդել, որում ընդգրկված են փոխկախված մարդիկ, որում կան իշխանական փոխհարաբերություններ,* տե՛ս *Elias N.* (1994), The Established and the Outsiders, London: Sage:

կանց մասնագիտական կազմը, նոր զբաղմունքներ են ի հայտ գալիս: Այլևս նախկինի պես ազգակիցները չէին ապրում իրար կողք կողքի և նրանց կյանքը կարգավորվում էր սոցիալական ինստիտուտների կողմից:

Քաղաքը երկակի է՝ մի կողմից այն պաշտպանության միջոց էր, մյուս կողմից՝ ագրեսիայի և հարձակման խթան: Դրական է մեծ քանակով մարդկանց համագործակցությունը, լայն հաղորդակցությունները, բարդ մասնագիտական-տեխնիկական կապերը: Բացասական կողմեր են քաղաքային իշխանությունների բացարձակությունը, լեգիտիմ բռնության գործադրումը և այլն[32]:

Քաղաքներին բնորոշ է օրգանական համերաշխությունը, որը, ըստ Է. Դյուրկհայմի, զարգացած հասարակությունների հատկանիշ է: Պրիմիտիվ հասարակություններում՝ հիմնված մեխանիկական համերաշխության վրա, անհատը կլանվում է կոլեկտիվի կողմից, մինչդեռ զարգացած հասարակություններում մարդիկ իրար փոխլրացնում են և առկա է աշխատանքի բաժանման բարձր աստիճան[33]:

Լ. Մամֆորդը փաստում է, որ ներկայիս քաղաքակրթությունը ինքնաոչնչացման տարրեր է պարունակում: Զ. Բաումանը ներկայիս մեգապոլիսները ևս նկարագրում է որպես մշտական հեղափոխություններով լեցուն. հեղափոխությունը դարձել է կենսակերպ և նորմալ երևույթ:

Ըստ Զ. Բաումանի՝ գլոբալիզացիոն գործընթացներին զուգահեռ քաղաքային կյանքի կայունությունը փոխարինվում է երկու սոցիալական խմբերի հակասությունների սրմամբ ոչ այնքան նյութական տեսանկյունից, որքան ինտեգրվածության աստիճանով[34]: Քա-

---

[32] Տե՛ս **Bourdieu P.** (spring, 1989). Social Space and Symbolic Power. *Sociological Theory*, Vol. 7 (1), pp. 14-25:

[33] Տե՛ս **Durkheim E.** (1997). *The Division of Labour in Society.* New York: The Free Press, 1997, pp. 31-179:

[34] Տե՛ս **Бауман З.** (2008). *Город страхов и город надежд*. Логос, N 3 (66):

ղաքի բնակիչները հիմա ոչ թե բաժանվում են աղքատների և հարուստների, այլ՝ նրանց, ովքեր ներառված են կամ ներառված չեն քաղաքային հաղորդակցային գործընթացներում: Սա հանգեցնում է գլոբալ աշխարհում լոկալ տեղերի և ինքնությունների կարևորության գիտակցմանը: Ներկայումս քաղաքները վայրեր են, սոցիալական տարածություններ, ուր իրար կողքի համակեցության տիրույթում երկարաժամկետ փոխհարաբերվում են մարդիկ՝ շարունակելով մնալ անծանոթներ[35]:

Այդուհանդերձ, ողջ պատմության ընթացքում քաղաքները եղել են անընդհատական փոփոխությունների կենտրոններ և քաղաքներում են ծնունդ առել այն փոփոխությունները, որոնք հետագայում փոխել են հասարակություն և, ըստ էության, քաղաքակրթությունը: Ինչպես կանխատեսում էր Լ. Մամֆորդը.

> *«պատմության ընթացքում մենք շարժվում էինք քաղաքից, որը աշխարհ էր, դեպի մի աշխարհ, որը քաղաքն է»*[36]*:*

---

[35] Տե՛ս **Бауман З.** (2008). *Город страхов и город надежд*. Логос, N 3 (66):
[36] Նույն տեղում, էջ 35:

ԳԼՈՒԽ 2.
ՔԱՂԱՔԸ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՍԻՄՎՈԼԻԿ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարածության ընկալումներն ու մեկնաբանումները կրել են բազմաթիվ փոփոխություններ տարբեր ժամանակաշրջաններում. եթե նախկինում տարածությունը զուտ աշխարհագրորեն էր ընկալվում, ապա ժամանակի ընթացքում այն սկսեց մեկնաբանվել նաև որպես աբստրակտ տարածություն՝ ձեռք բերելով սոցիալական իմաստներ[37]: Արդյունքում հնարավոր դարձավ խոսել քաղաքային տարածության մասին որպես միաժամանակ ֆիզիկական, սոցիալական և սիմվոլիկ տարածություն:

Տարածության սոցիոլոգիական առաջին հայեցակարգերը վերագրվում են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի սոցիոլոգներին՝ Գ. Զիմել, Մ. Վեբեր, Ջ. Հ. Միդ և ուրիշներ: Հետագայում հայեցակարգերը ընդլայնվեցին՝ ընդգրկելով ֆիզիկական և սոցիալական տարածության ասպեկտները: Անդրադառնանք տարածության մեկնաբանումներին և տիպաբանումներին՝ տրված տարբեր հեղինակների կողմից և քաղաքի՝ որպես ֆիզիկական, սոցիալական և սիմվոլիկ տարածություն դիտարկումների փոխառնչություններին:

Գերմանացի սոցիոլոգ Գեորգ Զիմելը իր «Մեծ քաղաքը և մտային կյանքը» աշխատությունում նշում է, որ անհատն իր մարմնի սահմաններից դուրս չի գտնվում. այդ սահմանը նա անմիջականորեն լրացնում է իր գործողություններով: «Տարածություն» հասկացությունը մեկնաբանելիս Գ. Զիմելը այն ներկայացնում է որպես հարաբերությունների, հայացքների փոխանակման լոկալիզացման վայր, նոր սոցիալական կապերի բյուրեղացման կենտրոն: Նա նշում է, որ

[37] **Lefebvre H.** (1991). *The Production of Space*. Oxford: Blackwell, p. 7.

ի սկզբանե քաղաքում չի եղել միասնական քաղաքային տարածություն, սակայն կարողացել են գոյակցել տարբեր համայնքներ: Հենց նրանց տարածական-սիմվոլիկ շփումն է բերել քաղաքային համընդհանուր տարածության ձևավորմանը: Եթե մարդկանց միջև չկա փոխազդեցություն, ապա նրանց միջև տարածությունն «*այլ կերպ ասած՝ ոչինչ է*»[38]:

Տարածությունները, ըստ Գ. Զիմելի, «պտուտային կետեր» են. քաղաքացին «պտտվում է տարբեր շրջանակներում»՝ շփման մեջ մտնելով տարբեր սոցիալ-մշակութային աշխարհների հետ: Ընդհանուր տարածության առկայությունը նշանակում է, որ բախվել են այնպիսի տարրեր, որոնք նախկինում անկախ էին: Տարածությունը տարատեսակ հոգևոր տարրերի՝ հայացքների, արժեքների, մտքերի միավորման վայր է.

> «*Քաղաքը բառի բուն իմաստով գնդակոծում է անհատին հուրերի, ձայների, նշանների իր բազմազանությամբ*»[39]:

Քաղաքը ֆիզիկական տարածության տեսանկյունից դիտարկելիս՝ Գ. Զիմելը առանձնացնում է դրան բնորոշ երկու կերպար՝ *քաղաքը՝ որպես շուկա և քաղաքը՝ որպես ջունգլի*[40]: Քաղաքը որպես շուկա այն վայրն է, որի բազմաբնույթ գծերը յուրաքանչյուրին թույլ են տալիս գտնել մարդկային փոխազդեցությունների սեփական «սարդոստայնը»: Մարդը, ծնվելով որպես որևէ սոցիալական շերտի ներկայացուցիչ, ժամանակի ընթացքում ընդլայնում է այն այլ սոցիալական շերտեր ներգրավվելու հնարավորությունները՝ ընտանեկան, մասնագիտական և այլն: Դրա հետ մեկտեղ քաղաքն այն վայրն է, որտեղ պայքար է գնում գոյատևման համար, որտեղ մարդը

---

[38] Simmel G. & Wolff K.H. (1950). The Metropolis and Mental Life. *The Sociology of Georg Simmel.* Glencoe, Ill.: Free Press, p. 409.
[39] Նույն տեղում, էջ 420:
[40] Տե՛ս նույն տեղում:

ստիպված է գործ ունենալ ոչ միայն նրանց հետ, ում ծանոթ է, այլև անծանոթների հետ:

Ըստ Գ. Զիմելի՝ անհատի և նրան շրջապատող միջավայրի միջև փոխհարաբերություններում առաջին տեղում քաղաքի ազդեցությունն է.

> *«Մի կողմից քաղաքային կյանքը ընդլայնում է անհատի ազատությունը, իսկ մյուս կողմից, մարդիկ կարիք ունեն պաշտպանվելու անընդհատ սպառնացող «մեգապոլիսից», որի բնակիչները հետզհետե դառնում են փակ, անտարբեր, հաշվենկատ»*[41]:

Ըստ Մ. Վեբերի՝ տարածությունը դիտարկվում է որպես սոցիալական խմբերի լոկալացման կամ հատուկ սոցիալական գործողությունների վայր[42]: Նրա աշխատությունում հանդիպում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «տեղ», «տարածություն», «հեռավորություն», «լոկալիզացիա»: Օրինակ, «տեղը» նա մեկնաբանում է որպես «մի վայր, որտեղ կա շուկա» կամ «բնակության վայր»[43]: Ըստ նրա այն, որպես առանձին երևույթ, ոչինչ չի նշանակում, բացի աշխարհագրական վայրից: Այն սոցիալական է, քանի որ հայտնի է սոցիալական գործողությունների և գտնվելու վայրի միջև կապով: Մ. Վեբերը կարևոր ներդրում ունի սոցիալական տարածության տեսության զարգացման գործում: Նա ուշադրությունը կենտրոնացրել է այն գործողությունները նկարագրելու վրա, որոնք տեղի են ունենում որոշակի տարածական սահմաններում՝ մասնավորապես քաղաքում:

---

[41] Simmel G. & Wolff K.H. (1950). The Metropolis and Mental Life. *The Sociology of Georg Simmel.* Glencoe, Ill.: Free Press, p. 410:

[42] **Вебер М.** (1994). *Город. Избранное.* Образ общества. М.: Юристъ, ст. 704.

[43] Նույն տեղում, էջ 10:

Սիմվոլիկ ինտերակցիոնիզմի հիմնադիր Ջորջ Հերբերտ Միդը կարևորում է քաղաքի դերը անհատի և նրան շրջապատող միջավայրի միջև փոխհարաբերությունները դիտարկելիս: Նա նշում է, որ մարդուն շրջապատող կառույցները ոչ միայն ֆունկցիոնալ օբյեկտներ են, այլև սիմվոլներ, որոնք կարող են հանդես գալ որպես հասարակական հաղորդակցությունը ապահովող միջոցներից մեկը:

Սիմվոլիկ ինտերակցիոնիզմի մեկ այլ ներկայացուցիչ՝ Իրվինգ Գոֆմանը ևս դիտարկում է անհատի և նրան շրջապատող միջավայրի միջև փոխկապվածությունը: Հեղինակը նշում է, որ «տպավորությունների կառավարումը» (մարդկանց փորձը տպավորություն թողնել շրջապատի վրա) ազդվում է տարբեր արհեստածին օբյեկտներից և տարածություններից, որոնք նպաստում են հանրության հետ «սոցիալական հեռավորության» ստեղծմանը[44]:

Ամերիկացի ուրբանիստ Քևին Լինչի տեսության համաձայն՝ մարդու հաջող կենսագործունեությունը քաղաքի ֆիզիկական տարածությունում, մեծ հաշվով պայմանավորված է վերջինիս վերաբերյալ մտային պատկերացումներով: Ք. Լինչի «Քաղաքի կերպարը» աշխատությունն ուղղված է քաղաքային միջավայրի «ընթեռնելիության» վերծանմանը, որի ներքո հասկացվում է «դյուրինություն, որով քաղաքի տարբեր մասեր ճանաչվում են և դասակարգվում մտային պատկերներում»[45]: Ընթեռնելիությունը կախված է օբյեկտների պատկերայնությունից, որն էլ իր հերթին կազմված է երեք բաղադրիչներից՝ *օբյեկտների կառուցվածք* (տարրերի փոխկապվածություն, ունակություն դրանք միավորել/կապել մեկը մյուսի հետ); *ճանաչելիություն* (ունակությունը տարբերակել տվյալ տարրը մյուսնե-

[44] **Goffman E.** (1959). *The Presentation of Self in Everyday Life*. USA, New York: Gader City, p. 45.
[45] **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press, p. 71.

ից); *նշանակալիություն/արժեք* (մարդկանց կողմից տվյալ օբյեկտի վերաբերյալ սուբյեկտիվ իմաստավորում):

Տարածության իր մեկնաբանումն է առաջարկում նաև Միշել Ֆուկոն, ով իր «Այլ վայրեր» աշխատության մեջ քննարկում է հետերոտոպիայի գաղափարը, որը սահմանելու համար հեղինակն այն հարաբերակցության մեջ է դնում ուտոպիա հասկացության հետ: Ուտոպիան, ըստ Մ. Ֆուկոյի, երևակայելի տարածությունն է, իսկ հետերոտոպիան՝ իրական տարածությունն է, որը նշանակալի է ամենատարբեր առօրյա պրակտիկաների համար: Վերջինս յուրահատուկ տարածաժամանակային միավոր է, որը կապված է սուբյեկտիվության վերլուծության հետ: Այն կարող է կուտակել ժամանակը, կամ չեղյալ համարել այն[46]:

Սոցիալական աշխարհագրագետ Բենո Վերլենը տարածությունը դիտարկում է որպես գործողությունների կոորդինացման համակարգ: Գործողությունը որպես դասակարգման միջոց իրենից ներկայացնում է տարածական երևույթների իմաստավորման գործընթաց: Ինքնին տարածությունը ձեռք է բերում «*սոցիալական իմաստ, և շատ կարևոր է, երբ այն անցնում է կոորդինատների համակարգերով, որոնք կողմնորոշված են դեպի անհատների վարքը*»[47]: Սոցիալական աշխարհագրության ուղղության ներկայացուցիչներն, ընդհանուր առմամբ, «տարածություն»-ը մեկնաբանում են «տեղ»-ի հետ համեմատության միջոցով.

«*Տարածությունը, ի տարբերություն տեղի, աբստրակտ երևույթ է, այն սկզբունքորեն հասանե-*

---

[46] **Foucault M.** (October,1984). *Of Other Spaces: Utopias and Heterotopias.* Architecture /Mouvement/ Continuité, p. 2.

[47] **Верлен Б.** (2001). *Общество, действие и пространство: альтернативная социальная география*. Социологическое обозрение, ст. 32.

լի չէ փորձի միջոցով ֆեռքբերմանը, մինչդեռ տեղը կապված է մարդու փորձի հետ»[48]:

Տեղը ընկալվում է որպես «գործողության վայր», որը մնում է անհատի ներսում նույնիսկ, երբ նա այդտեղ չի գտնվում:

Ֆրանսիացի սոցիոլոգ Անրի Լեֆեվրը քաղաքային տարածության մասին խոսելիս պնդում է, որ ցանկացած քաղաքաբնակ ընկալում է քաղաքի ոչ թե առանձին մասերը՝ շենքերը, փողոցները, հուշարձանները, այլ տարածությունն ամբողջությամբ և այստեղ հեղինակն իր ուշադրությունը կենտրոնացնում է տարածության մեջ մարդկանց վարքին: Ըստ Ա. Լեֆեվրի՝ սոցիալական տարածության մեջ տեղի է ունենում հարաբերությունների արտադրություն և վերարտադրություն: Նա տարածության սոցիալական արտադրությունը տեսնում է 3 գործոնների միջև դիալեկտիկական փոխազդեցության մեջ.

- *Տարածական պրակտիկա,* որն արտադրվում է ամենօրյա կյանքում:
- *Տարածության ներկայացում,* որը զարգանում է մտային կերպով:
- *Ներկայացման տարածություն,* որը սիմվոլի և գաղափարական տարածության ամբողջություն է[49]:

Ա. Լեֆեվրն ասում է, որ սոցիալական տարածությունը սոցիալական ապրանք է կամ սոցիալական կառուցվածքների ամբողջություն (հիմնված արժեքների և իմաստների սոցիալական վերարտադրության վրա), որն ազդում է սոցիալական պրակտիկաների և ընկալումների վրա: Նա բացատրում է, թե ինչ է իրենից ներկայացնում տարածությունն իր «Տարածության արտադրություն» աշխա-

---

[48] **Степанцов П., Безруков В.** (2008). *Проблема Места и Я (Self) в социальной географии и философии*. Социологическое обозрение. Том 7. № 3, ст. 44.
[49] Lefebvre H. (2007). *The Production of Space*. Oxford: Blackwell, p. 71.

տության մեջ և գտնում, որ գոյություն ունի տարածական գոյության 3 ասպեկտ՝

1. *Առաջին տարածություն, որը ֆիզիկական տարածությունն է:*
2. *Երկրորդ տարածություն, որը մտային/պայմանական տարածությունն է: Սա մեր մտածողության և գաղափարների արդյունք է:*
3. *Երրորդ տարածություն, որը սոցիալական տարածությունն է: Ըստ հեղինակի՝ սա այն տարածությունն է, որտեղ մենք ապրում ենք սիմվոլներով և պատկերների մեջ*[50]*:*

Ֆիզիկական և սոցիալական տարածությունների փոխառնչության վերաբերյալ ֆրանսիացի սոցիոլոգ Պիեռ Բուրդյեի մոտեցումը ներկայացնում է սոցիալական տարածությունը որպես սոցիալական դիրքի մատնանշում, իսկ ֆիզիկական տարածությունը՝ օբյեկտի լոկալիզացիա[51]: Ըստ նրա՝ մարդիկ գործում են միաժամանակ որպես կենսաբանական անհատներ և սոցիալական ագենտներ, որոնք ճանաչելի են ֆիզիկական և սոցիալական տարածության հետ որոշակի հարաբերության միջոցով: Եթե անհատի զբաղեցրած տեղը մեկն է՝ ֆիզիկական տարածությունը, ապա սոցիալական տարածությունը որոշվում է դիրքերի փոխբացառման հիմքով:

Սոցիալական տարածությունը աբստրակտ է՝ կառուցակցված դաշտերի (դիրքերի ամբողջություն, որում տվյալ վարքը պատճառական է համարվում, քանի որ յուրաքանչյուր դաշտ ունի իր օբյեկտիվ իրականությունը, ագենտները, ինստիտուտները և ներքին տրամաբանությունը՝ խաղի կանոնները) միջոցով, որի կառուցվածքը կախված է կապիտալի ձևերի ոչ հավասարաչափ բաշխումից[52]: Որևէ տարածությունում սոցիալական ագենտի գերիշխելը նշանակում է

---

[50] Lefebvre H. (2007). *The Production of Space*. Oxford: Blackwell, p. 169.
[51] Տե՛ս **Бурдье П.** (1994). *Начала*. Москва: Издательство "Socio-Logos", ст. 181-208:
[52] Տե՛ս **Бурдье П.** (2007). *Социология социального пространства*. Москва: Институт экспериментальной социологии; СПб.: Алетейя, ст. 49-64:

տիրապետել համապատասխան կապիտալի ձևերին, որոնց հասանելիությունը սակայն այդքան էլ հեշտ չէ և անընդհատ սոցիալական պայքար է մղվում դրանք ձեռք բերելու համար[53]: Սոցիալական ագենտները սոցիալական տարածությունում որոշակի դիրքեր են զբաղեցնում, որոնք կարող են որոշվել այլ տեղերից իրենց հեռավորության և նրանց հետ ունեցած հարաբերությունների տեսանկյունից:

Սոցիալական տարածության կառուցվածքը կարող է դրսևորվել նաև հակադրությունների ներկայացման միջոցով: Պ. Բուրդյեն որպես օրինակ ներկայացնում է Փարիզի քաղաքային տարածությունը Սենա գետի «աջ ափ»-ի և «ձախ ափ»-ի հակադրության միջոցով, որոնք այս պարագայում գործառնում են որպես ընկալման և գնահատման կատեգորիաներ[54]: Սոցիալական տարածությունը սիմվոլիկ իմաստով թույլ է տալիս գտնել օբյեկտի լոկալիզացիան տարածական սխեմաներում:

Քաղաքը՝ որպես ֆիզիկական տարածություն դիտարկելիս Ֆ. Բրոդելը նշում է, որ յուրաքանչյուր քաղաք, կառուցվելով և գտնվելով կոնկրետ տեղում, ձեռք է բերում դրական և բացասական կողմեր: Քաղաքները կապված են այն տեղին, որտեղ առաջացել են, որից ազատվելն անհնարին է[55]: Սա որպես առավելություն է դիտվում այն քաղաքների համար, որոնց դիրքավորումը բարենպաստ է և որպես թերություն՝ հակառակ պարագայում: Նա որպես օրինակ ներկայացնում է քաղաքների բարենպաստ լինելու չափանիշներ. դրանց շարքում են ծովին մոտ գտնվելը և շրջանների սահմանին լինելը, որը դարձնում է քաղաքը փոխանակման կենտրոն: Քաղաքի դիրքավոր-

---

[53] **Бурдье П.** (2007). *Социология социального пространства*. Москва: Институт экспериментальной социологии; СПб.: Алетейя, ст.88:

[54] Նույն տեղում, էջ 51:

[55] Տե՛ս **Бродель Ф.** (1994). *Что такое Франция? Пространство и История.* Москва: изд. им. Сабашниковых:

ման ի սկզբանե տրված լինելն է ընկած Ֆ. Բրոդելի կողմից ֆիզիկական տարածության կարևորման հիմքում:

Ֆիզիկական տարածությունում է իրականացվում սիմվոլիկ բըռնություն: Քաղաքի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքիր է այն, որ ճարտարապետական տարածությունը, ըստ Պ. Բուրդյեի և Մ. Ֆուկոյի, սիմվոլիկ իշխանության կարևոր բաղադրատարրերից է[56]:

Սոցիալական և ֆիզիկական տարածությունները փոխկապված են. առաջինը նշանակում և փոփոխում է երկրորդը իր ներսում ունեցած տարբերակման գործընթացների, օրինակ՝ մեկնաբանման միջոցով: Այսպես փոխվում է քաղաքի դեմքը, բաշխվում են թաղամասերը և տարբեր խմբերի բնակության վայրերը, նույն կերպ սոցիալական տարածությունում միավորվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ բնութագրիչները[57]:

Տեսականորեն կարելի է համեմատել սոցիալական և ֆիզիկական տարածությունները: Իրականում այս երկուսը չեն համընկնում, չնայած, ըստ Պ. Բուրդյեի, մարդիկ, ովքեր նույն սոցիալական տարածությունում են, միտված են աշխարհագրորեն ևս իրար մոտ լինել[58]: Սոցիալական տարածությունը այնպես է կառուցվածքայնացված, որ սոցիալական ագենտները, ովքեր հարևան դիրք են զբաղեցնում, ենթարկվում են ընդհանուր պայմաններին, ինչպես նաև կարող են ունենալ ընդհանուր դիսպոզիցիաներ, արտադրել ընդհանուր պրակտիկաներ: Աշխարհընկալումն առհասարակ տարբերվում է՝ կախված ագենտի սոցիալական տարածությունում զբաղեցրած դիր-

---

[56] Տե՛ս **Bourdieu P.** (spring, 1989). *Social Space and Symbolic Power.* Sociological Theory, Vol. 7 (1), pp. 14-25:

[57] **Бурдье П.** (2007). *Социология социального пространства*. Москва: Институт экспериментальной социологии; СПб.: Алетейя, ст. 49.

[58] Տե՛ս **Bourdieu P.** (spring, 1989). *Social Space and Symbolic Power.* Sociological Theory, Vol. 7 (1), pp. 14-25:

քից և հաբիտուսից: Հաբիտուսը արտադրում է պրակտիկաներ, որոնք ընկալվում են այն ագենտների կողմից, ովքեր տիրապետում են այդ հաբիտուսի կողին, որն անհրաժեշտ է սոցիալական իմաստը հասկանալու համար: Հաբիտուսը, այս դեպքում, հանդես է գալիս որպես դասակարգման սխեմա: Իրականությունը դառնում է մեկնաբանելի, քանի որ սոցիալական տարածությունը ագենտների համախումբ է, ովքեր ունեն փոխկապված հատկություններ, որոնք գործառնում են որպես նշաններ: Այդ հատկությունների բաշխման արդյունքում սոցիալական աշխարհը օբյեկտիվորեն ներկայացվում է որպես սիմվոլիկ համակարգ՝ կյանքի ոճերի և ստատուսային խմբերի տարածություն: Այսպիսով՝ սոցիալական տարածությունը ձգտում է իրացվել ֆիզիկական տարածությունում: Ֆիզիկական տարածությունը սոցիալական տարածության պրոեկցիան է, սոցիալական կառուցվածքն է օբյեկտիվացված վիճակում[59]:

Այսպիսով, քաղաքի ուսումնասիրությունը որպես ֆիզիկական, սոցիալական և/կամ սիմվոլիկ տարածություն կախված է հետազոտության դիտանկյունից: Այդուհանդերձ տարանջատումը միանշանակ չէ. մասնավորապես, հիմք ընդունելով Պ. Բուրդյեի կոնստրուկտիվիստական ստրուկտուրալիզմի հայեցակարգը՝ կարող ենք նկատել քաղաքի՝ տարածության այս երեք տարատեսակներով մեկնաբանման համատեղելիությունը: Ըստ հեղինակի՝ քաղաքը որպես ֆիզիկական տարածություն, օբյեկտիվորեն գոյություն ունի՝ անկախ նրա օբյեկտների իմաստավորումից: Միևնույն ժամանակ այն դառնում է օրինաչափ, ինչպես և ցանկացած սոցիալական երևույթ (ինքնին տարածությունը այս դեպքում սոցիալական երևույթ է) միայն այն դեպքում, երբ անհատական գործողությունների և սոցիալական համաձայնության միջոցով իմաստ է ձեռք բերում: Այսպիսով՝ մտա-

[59] Տե՛ս **Бурдье П.** (1994). *Начала*. Москва: Издательство "Socio-Logos", ст. 181-208:

վոր ջանքերի միջոցով ֆիզիկական տարածությունը ձեռք է բերում սոցիալապես նշանակալի իր «երկվորյակին» (սոցիալական տարածություն)՝ լի իմաստային բովանդակությամբ, որը չի կորցնում որոշակի տարածական բաշխման լոկալիզացիայի գաղափարը. *«Ժամանակակից մարդը ընկալում/ըմբռնում է տարածությունը՝ կողավորելով այն»*[60]: Արդյունքում քաղաքը չի դիտարկվում որպես զուտ ֆիզիկական տարածություն, այլ սոցիալական և սիմվոլիկ տարածությունների համադրություն: Ընդ որում, քաղաքի ֆիզիկական տարածության սիմվոլիկ որակը փոփոխվում է՝ կախված նրանից, թե քաղաքային տարածության երկու հիմնական տիպերից որի հետ ենք առնչվում՝ ***հանրային տարածության, թե՞ բնակտարածության:*** Չնայած քաղաքային տարածության բազմազանությանը, քաղաքի լոկալ իմաստավորումը հիմնականում հնարավոր է հանրային տարածության և բնակտարածության մեջ տեղի ունեցող պրակտիկաների միջոցով:

Հանրային տարածություն

Հանրային տարածությունը սոցիոլոգիայում ուսումնասիրվում է հասանելիության և մոբիլության տեսանկյունից: Այս իմաստով, հանրային տարածությունը սահմանվում է որպես *«հանրայնորեն մատչելի վայրեր, ուր մարդիկ այցելում են իմբային կամ անհատական գործունեության համար»*[61]: Ֆիզիկական հարթության մեջ հանրային տարածությունը քաղաքային «կմախքի» այն բոլոր մասերն են, որտեղ հանրությունն ունի ֆիզիկական և վիզուալ մուտքի հնարավո-

---

[60] **Глазков К.** (2013). *Экскурсия по городу: ментальные карты как инструмент изучения образа города, Мониторинг общественного мнения: экономические и социальные перемены*. Выпуск № 5 (117), ст. 4.

[61] Տե՛ս **Tonnelat S.** (2010).*The sociology of urban public spaces.* In WANG Hongyang, SAVY Michel and ZHAI Guofang (eds.), Territorial Evolution and Planning Solution: Experiences from China and France, Paris, Atlantis Press:

րություն. հանրային տարածություն հասկացությունն օգտագործվում է *տարածության մեջ մուտք ունենալու և օգտագործման տեսանկյունից, այլ ոչ սեփականության*: Հետևաբար, մասնավոր տարածքները, որոնք հասանելի են հանրությանը, որակվում են որպես հանրային տարածքներ և, նմանապես, այն հանրային տարածքները, որոնք հասանելի չեն հանրությանը չեն որակվում որպես հանրային: Այսպիսով, հանրային են այն տարածքները, որոնք բաց են հանրության մեծամասնության համար և ենթակա են այն սոցիալական կանոնակարգին, որ կառավարում է տարածության օգտագործումը:

Հանրային տարածության դերերի մասին խոսելիս, ինչպես Լ. Լոֆլանդը նշում է. *«Այդ դերերից շատերը արդի ժամանակներում այլևս ֆունկցիոնալ չեն»* [62]*:* Ավելին, արդի ժամանակներում հանրային տարածության դերերը նույնացվում են ժամանակակից սեփականաշնորհված (պրիվատիզացված) հասարակությունների դերի հետ: Հետզհետե աճող հավատ կա առ այն, որ ժամանակակից քաղաքային հասարակությունները, իրենց հիմնական պահանջմունքներով, այլևս կախված չեն քաղաքային հրապարակներից կամ շուկաներից, սակայն լավ քաղաքային հանրային տարածության առկայությունը կարևոր է ժամանակակից հասարակության սոցիալական և հոգեբանական առողջության համար: Բացի այդ հանրային տարածությունը մարդուն հասարակությանը պատկանելու զգացում է տալիս:

Մ. Թոմասը հանրային տարածության դերի մասին խոսելիս նշում է, որ հանրային տարածությունը կարևոր արենա է, որը հնարավորություն է տալիս անհատներին և համայնքներին մշակել և զարգացնել իրենց կյանքն ու կենսակերպը: Նա առանձնացնում է հանրային տարածության 4 դեր՝

---

[62] **Lofland L.** (1973). *A World of Strangers: Order and action in urban public space*. New York: Basic Books. 1973, p. 42.

1. *Որպես հանրային կյանքի ասպարեզ:*
2. *Որպես տարբեր խմբերի հանդիպման վայր:*
3. *Որպես հասարակության տարբեր սիմվոլների և պատկերների ցուցադրման տարածություն:*
4. *Որպես քաղաքային ակտիվությունների միջև կոմունիկացիոն համակարգի մաս*[63]*:*

Մ. Վալզերը պնդում է. հանրային տարածությունը

> *«այն տարածությունն է, որը մենք կիսում ենք անծանոթների հետ, այն մարդկանց հետ, ովքեր մեր հարազատները, ընկերները կամ աշխատակիցները չեն»*[64]*:*

Իսկ Վ. Ուայթը նկարագրում է հանրային տարածությունները որպես նորությունների և բամբասանքների, նոր գաղափարների ստեղծման վայր: Համաձայն եվրոպական քաղաքներում իրականացրած հետազոտությունների «լավ» հանրային տարածությունը ապահովում է հեշտ և անվտանգ մուտք բոլորի համար, նպաստում տարբեր գործունեությունների իրականացմանը, ինքնագնահատականի և պատկանելիության զգացումին, շրջապատող միջավայրի վերաբերյալ հետաքրքրության և իրազեկվածության բարձրացմանը, և ապահովում հաճույքի զգացումը և սոցիալական կապերը[65]:

Հանրային տարածությունների տարբեր տեսակներ կարելի է առանձնացնել՝ ելնելով դրանց կողմից մարդկանց հիմնական պահանջմունքների և պասիվ/ակտիվ գործունեությունների (հարմարավետություն, հանգիստ, պասիվ և ակտիվ ներգրավվածություն) բավարարման աստիճանից: Հանրային տարածության վերաբերյալ

---

[63] **Thomas M.** (1991). *The Demise of Public Space*. Town Planning Responses to City Change, Avenbury: Aldershot, p. 222.
[64] **Walzer M.** (1986). *Pleasures and cost of urbanity*. Dissent, 33 (4), p. 470.
[65] **Whyte W.** (1988). *City: Rediscovering the Center.* New York: Doubleday, p. 69.

գրականության մեջ հաճախ չեն առանձնացնում փակ և բաց հանրային տարածություններ, քանի որ ընդունված է համարել, որ հանրային տարածությունները բաց են: Պատմականորեն բաց հանրային տարածությունները մեծամասնություն են կազմել, ուր տեղի է ունենում քաղաքի հանրային կյանքը[66]: Որպես հակադրություն, ներկա ժամանակներում, փակ հանրային տարածությունները հաճախ հանրային կյանքի կիսասեփականաշնորհված ձևերն են: Այնուամենայնիվ, այժմ, ըստ Վ. Մեհթայի, վերածնված հետաքրքրություն կա հանրային տարածության ավանդական տիպաբանման վերաբերյալ, որի պարագայում բաց հանրային տարածությունը չի հասկացվում որպես շենքերի միջև ընկած տարածություն, այլև դրանում առկա օբյեկտներն ու արտեֆակտները, և այն շենքերը, որոնք օգնում են սահմանել տարածությունների ֆիզիկական սահմանները: Հետևաբար, բաց հանրային տարածությունը ավելին է, քան ուղղակի փողոցի կամ հրապարակի արտաքին բաց տարածությունը: Անդրադառնալով հանրային տարածության իրականացրած գործառույթներին՝ Վ. Մեհթան դրանք դասակարգում է հետևյալ կերպ՝

- *սոցիալական իրազեկվածության խթանում,*
- *փեղեկատվության փոխանակում,*
- *սոցիալական երկխոսություն,*
- *սոցիալական ինտեգրատիվ գործառույթների ընդլայնում,*
- *բարոյական վարքագծի խրախուսում*[67]*:*

Ընդհանրացնելով, կարելի է առանձնացնել հանրային տարածության հիմնական տարատեսակները՝ ***փողոցներ, առևտրային***

---

[66] **Mehta V.** (2013). *The Street: A Quintessential Social Public Space*. London & New York: Routledge, p. 101.

[67] **Mehta V.** (2006). *Lively streets: Exploring the relationship between built environment and social behavior*. University of Meryland (College Park , MD), p. 12.

կենտրոններ, սրճարաններ և հրապարակներ, կանգառներ, այգիներ[68]:

Առևտրային կենտրոնները՝ որպես հանրային տարածություն, առաջ են բերում մատչելիության խնդիր և օգնում ուսումնասիրել հանրային տարածության սահմանները, որոնք կառավարվում են մասնավոր սեփականատերերի կողմից: Սրանք, չնայած ունեն վերահսկողության համակարգ և սեփականատեր, բաց մուտքի հնարավորություն են ընձեռում բոլորին՝ առանց բացառության:

Ըստ Ի. Գոֆմանի հանրային տարածությունն անանուն/անդեմ անձանոթների միջև չֆիքսված ինտերակցիաների տարածություն է: Գլխավոր կանոնը մեկն է. «քաղաքացիական անուշադրություն»[69], որն օգնում է մարդկանց ցուցադրել իրենց ներկայությունը և զբաղվել իրենց գործերով: Անուշադրությունն ամբողջական անտարբերություն չէ. այն ինտերակցիաների ավելի մեղմ ձև է: Իսկապես, անձանոթները պետք է համագործակցեն, որպեսզի կարողանան քայլել և, օրինակ, չբախվել մեկը մյուսին: Սա այն է, ինչը Լ. Լոֆլանդը անվանեց «միասնական շարժունակություն»[70], իսկ Էմ. Դյուրկհայմը՝ «սոցիալական համագոյություն»[71]: Այստեղ նաև կարելի է խոսել «հանդիսատեսի դերի» մասին, երբ մարդիկ հանդես են գալիս որպես քաղաքային տեսարանի հանդիսատես՝ այն լցնելով հանրամատչելի պայմաններով, որոնք անհրաժեշտ են հանրային տարածությանը:

---

[68] Տե՛ս Tonnelat S. (2010).*The sociology of urban public spaces.* In WANG Hongyang, SAVY Michel and ZHAI Guofang (eds.), Territorial Evolution and Planning Solution: Experiences from China and France, Paris: Atlantis Press.

[69] Goffman E. (1959). *The Presentation of Self in Everyday Life*. USA, New York, p. 40.

[70] Lofland L. (1973). *A World of Strangers: Order and action in urban public space.* New York: Basic Books, p. 39.

[71] Տե՛ս Դյուրկհայմ Է. (2006). *Սոցիոլոգիական մեթոդի կանոնները.* Երևան: Սարգիս Խաչենց, էջ 1-30:

Ըստ այս չափանիշի կանգառները և կոմերցիոն կենտրոնների ցուցահանդեսները ստեղծում են հանրային տարածություններ:

Կանգառների/կայարանների միջոցով կարելի է ուսումնասիրել շարժունության և հանրային տարածության միջև կապը: Տրանսպորտի հանրային տարածքները շատ կարևոր գործոն են քաղաքի ձևի (ֆորմա) և դրա սոցիալական կարգի համակարգման համար: Քաղաքի ձևի և զարգացման հետ կապված՝ գնացքը և մետրոն կարևորագույն միջոցներ են: Դրանք բերում են մեծամասշտաբ կոմերցիոն սպառման, որով և հանգում են փողոցների առաջացման խնդրին: Թվում է, թե, եթե խոսում ենք հասանելիության մասին, ապա դա նշանակում է՝ իրականում տարածքը բաց է բոլորի համար: Վերջերս կայարանները և դրանց անմիջական միջավայրը ստացել են նոր նշանակություն՝ որպես հասանելիության առումով ամենադժվարամատչելի տարածքներ: Հասանելիությունը կախված է ոչ միայն նյութական պայմաններից, այլև վայրերի սիմվոլիկ արժեքից և ֆիզիկական դիրքից: Շատ երկրներում մետրոների կանգառները հանրության համար կազմակերպվող ցուցահանդեսների, հանրության շրջանում որևէ թեմայով երկխոսություն խթանելու, կամ հանրային ներկայացումների վայրեր են: Նման փորձ արվում է նաև Երևանի մետրոյի կանգառներում, ուր պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ:

Դիզայնը, ծառայություններն և անվտանգությունը կայարանի բաղադրիչներն են, որոնք գտնվում են պետական պատասխանատվության տակ: Որոշ գիտնականներ ավելի հեռուն են գնացել հանրային տարածությունը համեմատելով «քաղաքի իրավունքի հետ»: Այս արտահայտությունը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել ֆրանսիացի փիլիսոփա Հ. Լեֆեվրը կողմ էր քաղաքացիների վերահսկողության գաղափարին՝ համարելով, որ հնարավոր է ապա-

հովել նրանց առօրյա հանրային անվտանգությունը[72]: Սա առավել քան արդիական է դառնում այսօր՝ ահաբեկչության վտանգի, սիմվոլիկ սպառման ահագնացող ընթացքի և, հետևաբար, անվտանգության ապահովման տեսանկյունից:

Սրճարանները և հրապարակները լուսաբանում են կոմունիկացիայի երկու սպեցիֆիկ ձևեր՝ *երկխոսություն և ցուցադրություն,* որը կապում է հանրային տարածության քաղաքական և փիլիսոփայական ասպեկտները պլանավորման ոլորտի հետ: Սրճարանները և հրապարակները լավագույնն են իրականացնում հանրային տարածության մեջ ներքաղաքային հաղորդակցման գործառույթը. սրճարանները հաճախ դիտարկելի են որպես հանդիպման, զրուցելու և բանավեճերի, իսկ հրապարակները՝ քաղաքական վեճերի, ցույցերի վայրեր:

Սրճարանը այն վայրն է, որտեղ տեղի է ունենում աշխատավայրից և տնից հեռու սոցիալականացումը: Այն ներկայացնում է վայր, որը ըստ Ռ. Օլդենբուրգի բնորոշելի է որպես «երրորդ կարգի տարածություն»[73], որտեղ մարդիկ կարող են լինել ծանոթ միջավայրում՝ միաժամանակ մնալով ազատ համայնքի սոցիալական վերահսկողությունից: Վերջերս, քաղաքային պլանավորման մեջ սրճարանները և ռեստորանները արժևորվում են որպես հանրային տարածությունների ակտիվ օղակներ: Սրճարաններն այն վայրերն են, որտեղ հնարավոր է խոսել մասնավոր և հանրային հարցերի շուրջ: Որպես քննարկումների վայր, սրճարանները կարգավորվում են «հրապա-

[72] Lefebvre H. (2007). *The Production of Space*. Oxford: Blackwell, p. 57.
[73] Oldenburg R. (1989). *The great good place.* New York: Paragon House, p. 15.

ռակայնության» սկզբունքով, որը համապատասխանում է Յ. Հաբերմասի նկարագրած «հանրային ոլորտին»[74]:

Հրապարակները նույնպես հավաքույթի վայրեր են, սակայն նույն կերպ չեն գործում: Քննարկման փոխարեն, հիմնական հաղորդակցական «գործիքը» տեսարան է, ինչպես օրինակ մշակութային իրադարձությունները կամ քաղաքական ցույցերը:

Այգիները՝ որպես հանրային տարածության տարատեսակ, շեշտադրում են քաղաքի դիզայն-ծրագրերը և քաղաքացիների դերը հանրային կյանքում: Հանրային այգիները մեծ պահանջարկ ունեն հանրության շրջանում: Դրանք մարմնավորում են բնության, այսօր նաև առավել ազատ սպառողական գոտու, առկայությունը քաղաքում: Այգիները այն վայրերն են, որտեղ սոցիալական կապերը բազմաթիվ են, ինչպես մշտական այցելուների համար, այնպես էլ անծանոթների համար: Այգիները, ինչպես և սրճարանները լոկալ տարածքներ են, որոնցից օգտվում են շրջակա միջավայրի բնակիչները: Այգիները բաց են բոլորի համար՝ աղքատ-հարուստների, տեղի բնակիչ-այցելուների համար և այլն:

Փողոցները թույլ են տալիս ուսումնասիրել հանրային տարածության և քաղաքի ձևի միջև հարաբերությունները: Հավանաբար, հանրային տարածությունների ամենից կայուն սիմվոլներից մեկը հենց փողոցներն են, որոնք գտնվում են ճարտարապետների և պլանավորողների հետևողական ուշադրության ներքո: Ջ. Ջեկոբսը, ով մոդեռն ճարտարապետության և պլանավորման առաջին քննադատներից է, առանձնացնում է չորս չափանիշ, որոնք ճարտարապետներն ու պլանավորողները պետք է հաշվի առնեն.

---

[74] **Habermas J.** (1989). *The structural transformation of the public sphere: an inquiry into a category of bourgeois society.* Cambridge, Mass.: MIT Press, p. 135.

- *Շենքը/կառույցը պետք է ցույց տա հիմնական օգտագործման խառնուրդ:*
- *Կառուցված հատվածները պետք է փոքր լինեն:*
- *Դրանք պետք է համահունչ լինեն հանրության մեջ առկա տարբերային տարբերություններին:*
- *Տեղում բնակչության բարձր կոնցենտրացիա կա*[75]*:*

Այս ամենի նպատակն է օգնել քաղաքին պահպանել բազմազանությունը, որն ընդունելի է դարձնում բոլորի համար: Միևնույն ժամանակ, Ջ. Ջեկոբսը կարևորում էր հետագա հետևանքները՝ որ հանրային տարածությունների դիզայնը պայմանավորում է բնակչության սոցիալական կարգը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ հանրային տարածությունները մեծամասշտաբ վայրեր են՝ հին պատմական կենտրոններից մինչև մերձքաղաքային գոտիներ: Դրանք այն տարածքներն են, որոնք բաց են հանրության մեծամասնության համար և ենթակա են այն կանոնակարգին, որոնք կառավարում են տարածության օգտագործումը: Նրանց ձևը, օգտագործումը և սպասարկումը վեր է հանում մի շարք կարևոր հարցեր՝ կապված քաղաքային պլանավորման հետ՝ լոկալից մինչև մայրաքաղաքային մասշտաբի և միավորում երկու կարևոր և անհրաժեշտ որակներ՝ *հասանելիություն և կոմունիկացիա*, որոնցից կախված են մնացյալ այլ որակները:

Բնակտարածություն

Բնակտարածությունը՝ որպես քաղաքային տարածություն տարատեսակ սահմանելիս հարկ է հասկանալ, որ այն շատ ավելին է, քան պարզապես մի վայր, ուր մարդիկ ապրում են: Այն ներառում է նաև անվտանգությունը, հարևանությունը, սոցիալական փոխհարա-

[75] **Jacobs A.** (1993). *Great Streets.* Cambridge, MA: The MIT Press, p. 43.

բերությունները, հասանելիությունը, համայնքային հնարավորությունները և այլն: Բնակտարածությունը քննարկում է տեղայնացման, միջավայրային հնարավորությունների, սիմվոլիկ բնութագրիչների մի ամբողջ փաթեթ[76]:

Բացի այդ, ոլորտում ուսումնասիրությունները հսկայածավալ են դարձել՝ ինտեգրելով տարբեր դիսցիպլիններ (մարդ-միջավայր փոխհարաբերություններ, հոգեբանական ասպեկտների ուսումնասիրություն և այլն): Յուրաքանչյուր խնդիր բազմակողմանի է և անհնարին է պրակտիկների (ճարտարապետներ, նախագծողներ, համայնքային պլանավորողներ) կողմից միայն խնդիրներ քննարկել, այլ հարկ է ուսումնասիրել, հետազոտել՝ ինտեգրելով այլ ոլորտների փորձը: Միջդիսցիպլինար ուսումնասիրությունը թույլ է տալիս դիտարկել և անդրադառնալ այս բոլոր ասպեկտներին և առավել համակարգված եզրահանգումներ անել:

Այս իմաստով, բնակելի տարածության մասին խոսելիս մենք անդրադառնում ենք քաղաքային տարածությանը, քաղաքային համայնքներին, քաղաքային շենքերին և արդյունքում խոսում բնակտարածության կառուցվածքի՝ որպես շինությունների տարածական կոնֆիգուրացիայի մասին [77]:

Բնակտարածության ուսումնասիրության հանդեպ հետաքրքրության հսկայական աճ է նկատվել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ պայմանավորված նոր կառույցների մեծ քանակով[78]: Տարբեր հետազոտություններ դուրս են բերել բնակիչների արձագանքը «պլանավորված» համայնքների մասին՝ համեմա-

---

[76] Տե՛ս **Foley D. L.** (August, 1980). *The Sociology of Housing.* Annual Review of Sociology, Vol. 6, p. 457-478:

[77] Տե՛ս **Boffet A. & Rocca Serra, S.** (2001). *Identification of spatial Structures within Urban Blocks for Town characterization*. Proceedings of ICC'01 3: 1974-1983:

[78] Տե՛ս **Foley D. L.** (August, 1980). *The Sociology of Housing.* Annual Review of Sociology, Vol. 6, p. 457-478:

տելով բնակիչների մոտեցումները և վարքը ճարտարապետների միտումների հետ: Այսպիսով, բնակտարածության ուսումնասիրությունը սկսում է կարևոր ասպեկտ դառնալ քաղաքականության մշակման համար:

Բնակտարածության որպես քաղաքային տարածության տեսակի մասին խոսելիս հարկ է անդրադառնալ Ա. Լեֆեվրի տարաբաժանմանը, որտեղ հստակ ընդգծվում է բնակտարածության դերը: Տարածությունը Ա. Լեֆեվրը մեկնաբանում էր երեք մակարդակում՝ նյութական, սոցիալ-քաղաքական և գիտահետազոտական: Այս նպատակով նա ներմուծում է «տարածական տրիադան» և տարբերում՝

1. *Տարածության ներկայացումներ*՝ սա այն է, թե ինչպես է տարածությունը հասկացվում և մեկնաբանվում մասնագետների կողմից: Դա իշխանության և գաղափարախոսության ներկայացումն է, որը իր արտացոլումն է գտնում բնակտարածությունում: Դա, ըստ էության, այն հիմնական կառուցվածքն է, որի շրջանակներում հասկացվում և մեկնաբանվում է տարածությունը:

2. *Ներկայացման տարածություն* բնակվելու տարածությունն է, ոչ ռեֆլեքսիվ տարածությունն է, որն ավելի շուտ զգում են, քան դրա մասին մտածում: Դա առնչվում է տարածական կապվածության հետ, որը սոցիալական կյանքը դարձնում է ավելի կայուն՝ հայրենիք, հայրական տուն, սենյակ և այլն: Բնակտարածությունը իր մեջ ներառում է իրականը և երևակայականը: Դա, իհարկե, սերտորեն կապված է «տարածության ներկայացման հետ», քանի որ առկա գաղափարախոսությունը, կառուցվածքը մեծապես անդրադառնում են անհատի կողմից իրականի և երևակայականի մեկնաբանման, իմաստավորման վրա: Դա նաև կապված է վերահսկողության և թույլատրելիության հետ՝ ստեղծելով կարելիի և անկարելիի մասին գիտելիքը:

3. *Տարածական պրակտիկաներ՝* խոսքը սոցիալական տարածության նյութական կողմի վերարտադրման մասին է՝ պրակտիկաների, որոնք կառուցում են սոցիալական տարածությունը: Այսինքն, տարածությունը, բացի ի սկզբանե գոյություն ունեցող երևույթ լինելուց, նաև փոփոխության է ենթարկվում և առաջացող պրակտիկաները ազդեցություն են գործում դրա հետագա փոփոխության վրա: Դա իր մեջ ամբողջացնում է *տարածության ներկայացումը և ներկայացման տարածությունը:*

Այս տրիադայի միջոցով բացատրվում է այն, որ ընկալվող, հասկացվող և բնակելի տարածությունները կայուն չեն, և դրանք կարելի է փոփոխել: Պատմական ժամանակաշրջանը թելադրում է, թե այս երեքից որն է առավել կարևորվում[79]: Բնակտարածության յուրահատկությունը այստեղ ակնհայտ է, քանի որ այն չի առանձնանում միայն տարածության մի տեսակով. այն միաժամանակ իր մեջ է ներառում հանրային, մասնավոր և հետերո տարածության տեսակները՝ այդպիսով ձեռք բերելով համադրական բնույթ:

[79] **Lefebvre H.** (2007). *The Production of Space*. Oxford: Blackwell, p. 245.

ԳԼՈՒԽ 3.
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԵՂԵՐ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքը դիտարկելով որպես կառուցվածքայնացվող և արդեն իսկ կառուցվածքայնացված սոցիալական տարածություն՝ հանգում ենք *տարածություն* և *տեղ* հասկացությունների հայեցակարգման անհրաժեշտությանը: Սոցիոլոգիական տեսանկյունից, տարածությունը ներկայացնում է սոցիալական և/կամ սիմվոլիկ կառուցվածքներ, տեղը՝ առօրյա կոնկրետ պրակտիկաների սոցիալականացված ֆիզիկական միջավայր: Տարածությունը, լինելով սոցիալական[80], *«արտադրող, միաժամանակ մտածողություն և գործողություն պայմանավորող ... վերահսկող ... և գերակայող հայտկություն ունի»*[81], իսկ տեղը (դրանում ներառված ֆիզիկական օբյեկտները) սահմանում են տարածությունը՝ հաղորդելով «երկրաչափական ինքնօրինակություն»[82], կամ ինչպես Գ. Զիմելն էր նկատում, լոկալացմամբ (տեղայնացմամբ) մարդիկ (նրանց մտածողությունն ու գործողությունները) ըմբռնելի են դառնում[83]: Ուստի, քաղաքային տարածությունը, քաղաքային տեղերը ֆիզիկական սահմանների հետ փոխկապակցող և իմաստավորող սոցիալական շրջանակ է: Միևնույն ժամանակ, քաղաքային տարածության վերարտադրությունը տեղի ունի ի հաշիվ կոնկրետ տեղերի ձևավորման և գործառնման: Ըմբռնելու համար քաղաքը որպես սոցիալական տարածության վերարտադրության գործընթացի հիմնային տարածություն՝ անհրաժեշտ է

---

[80] Տե՛ս **Tuan Y.F.** (1977). *Space and Place: The perspective of experience.* Minneapolis: University of Minnesota Press:

[81] **Lefebvre H.** (2007). *The Production of Space*. Oxford: Blackwell, p. 26.

[82] Տե՛ս **Tuan Y.F.** (1977). *Space and Place: The perspective of experience.* Minneapolis: University of Minnesota Press:

[83] Տե՛ս **Simmel G. & Wolff K.H.** (1950). The Metropolis and Mental Life. *The Sociology of Georg Simmel.* Glencoe, Ill: Free Press:

ուսումնասիրել լոկալ քաղաքային տեղերի կառուցվածքային առանձնահատկությունները:

Համաձայն Է. Ռալֆի քաղաքային տեղերը երեք հիմնական բաղադրիչների՝ ***ֆիզիկական պարամետրերի (1), գործունեության (2) և նշանակությունների (3),*** փոխազդեցության արդյունք են[84]: Համանման տրամաբանությամբ Դ. Սիմոնը քաղաքային տեղերի ձևավորման և վերարտադրության համար օգտագործում է երեք հիմնական հասկացություն՝ ***աշխարհագրական համույթ (1), տեղի մարդիկ (2) և պարածության ոգի (3)[85]:*** Ընդհանրացնելով այս մոտեցումները՝ կարելի է նկատել, որ քաղաքային տեղերի կառուցվածքը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է համադրել (տե՛ս պատկեր 1).

1. Քաղաքի աշխարհագրական/ֆիզիկական միջավայրը, այդ թվում, դրա բնական և մարդկային չափումները,
2. Քաղաքային լոկալ ագենտներին (քաղաքաբնակներ, քաղաքային վարչություն, այցելուներ և ուրիշներ)՝ որպես լոկալ ինքնություններով պայմանավորված խորհրդանշական իմաստների արտադրողներ ու կրողներ,
3. Քաղաքային տարածության և/կամ տեղերի լոկալ սիմվոլիկ նշանակություններ՝ որպես լոկալ ինքնությունների հիմքեր:

---

[84] Տե՛ս **Najafi M. & Shariff M.** (2011). *The concept of a place and sense of place in architectural studies.* International Journal of Human and Social Sciences, 6(3), pp. 187-193:

[85] *Աշխարհագրական համույթ –geographical ensemble (1), տեղի մարդիկ- people in place (2), պարածության ոգի- "genius loci",* տե՛ս **Seamon D.** (2012). *Place, Place Identity, and Phenomenology: A Triadic Interpretation Based on J.G. Bennett's Systematics*. In Casakin H. & Bernardo F. (Eds.).The Role of Place Identity in the Perception, Understanding, and Design of Built Environments, London: Bentham Science Publishers, pp. 3-21:



Պատկեր 3.1. **(ԱՄ- աշխարհագրական միջավայր, ԼԱ- լոկալ ագենտներ, ՄՆ- սիմվոլիկ նշանակություններ)**

Դ. Սիմոնը, հիմնվելով Ջ. Բենեթի «կարգաբանական» մոտեցման վրա[86], մեկնաբանում և քննում է եռաստիճան այս սխեման իր հնարավոր վարիացիաներով՝ առանձնացնելով «մարդ-տեղ» հարաբերակցությանը բնորոշող վեց տրիադ, որոնց միջոցով հնարավոր է հասկանալ և բացատրել տեղի և ինքնության հարաբերակցման խնդիրը:

- ✓ ***Տեղի փոխազդեցություններ*** (ԼԱ-ՄՆ-ԱՄ)- այս տրիադը բնորոշում է տեղը՝ որպես առօրյա տիպիկ գործողությունների միջավայր, այն կարելի է բնորոշել «լոկալ առօրյայով», երբ լոկալ ագենտները, իմանալով տեղի սիմվոլիկ իմաստը, սպառում են այն ըստ նշանակության:
- ✓ ***Տեղի ինքնություն*** (ԱՄ-ՄՆ-ԼԱ)- այս տրիադը բնորոշում է այն, թե մարդիկ բնակվելով կոնկրետ տեղում, ինչպես են ընդունում այն որպես իրենց «լոկալ աշխարհ»:

---

[86] Տե՛ս **Bennett J. G.** (1993). *Elementary systematics: A tool for understanding wholes.* Santa Fe, NM: Bennett books:

- ✓ ***Տեղի ստեղծում*** (ԼԱ-ԱՄ-ՍՆ)- այս տրիադը բնորոշում է գործընթաց, երբ որոշակի խմբեր (բնակիչներ, տեղական վարչություն և ուրիշներ), ազդելով ֆիզիկական միջավայրի վրա, դրան սիմվոլիկ նշանակություններ են հաղորդում:
- ✓ ***Տեղի ինտենսիֆիկացում*** (ԱՄ-ԼԱ-ՍՆ)- այս տրիադը բնորոշում է գործընթաց, երբ ֆիզիկական լոկալ միջավայրը, ի հաշիվ իր գրավչության, ներգրավում է մարդկանց՝ նպաստելով տեղի սիմվոլիկ ազդեցության ուժեղացմանը:
- ✓ ***Տեղի իրացում*** (ՍՆ-ԼԱ-ԱՄ)- այս տրիադը բնորոշում է գործընթաց, երբ ֆիզիկական լոկալ միջավայրը անընդհատ վերածվում է իրացման գոտու՝ ի հաշիվ ֆիզիկական միջավայրի գրավչության:
- ✓ ***Տեղի ազատում*** (ՍՆ-ԱՄ-ԼԱ)- այս տրիադը բնորոշում է գործընթաց, երբ մարդիկ իրենց պատկանելությունը պայմանավորում են ուժեղ սիմվոլիկ իշխանություն ունեցող ֆիզիկական վայրով:

«ՍՆ», «ԱՄ», «ԼԱ» բաղադրիչների հարաբերակցմամբ է ըմբռնելի և բացատրելի քաղաքային տեղերի ձևավորման, ընկալման և սպառման, համապատասխանաբար, քաղաքային տարածության վերարտադրության գործընթացը: Այս բաղադրիչները հիմնարար են, դրանցից յուրաքանչյուրի բացակայության պայմաններում տարածության այլափոխում է տեղի ունենում: Օրինակ, երբ տրիադից դուրս է գալիս «ԱՄ»-ն, այն դառնում է «ուտոպիա»՝ տեղ, որը գոյություն ունի միայն պատկերացումներում և/կամ տեղ, որը չկա, երբ «ԼԱ»-ն՝ «հետերոտոպիա»[87]՝ տեղ, որը դուրս է մարդկային պրակտիկաներից:

---

[87] *Հետերոտոպիա հասկացությունը շրջանառության մեջ է դրել Մ. Ֆուկոն:* Տե՛ս Foucault M. (October, 1984). *Of Other Spaces: Utopias and Heterotopias.* Architecture /Mouvement/ Continuité:

Սիմվոլիկ նշանակություններ (ՍՆ) + Լոկալ ագենտներ (ԼԱ) = Ուտոպիա

Սիմվոլիկ նշանակություններ (ՍՆ) + Աշխարհագրական միջավայր (ԱՄ) = Հետերոտոպիա

Հետաքրքրական է, որ տրիադից պրակտիկայում հնարավոր չէ դուրս թողնել «ՍՆ»-ն, քանի որ այն կառուցվածքային հատկություն ունի և յուրաքանչյուր պրակտիկա ենթադրում է իմաստավորված (սիմվոլիկ) կառուցվածք՝ դետերմինացված *լոկալ նշանակությամբ ագենտներով և աշխարհագրական միջավայրի սիմվոլիկ կապիտալով:* Քաղաքային տեղի սիմվոլիկ կառուցվածքը մի կողմից պայմանավորում է լոկալ պրակտիկաները, մյուս կողմից պայմանավորված է այդ պրակտիկաներով: Այստեղ կենտրոնական է «ԼԱ» և «ԱՄ» հարաբերակցությունը. մի կողմից, աշխարհագրական միջավայրը ագենտների լոկալ գործունեության սոցիալապես իմաստավորված ֆիզիկական միջավայր է, մյուս կողմից ֆիզիկական տարածությունը ագենտների լոկալ պատկերացումների և/կամ մտային կառուցվածքայնացված իրականություն է (քաղաքի աշխարհագրական/ֆիզիկական տարածության մտային կառուցվածքների վերաբերյալ մանրամասն տե՛ս Գլուխ 4):

Լայն առումով, «ՍՆ», «ԱՄ», «ԼԱ» բաղադրիչների հարաբերակցմամբ ձևավորվող տրիադիկ սխեմաները ընդգծում են քաղաքային տեղի երկու որակ՝

1. ***Լինել տեղ,***
2. ***Դառնալ տեղ***[88]***:***

[88] **Seamon D.** (2012). *Place, Place Identity, and Phenomenology: A Triadic Interpretation Based on J.G. Bennett's Systematics*. In Casakin H. & Bernardo F.



Պատկեր 3.2- «Լինել տեղ» տրիադա:



Պատկեր 3.3. «Դառնալ տեղ» տրիադա:

Հիմնվելով այս սխեմաների վրա՝ հնարավոր է դառնում քննել տեղի լոկալ ինքնության խնդիրը: «Լինել տեղ» տրիադը վերաբերում է սոցիալապես իմաստավորված աշխարհագրական միջավայրի ներուժին՝ ուղղված լոկալ վայրի յուրատիպության պահպանմանն ու ինքնընտինքյան ենթադրվող առօրյա գործողությունների, իրավի-

(Eds.).The Role of Place Identity in the Perception, Understanding, and Design of Built Environments, London: Bentham Science Publishers, p. 16.

ճակների, ինչպես նաև նշանակությունների, իրացմանը: Մյուս կողմից, «դառնալ տեղ» տրիադը վերաբերում է նրան, թե ինչպես մարդկանց ներգրավումը «լավ» միջավայրում և քաղաքացիական պատկանելիությունը կարող են տեղը դարձնել «լավը», կամ, ճիշտ հակառակը՝ տեղը դարձնել «վատը»[89]:

Այստեղ կարևոր է հասկանալ, թե այս տրիադները ինչ առնչություն ունեն տեղի հետ կապվածության և տեղի ինքնության հետ: Ինչպես Է. Ռալֆը[90] և Ս. Շամայն[91] են առաջարկում, տեղի հետ կապվածությունը կարող է տատանվել կապի լիովին բացակայությունից, մինիմալ ճանաչումից, սահմանափակ պատկանելիության զգացումից մինչև ինքնանույնականացում տեղի հետ, խորին ներգրավվածություն և անգամ անհատական կամ խմբային զոհաբերություն հանուն տեղի[92]: «Լինել տեղ» տրիադը ցույց է տալիս, որ «ՄՆ»-ը, «ԱՄ»-ը և «ԼԱ»-ն ունեն փոխադարձ գործողությունների լայն տիրույթ: Տրիադի բաղկացուցիչներից յուրաքանչյուրը, ինտենսիվության աստիճանից ելնելով, կարող է ի հայտ գալ կայունացնելու՝ մի կողմից ուժեղ կապվածությունը և ինքնանույնականացումը տեղի հետ, մյուս կողմից՝ թույլ կապվածությունը և ինքնանույնականացումը տեղի հետ:

Տեղի հետ կապվածությունը և ինքնանույնականացումը խթանելու համար էական է «դառնալ տեղ» տրիադը, որը ցույց է տալիս տեղի դերի ուժեղացման հնարավորությունները: Ի տարբերություն «լի-

---

[89] Տե՛ս **Seamon D.** (2012). *Place, Place Identity, and Phenomenology: A Triadic Interpretation Based on J.G. Bennett's Systematics*. In Casakin H. & Bernardo F. (Eds.).The Role of Place Identity in the Perception, Understanding, and Design of Built Environments, London: Bentham Science Publishers, pp. 15-16.

[90] Տե՛ս **Relph E.** (1976). *Place and placelessness.* London: Pion, pp. 49-55:

[91] Տե՛ս **Shamai S.** (1991). *Sense of place: An empirical measurement.* Geoforum, 22 (3), pp. 347-358:

[92] Տե՛ս **Seamon D.** (2008). *Place, placelessness, insideness, and outsideness in John Sayles' Sunshine State.* Aether: Journal of Media Geography, 3, 1-19:

նել տեղ» տրիադի, այս մեկը հաճախ (բայց ոչ միշտ) պահանջում է ինքնագիտակցում, գոյության կանխամտածվածություն, որով անհատը կամ խումբը թույլ են տալիս իրենց սեփական գործողություններում, ընկալումներում և զգացումներում ազդվել տեղերից[93]: Սա մասամբ տեղի ստեղծման տրիադի դեպքն է, որը պահանջում է դրական և ըմբռնելի ազդակների միջև սերտ, ազդեցիկ կապ, որով քաղաքացին, ճարտարապետը և քաղաքականություն մշակողը ձգտում են ստեղծել լավագույն միջավայրը (քաղաքականությունը կամ ճարտարապետական տարրը) այնպես, որ տեղ-սիմվոլիկ նշանակություն ամբողջականությունը ինտենսիվ լինի[94]:

---

[93] Տե՛ս **Seamon D.** (2012). *Place, Place Identity, and Phenomenology: A Triadic Interpretation Based on J.G. Bennett's Systematics*. In Casakin H. & Bernardo F. (Eds.).The Role of Place Identity in the Perception, Understanding, and Design of Built Environments, London: Bentham Science Publishers, pp. 16-17:

[94] Տե՛ս **Alexander C.** (2002-05). *The nature of order (4 vols).* Berkeley: Center for Environmental Structure; **Alexander C.,** Ishikawa S., & Silverstein M. (1977). *A pattern language.* New York: Oxford University Press; **Kemmis D.** (1990). *Community and the politics of place.* Norman, Oklahoma: University of Oklahoma Press; **Seamon D.** (2004). *Grasping the dynamism of urban place: Contributions from the work of Christopher Alexander,* ***Daniel Kemmis****, and Bill Hillier.* In: Mels, T. (Ed.), Reanimating places. Burlington, Vt: Ashgate, pp. 123-145:

ԳԼՈՒԽ 4.
ՔԱՂԱՔԸ՝ ՄՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Քաղաքի մտապատկերը համոզմունքների, իդեալների և զգացումների ամբողջություն է, որոնք մարդիկ ունենում են՝ գտնվելով կամ ապրելով որոշակի տարածքում: Քաղաքային տարածության նշանակալի վայրերի մասին տեղեկատվություն ստանալու համար սոցիոլոգիայում օգտագործվում է մտային քարտեզագրման տեխնիկան: Երկու միանման մտային քարտեզ գոյություն չունի, քանի որ մտային քարտեզները արտացոլում են մարդու ունակությունը կազմակերպել, պահպանել, հիշել և օգտագործել տարածական տեղեկատվությունը: Մտային քարտեզը ներկայացնում է անհատական պատկերացումներն այն մասին, թե ինչպես է մարդը տեսնում աշխարհը: Չնայած այն բանի, որ մտային քարտեզը գիտակցության կառուցվածքի արդյունք է, որոշակի նմանություններ կան այն մարդկանց մտային քարտեզների միջև, որոնք ապրում են միևնույն տարածությունում և պատկանում են միևնույն սոցիալական խմբին: Այդ իսկ պատճառով մտային քարտեզների վերլուծությունը թույլ է տալիս ուսումնասիրել որոշակի տեղի/տարածքի նշանակությունը կոնկրետ խմբի համար:

Մտային քարտեզների կարևորությունը հաստատում է նաև Վ. Գլազիչևը՝ նշելով, որ քաղաքի սիմվոլիկ կենտրոնի ըմբռնումը միշտ չէ, որ հեշտ է, և միշտ շատ կարևոր է, այլապես քաղաքի կենտրոնական միջուկը զարգացնելու ժամանակ անհնարին է խուսափել դառը հիասթափություններից[95]:

---

[95] Տե՛ս **Глазычев В. Л.** (2012). *Как создать центр города?* http://www.youtube.com/watch?v=g8IjFu2DN9s.

Եթե մարդկանց հարցնենք, թե ինչ են նրանք նախ և առաջ պատկերացնում քաղաքի հետ կապված, ապա կստանանք մեծ քանակությամբ հետաքրքիր պատասխաններ: Քաղաքի, նրա ֆիզիկական տարածության սիմվոլիկ նշանակության/իմաստի մասին սկսել է խոսվել վերջին մի քանի դարում[96]: Այդ պատկերները կյանքի են կոչվել գրականության, կինոնկարների, երաժշտության, արվեստի, պատմական և ժամանակակից իրադարձությունների միջոցով: Քաղաքի վերաբերյալ իմաստները/նշանակությունները կարծրատիպային են, իսկ մյուսները հիմնված են հետազոտական արդյունքների վրա:

Իհարկե կարելի է ասել, որ իրականում մտային քարտեզները սուբյեկտիվ բնույթ են կրում: Ընդգծելով մտային քարտեզների սուբյեկտիվությունը ու յուրատիպությունը՝ Դ. Սիտեն նշում է, որ նշանակություն չունի այն, որ մենք չենք կարող անմիջականորեն դիտարկել մտային քարտեզները. եթե ռեսպոնդենտը իրեն պահում է այնպես, կարծես այդպիսի քարտեզ գոյություն ունի, միայն դա բավարար է[97]:

Որոշակի մակարդակում բոլոր պատկերացումներն ու իմաստավորումները իրական են դառնում: Մենք՝ բոլորս էլ այդ պատկերացումների կրողներ ենք: Լոս-Անջելես, Ջերսի և Բոստոն քաղաքների օրինակով Ք. Լինչի կողմից իրականացված հետազոտությունից հետո մտային քարտեզները դարձան տարածության մասին պատկերացումների ուսումնասիրման կիրառելի գործիք: Ինքնին գաղափարը, որ ոչ միայն կարևոր է քաղաքի ֆիզիկական կառուցվածք, այլև քաղաքացիների գլխում նրա մտային արտապատկերումը, մեծ տարածում գտավ 1960-70-ական թվականներին: Արդյունքում, այդ ոլոր-

---

[96] Տե՛ս **Глазычев В. Л.** [Онлайн]. *Поэтика городской среды*. Доступно: http://www.glazychev.ru/habitations&cities/1986_poetika.htm. [Просмотрено 31.01.2016]:

[97] **Милграм С.** (2000). *Эксперимент в социальной психологии.* 3-е международное издание, Санкт-Петербург: Питер, ст. 79:

տում արդիականացվեցին բազմաթիվ նմանատիպ մշակումներ, առաջ քաշվեցին նոր մոտեցումներ (օր՝ ժամանակային և սիմվոլիկ քարտեզներ): Այդ մեթոդաբանական մոտեցումները դժվար է դասակարգել և հիմնարար են առանձին հետազոտության շրջանակներում ընտրված մեթոդաբանությունները, որոնց զարգացումը առանձին հետազոտական խմբի աշխատանք է:

Փորձելով դասակարգել մեթոդաբանությունները՝ հարկ է նշել, որ բոլոր մեթոդաբանությունների համար ընդհանուր հասկացություն է «սոցիալական քարտեզագրումը», որն իրենից ներկայացնում է սոցիալական նշանակալի տեղեկատվության տեղափոխումը քարտեզի վրա: Այս հասկացությանը, ըստ իմաստային ծավալի, հետևում է «իմացական քարտեզագրումը», որը հասկացվում է որպես տարածական տեղեկատվության պահպանման, արդիականացման և օգտագործման գործընթաց:

Իմացական քարտեզների ուսումնասիրման առարկան հանդիսանում է գիտելիքը: Իմացական քարտեզագրված գիտելիքը անհատական գիտելիք է աշխարհագրական տարածության տարածական և միջավայրային հարաբերությունների մասին: Այդպիսի գիտելիքը ցույց է տալիս, թե ինչու մենք ընտրեցինք որոշակի երթուղի կամ ժամանցի վայրեր:

Իսկ ինչո՞վ է իմացական քարտեզագրումը տարբերվում մտայինից: Իմացական քարտեզագրումը ենթադրում է անհատական իմացական ունակությունների ուսումնասիրում ըստ տեղեկատվությունը հիշելու, դրա պահպանման և օգտագործման: Այսինքն, այս առումով այն առնչվում է հոգեբանական ասպեկտների, միևնույն ժամանակ մտային քարտեզագրումը նպատակ ունի ուսումնասիրելու ընդհանրացված պատկերները, որոնք ընկած են սոցիալական գիտությունների ոլորտում: Այստեղ տեղին է նշել Ս. Միլգրամի «Փարիզի հոգեբանական քարտեզները» աշխատությունը, որտեղ հետազոտողը

հստակ սահմանափակում է տվյալների վերլուծությունը 2 փուլով՝ անհատական և խմբային:

> *«Քաղաքը սոցիալական երևույթ է... սակայն հարկ է ավելացնել՝ քաղաքի ընկալումը նույնպես հասարակական է, և այն պահանջում է ինչպես կոլեկտիվ, այնպես էլ անհատական կողմի ուսումնասիրություն»*[98]:

Նա մտային քարտեզները սահմանում են որպես քաղաքի կերպար/պատկեր, որն ապրում է մարդու գիտակցության մեջ՝ փողոցների, հրապարակների, հուշարձանների տեսքով, որոնք նրա համար կարևոր են և իրար են կապում տեղաշարժման համար կարևոր երթուղիներ:

Ն. Վեսելկովան առանձնացնում է մտային քարտեզների 4 յուրահատկություն. մտային քարտեզները (1) իրենցից ներկայացնում են վիզուալ նյութ՝ (2) ստեղծված են տեղեկատուների կողմից և (3) նկարագրում են վայրը, (4) ուսումնասիրման խնդրի տեսանկյունից[99]:

Մտային քարտեզագրումը որոշ ժամանակ համարվում էր տարածական պատկերացումների ուսումնասիրման միակ մեթոդը: Ստացված տվյալների վերլուծությունը հիմնվում է դասակարգումներից մեկի վրա: Այդպիսի դասակարգումներից մեկը քաղաքային տարրերի տիպականացումն է, որը համակարգել է Ք. Լինչը: Տվյալների վերլուծությունը հիմնվում է հիշված տարրերի *(ճանապարհ, կողմնորոշիչ, սահման, շրջան, հանգույց)* բաշխման վրա՝ հաշվելով այս կամ այն տարրի հիշատակվելու հաճախականությունը՝ դուրս

---

[98] **Милграм С.** (2000). *Эксперимент в социальной психологии.* 3-е международное издание, Санкт-Петербург: Питер, ст. 97.

[99] **Веселкова Н. В.** (2010). *Ментальные карты города: вопросы методологии и практики использования*. Социология: методология, методы, математическое моделирование, № 31, ст. 11.

բերելով փոխադարձ հարաբերակցության հիմնական և հարակից գնահատականներ:

Մտային քարտեզների վերլուծության մեկ այլ ռազմավարությամբ հարկավոր է մանրամասն դիտարկել տեղեկատուների/քարտեզագրողների աշխատանքը: Հետազոտողը ուշադրություն է դարձնում նրան, թե ինչպես է տեղեկատուն ընտրում իր առաջին օբյեկտները պատկերման համար, ինչպես է ստեղծում քարտեզը:

Այժմ անդրադառնանք Ք. Լինչի հայեցակարգին: Նա գրում է.

> *«Յուրաքանչյուր քաղաքաբնակ ունի իր ասոցացիաները քաղաքի տարբեր մասերի հետ կապված և նրա կերպարը ներառված է հիշողությունների և նշանակությունների մեջ»*[100]:

Հեղինակը նաև խոսում է այն մասին, թե ինչպես են սուբյեկտները աղապտացվում քաղաքում, ինչպես են գտնում ճանապարհները իրենց շուրջը: Մարդիկ տարբեր կերպ են կառուցում քաղաքային տարածությունը: Դա կախված է նրանց քաղաքի ստատուսից՝ մարդու կամ խմբի դիրքորոշումից, որը պայմանավորված է քաղաքում զբաղեցրած դերով (օրինակ՝ հին բնակիչ, վարորդ, հետիոտն և այլն), բնակավայրով և տվյալ քաղաքում մնալու տևողությամբ: Ք. Լինչն առաջ է քաշում մի քանի հիմնական հասկացություններ, որոնց շուրջ և կառուցում է իր աշխատությունը:

(1) ***Ընթեռնելիություն կամ տեսքի պարզություն,*** որը նշանակում է քաղաքային տարածության հստակություն կամ հասկանալիություն՝ նկատի ունենալով, որ սրա միջոցով շատ հեշտ կարելի է ճանաչել քաղաքի տարբեր տարրեր:

(2) ***Միջավայրի մտային պատկերը*** դիտարկողի մոտ քաղաքային տարածության անհատական պատկերն է, որը կողմ-

[100] **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press, p. 35.

նորոշման հիմք է հանդիսանում հենց նրա համար: Մտային պատկերի հիմքում ընկած է քաղաքային տարածության հստակությունը/պարզությունը:

Բացի այդ Ք. Լինչը կարևորում է քաղաքաբնակների՝ տարածության *մտապատկերի ձևավորման ունակությունը (**imageability**),* որը թույլ է տալիս պրակտիկ մակարդակում ուսումնասիրել քաղաքի պատկերը, բացի այդ՝

- *թույլ է տալիս կողմնորոշվել ֆիզիկական տարածության մեջ:*
- *թույլ է տալիս հեշտորեն ճանաչել տարածության տարբեր կառուցվածքային տարրեր*[101]*:*

Քաղաքային միջավայրի ըմբռնման համար կարևոր է քաղաքային տարածության «ընթեռնելիության» հատկանիշը, որը նշանակում է վիզուալ պատկերների պարզություն և հիշելիություն: Քաղաքային տարածության առանձին կետերի սիմվոլիկ նշանակությունը (ձևավորված միֆերի, սիմվոլիկ հիշողության, կոլեկտիվ հիշողության, «ուրիշների» փորձի հիման վրա) կազմում են կոլեկտիվ ընկալումներ: Ք. Լինչն իր աշխատության մեջ ցույց է տալիս, որ գոյություն ունեն որոշակի կոլեկտիվ պատկերացումներ քաղաքի՝ որպես տարածական համակարգի մասին: Այստեղ կարելի է առանձնացնել (1) *քաղաքի ուժեղ կետեր*, որոնք մատնանշվում են մեծամասնության կողմից և առաջացնում են բազմաթիվ ընկալումներ. վայրեր, որտեղ գալիս են երիտասարդները, տոնակատարությունների իրականացում, (2) *քաղաքի թույլ կետեր*, որոնք հիշվում են, բայց ոչ մեծամասնության կողմից: Որպեսզի սուբյեկտի համար պարզ լինի, թե նա քաղաքի որ մասում է գտնվում, անհրաժեշտ է ստեղծել քաղաքի յուրաքանչյուր մասի համար նշանակալի պատկեր, կամ

[101] **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press, p. 15.

- *Ճանաչել տեղի յուրահատկությունը,*
- *Տարածության մասերը ըմբռնել փոխկապվածության մեջ,*
- *Հասկանալ տեղի պրակտիկ և էմոցիոնալ նշանակությունը*[102]*:*

Ք. Լինչն իր քաղաքի վիզուալ ընկալման տեսության մեջ առանձնացրել է այն հիմնական տարրերը, որոնց միջոցով մարդն իր գիտակցության մեջ ստեղծում է քաղաքի կառուցվածքը: Կարելի է ասել, որ հեղինակի կողմից առանձնացված տարրերը քաղաքային հանրային տարածություններն են: Այդպիսի տարրերն են *ճանապարհները, սահմանները, գոտիները, ուղենիշները, հանգույցները*[103]*:*

Ճանապարհները կոմունիկացիայի միջոցներ են, որոնցով մարդիկ տեղաշարժվում են մի վայրից մյուսը: Դրանց դերում կարող են հանդես գալ փողոցները, մայրուղիները, երկաթուղիները, ջրանցքները և այլն: Շատերի համար ճանապարհները համարվում են քաղաքային տարածության կառուցման կարևորագույն տարրեր. մարդիկ, քաղաքով տեղաշարժվելով, զննում են այն, համապատասխանաբար ճանապարհները ձևավորում են միջավայրի բոլոր մյուս տարրերը: Ճանապարհներից յուրաքանչյուրը ունի իր նշանակությունը: Ճանապարհները տարբեր ձևով են նշանակություն ձեռք բերում: Օրինակ՝ դիտորդի գիտակցության մեջ փողոցի արտահայտիչ բնութագիրն ունակ է իր վրա կենտրոնացնել որևէ կարևոր գործունեություն: Տարածական յուրահատկությունները մեծացնում են ճանապարհների տեսակները՝ շատ լայն կամ շատ նեղ փողոցներ: Լայնության կամ նեղության նշանակությունը կապված է համընդհանուր մտածելակերպի հետ:

---

[102] **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press, p.19:
[103] Տե՛ս նույն տեղում:

Սահմանները կամ եզրերը միջավայրի գծային տարրերն են, որոնք գտնվում են երկու միջավայրերի հանգույցում և որոնք դիտորդը չի համարում ճանապարհներ: Դրանց են պատկանում ծովափերը, բնակավայրերի եզրերը, պատերը, երկաթգծերը: Չնայած ոչ այնքան ուժգին, ինչպես ճանապարհները, այս տարրերը շատերի համար հանդես են գալիս որպես կարևոր կառուցվածքային հատկանիշներ:

Շրջանները քաղաքի հարաբերականորեն խոշոր մասերն են, որոնք կրում են որոշակի միավորող բնույթ, որտեղ դիտորդը մտովի է ներթափանցում: Շատ մարդիկ այսպես, թե այնպես կարգավորում են քաղաքի շրջանները, և հարցը նրանում է՝ ճանապարհնե՞րը, թե՞ շրջաններն են գերակա տարրեր՝ դա որոշվում է անհատականորեն:

Հանգույցները քաղաքի այն վայրերը կամ ռազմավարական կետերն են, ուր դիտորդը հեշտությամբ կարող է մտնել, այն կենտրոնացված կետերն են, որոնցով նա շարժվում է: Դրանք միավորող օղակներ են, բուռն տրանսպորտային կոմունիկացիոն վայրեր, խաչմերուկներ:

Ուղենիշները քաղաքի այն վայրերն են կամ կետերը, որոնք կարևոր տեղեկատվություն են տալիս դիտորդին: Այդպիսիք են՝ շենքերը, հուշարձանները, նշանները, ցուցափեղկերը և այլն[104]:

Ըստ Ք. Լինչի, մարդու կողմից աշխարհի ընկալման գործընթացը հայտնի է մտային քարտեզ անվանումով: Մտային քարտեզը մարդու անհատական քարտեզն է իր համար ճանաչելի աշխարհի մասին: Այսինքն՝ մարդիկ ստեղծում են միջավայրի ինքնատիպ, կա-

[104] **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press, p. 52:

յուն քարտեզներ քաղաքի վերոնշյալ տարրերի միջոցով, որպեսզի դրանց օգնությամբ հնարավոր լինի պլանավորել իրենց գործունեությունը: Այդպիսի քարտեզը հանդես է գալիս որպես միջավայրի մեր ներքին քարտեզ, որում մենք գոյություն ունենք: Այն յուրաքանչյուրի գլխում է, ըստ դրա մարդը կողմնորոշվում և գործում է, իսկ երբեմն նույնիսկ մոռանում է միջավայրի օբյեկտիվորեն գոյություն ունեցող բնութագրիչների մասին: Գործնականորեն այդպիսի քարտեզը հանդես է գալիս միջավայրի դասավորություն/նախագիծ մարդու գիտակցության մեջ, առանց որի միջավայրը նրանց կողմից կընկալվեր որպես քաոսային և անհետաքրքիր[105]: Երբ խոսքը գնում է քաղաքի հանրային տարածության մասին, ապա մտային քարտեզները ստեղծվում են մեր հիշողության միջոցով՝ կարևոր փողոցների, հրապարակների, տրանսպորտային հանգույցների, ճարտարապետական գերակա տարրերի, այգիների, հայտնի ռեստորանների, հուշարձանների, խանութների, թանգարանների, թատրոնների, կինոթատրոնների տեսքով: Այսպիսով, մարդկանց գիտակցության մեջ կարծես թե գոյություն ունի ևս մի քաղաք: Ք. Լինչը շեշտադրում է ամերիկյան քաղաքների վիզուալ որակները՝ հիմնվելով միջավայրի մտային կերպարի վերլուծության վրա: Ք. Լինչի կարծիքով քաղաքային միջավայրի զարգացման կառավարման հիմնական խնդիր է համարվում շարունակական ճգտումը՝ կատարելագործել շրջապատող միջավայրի որակները, պետք է հասնել միջավայրի հարմոնիկ հարմարավետության, որն այսօր շատ քիչ է հանդիպում:

Մտային քարտեզի տարրերը տարբեր են, այդ թվում դրանք պարունակում են այսպես կոչված «հիշողության վայրեր»: Դա տարածքի սիմվոլիկ կապիտալի քվինտէսենցիան է, որը պարզորոշում է դրա ինքնությունը բնակիչների պատկերացումներում: Այստեղ հարաբե-

[105] Տե՛ս **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press.

բակցվում են սոցիալական հեռավորության երկու էկոլոգիական ձևեր, որոնք հիմնվում են տարածության կառուցվածքի վրա.

1. *Գործընթացները, որոնցով կառուցվում է սոցիալական հեռավորությունը:*
2. *Ռազմավարությունը, որով կրճատվում է այդ հեռավորությունը:*

ՄԱՍ 2.
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ. ՁԵՎԱՎՈՐՈՒՄ, ԸՆԿԱԼՈՒՄ ԵՎ ՍՊԱՌՈՒՄ

Նա տեսել է երևի արևային մի քաղաք...

Ինչպես մաքուր մարմարի կապույտ կողին նկարած Արևային ժամացույց՝ քարտեզն ահա քաղաքի - Պողոտաներ, փողոցներ՝ բոլորաձիգ երկարած, Իսկ կենտրոնում երկնահաս, գրանիտյա մի բազին:

Եղիշե Չարենց

ԳԼՈՒԽ 5.
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայիս Երևանի քաղաքաշինական հյուսվածքը սկսվել է ձևավորվել 17-18-րդ դարերից՝ պարսկական տիրապետության ժամանակներում, իսկ ավելի հստակ, Երևանը քաղաքային կառուցվածք է ստացել 19-րդ դարի երկրորդ կեսից՝ ռուսական կայսրության տիրապետության ժամանակաշրջանում. 1854 թվականին առաջին անգամ մշակվեց Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ձևավորելով այսօրվա Երևանի կենտրոնի ուրվագիծը: Ինչպես Ա. Թամանյանն էր նկատում.

«Անհրաժեշտ է նշել, որ ավել կամ պակաս չափով լուրջ ու պլանաչափ շինարարություն այս տերիտորիայում մինչև այժմ չի եղել: Հայաստանը, որ այն ժամանակ եղել է մեծ պետության լոկ հեռավոր մի գավառ, որևէ լուրջ տեղ չի գրավել նրա պետական շինարարության ընդհանուր պլաններում… Այն ժամանակ կատարված բոլոր աշխատանքները չեն տվել քիչ թե շատ շոշափելի արդյունք Հայաստանի մշակութային/հասարակական շինարարության իմաստով, ընդհակառակը, ամենուրեք զգացվում է լիակատար արհամարհանք ժողովրդի շահերի և ազգային կուլտուրայի հանդեպ»[106]:

1924 թվականին Ա. Թամանյանի կողմից մշակված գլխավոր հատակագիծը սկիզբ դրեց Երևանի քաղաքային տարածության իմաստավորմանը և կառուցվածքայնացմանը. համաձայն Ա. Թամանյանի տեսլականի, «գյուղաքաղաքը» պետք է դառնար «քաղաք», ապա՝ «մայրաքաղաք»: Մայրաքաղաք դառնալու համար

[106] **Таманян А.** (1968). *О планировке гор. Эривани*. «Բանբեր Հայաստանի արխիվների», էջ 28:

Երևանը պետք է ունենար լայն փողոցներ, ընդգծված ճարտարապետական հատկանիշներ, հարուստ կանաչ գոտի: Ճարտարապետի նպատակն էր ստեղծել քաղաք, որը կդառնար ինքնության ճգնաժամ ապրող ազգության վերածննդի դրսևորումը[107]:

Ինչպես Մ. Գասպարյանն է նշում, մինչ այդ Երևանի քաղաքաշինական համակարգը կարելի էր բնութագրել «անկանոն». թաղամասերի կոնֆիգուրացիաների և ոչ ստանդարտ չափերի հիմնական պատճառը կառուցապատման չհամակարգված և ինքնաբուխ ցանցի պահպանումն էր: Երևանում կրոնական կենտրոնները ծառայում էին որպես բնակելի տարածքների գերիշխող համադրություններ, որոնք արտացոլվում էին այգիներում եկեղեցիների և մզկիթների առկայությամբ[108]:

«Քաղաքին հատկացված տարածությունը, - գրում է Ա. Թամանյանը,- մի գեղեցիկ սարահարթ է հյուսիսից-հարավ հավասարաչափ թեքությամբ… արևը կլոր տարին լուսավորում է այն և դրանով նպաստում քաղաքի գեղեցկությանը, քաղաք, որի ծայրամասերը տեղադրված են ամֆիթատրոնաձև, շնորհիվ այն երեք կողմից երիզող սարալանջերի: Ընդհանրապես Երևանի տեղանքը շատ հնարավորություններ է տալիս ստեղծելու քաղաքի համար գեղեցիկ հեռանկարներ. Արարատը, Արագածը, Հրազդանի ձորը, Գետառի գետը և այլն» [109]:

Ա. Թամանյանի քաղաքաշինական նախագիծը դարձավ Երևանի առաջին լեգենդը. նրա սիմվոլիկ նշանակությունը գերազանցում

---

[107] **Епископосян Ш.** (2011). *Семиотическая организация и трансформация городского пространства центра Еревана*. Город, Миграция, Рынок: Новый взгляд на социокультурные проблемы в исследованиях ученых Южного Кавказа, Тбилиси: HBS, ст. 24.

[108] **Гаспарян М.** (2008). *Архтектура Еревана XIX – начала XX века.* Ереван: Изд. “Ушардзан”, ст. 28.

[109] *Ա. Թամանյանի երկու նամակը*: (1969): «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, էջ 125:

էր քաղաքաշինականը[110]: Երևանը դարձավ ազգային վերածննդի և ազգի միավորման սիմվոլը, որպես նաև կենտրոնաձիգ բևեռ, որը միավորում էր աշխարհասփյուռ հայությանը: Ա. Թամանյանը քաղաքի բոլոր ճանապարհները (նոր շինարարություններով, փողոցներով, հրապարակներով) ուղղորդում էր դեպի Արարատ, դեպի ազգային բևեռ[111]:

Այսպիսով, Ա. Թամանյանի առջև հստակ խնդիր էր դրված. մայրաքաղաքի գլխավոր հատակագիծը պետք է արտացոլեր նոր պետության հիմնական գաղափարախոսությունը: Հայաստանի և նրա հնագույն պատմության և մշակույթի համար այդ գաղափարախոսությունը կայանում էր կորցրած ավանդույթների վերածննդի մեջ, ինչի հիման վրա պետք է տեղի ունենար պետության ժամանակակից զարգացումը:

Խորհրդային շրջանում Երևան քաղաքի առաջին գլխավոր հատակագծի մշակման հիմքում, Ա. Թամանյանի նախաձեռնությամբ, օգտագործվել է «քաղաք՝ այգի» սկզբունքը[112], որպես քաղաքաշինության լավագույն օրինակ: Վերոնշյալ սկզբունքի հեղինակը անգլիացի սոցիոլոգ և ուտոպիստ Է. Հովարդն է, ով իր «Ապագայի քաղաք-այգիները» գրքում կառուցում է իդեալական քաղաքի իր հայեցակարգը: Այդ հայեցակարգում, որը մեծ դեր խաղաց 20-րդ դարի քաղաքաշինության զարգացման մեջ, կարևորվում էր «քաղաք-այգու» գաղափարը, որտեղ առաջնայինը համատարած կանաչապատումն է[113]: Քաղաք-այգիների նախագծման հիմքում ընկած է այն

---

[110] **Лурье С., Давтян А.** (2012). *Ереванская цивилизация*. Lap Lambert Academic Publishing, էջ 28:

[111] **Балян К.** (2006). [Онлайн]. *Город, смотрящий на Арарат.* Доступно: http://www.projectclassica.ru/school/18_2006/school2006_18_03a.htm. [Просмотрено 17.09.2015].

[112] **Howard E.** (N.D.). [Online].*Garden cities of tomorrow.* Available from: http://www.library.cornell.edu/Reps/DOCS/howard.htm. [Accessed 24.11.2015].

[113] Տե՛ս նույն տեղում:

գաղափարը, որ քաղաքի կենտրոնում պետք է կենտրոնացված լինեն զբոսայգիներն ու գլխավոր հասարակական ու մշակութային շինությունները:

Է. Հովարդը գտնում էր, որ ժամանակակից կապիտալիստական քաղաքները ծանր հիվանդ են: Զարմանալի չէ, որ նա Լոնդոնն է ընտրել՝ որպես մեգաքաղաք, և հենց այդպիսի «հիվանդ» քաղաքի վրա փորձարկել իր հայեցակարգը: Ըստ Է. Հովարդի, խնդրի լուծման համար մարդկանց պետք էր այնպիսի պայմաններ առաջարկել, որոնք թույլ կտային համատեղել գյուղի և քաղաքի լավագույն ասպեկտները, հատկացված տարածքի փոքր մասը պետք է կառուցապատվեր, իսկ մնացած տարածությունը զբաղեցնելու էին կանաչապատ գոտիները: Քաղաքում արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը այնպես պետք է իրականանար, որպեսզի մարդիկ կարողանային ապրել իրենց աշխատավայրին մոտ՝ միևնույն ժամանակ չկտրվելով բնական միջավայրից[114]:

Այսպիսով, քաղաքը ամփոփ է և բավականաչափ բնակեցված, որտեղ մարդկանց մեծ մասը զբաղվում է ոչ գյուղական գործունեությամբ: Եվ, միևնույն ժամանակ, այգին խորհրդանշում է այն, որ քաղաքի մարդկանց կյանքն անցնում է ոչ թե «քարերի աշխարհում», այլ բարեկիրթ բնական միջավայրում:

Հիմնվելով այս սկզբունքի վրա, Ա. Թամանյանը քաղաքը բաժանում է մի շարք գոտիների՝ *վարչական, մշակութային, կրթական, թանգարանային, արդյունաբերական, բնակելի և ժամանցային:* Գոտիները կապված էին միմյանց հետ, ինչպես նաև ամենակարճ ճանապարհով կապվում էին վարչական կենտրոնի հետ, որը քաղաքի կենտրոնական տարածքն էր զբաղեցնում:

---

[114] Տե՛ս **Howard E.** (N.D.). [Online].*Garden cities of tomorrow.* Available from: http://www.library.cornell.edu/Reps/DOCS/howard.htm. [Accessed 24.11.2015]:

Ելնելով շրջապատի պայմաններից և մայրուղիների՝ գոյություն ունեցող համակարգից՝ Ա. Թամանյանի կողմից ընդունվեց պլանավորման արմատական օղակաձև համակարգ: Քաղաքի կենտրոնական միջուկը ուրվագծվում էր պուրակային օղակով: Սակայն, պետք է նշել, որ այստեղ քաղաք-այգին բավականին պայմանական բնույթ է կրում: Ինչպես Շ. Եպիսկոպոսյանն է նշում, Ա. Թամանյանի կողմից մշակված Երևանի նախագիծը բացի ընդհանուր անվանումից և մի քանի ոչ ամբողջական օղակաձև փողոցներից, ոչ մի ընդհանրություն չունի Է. Հովարդի սոցիալ-հեղափոխական գաղափարների հետ[115]:

Վարչական գոտու կենտրոնը Հանրապետության (նախկինում՝ Լենինի) հրապարակն էր, որտեղ նախատեսվում էր խմբավորել վարչական շենքերը: Երևանի գլխավոր հատակագծով նախատեսվում էր կենտրոնի կազմակերպումը երեք հրապարակի համակարգով (ներկայիս՝ Ազատության, Հանրապետության և Շահումյանի), որոնք տարածական կապ էին ստեղծելու: Հրապարակների այս համակարգում գլխավոր դերը կատարում էր Հանրապետության հրապարակը, որը գտնվում էր հատակագծի հիմնական առանցքների հատման վայրում: Բացի քաղաքաշինական-ֆունկցիոնալ նշանակությունից հրապարակը ծառայելու էր նաև որպես տրանսպորտային հանգույց: Հանրապետության հրապարակը զբոսայգու և երկու փողոցների միջոցով կապվում էր Շահումյանի հրապարակի հետ: Իսկ Ազատության (նախկինում՝ Թատերական) հրապարակը Հանրապետության հրապարակի հետ կապվում է Հյուսիսային պողոտայով[116]:

---

[115] **Епископосян Ш.** (2011). *Семиотическая организация и трансформация городского пространства центра Еревана*. Город, Миграция, Рынок: Новый взгляд на социокультурные проблемы в исследованиях ученых Южного Кавказа, Тбилиси: HBS, ст. 25.

[116] **Պետրոսյան Ա.** (2007-2010). [Առցանց]. *Հյուսիսային պողոտա /դիտարկումներ Ալ. Թամանյանի քաղաքաշինական ծրագրերի վերաբերյալ.* Հասանելի է http://araycho.blogspot.am/2010/03/blog-post_15.html. [Դիտված 07.05.2015].



Նկար 5.1 Երևանի գլխավոր հատակագիծ, 1932 թ., հեղինակ՝ Ա. Թամանյան

Յուրաքանչյուր քաղաքի պլանավորման հիմքերը, նախ և առաջ, դրսևորվում են քաղաքի «մարմնի» և երկնքի միջև առկա սահմանի միջոցով: Ամերիկացի քննադատ Պ. Ցուկերը նշում է, որ կախված այդ սահմանի բնույթից նույնիսկ երկինքը շարժական է: Նա գրում է.

> *«Որոշակի բարդրության սուբյեկտիվ զգացողություններերը արդյունք են հարակից շենքերի բարձրությունների և մայթերի լայնության խաղի: Եվ ինչքան նեղ է մայթերի, հրապարակների լայնությունը, այնքան ավելի ակնհայտ է հարակից շենքերի բարձրությունը զգացվում, իսկ լայն հրապարակներում երկնքի տեսողական բարձրությունը ավելի թույլ է դրսևորվում»*[117]*:*

Այս տեսանկյունից ճարտարապետ Կ. Բալյանն է նշում.

> *«Երբ մենք սկսեցինք կառուցել էժանագին բարձրահարկ շենքեր, մենք խախտեցինք այն հասարակ օրենքները, որոնք Ա. Թամանյանը դրել էր իդեալական Երևանի հիմքում: Այդպես 1970-ականներին ի հայտ եկան ինքնակոչ երկնաքերերը: Սակայն ի համեմատ այսօրվա հրեշների դրանք կարծես գեղեցիկ ծաղիկներ լինեն: Իսկ մեզ դեռ առաջարկում են Երևան-Սիթի, որը կարծես ցանկապատ լինի Արարատի տեսանելիությունը փակող: Իսկ Երևանի հիմնական գաղափարն էր՝ ֆգտել դեպի*

[117] **Гутнов А., Глазычев В.** (1990). [Онлайн]. *Мир архитектуры. Лицо города.* Доступно: http://www.glazychev.ru/books/mir_architectury/glava_7/glava_07-04.htm. [Просмотрено 04.03.2015].

Արարատը: Երևանի ուղղահայացությունը Արարատն է»[118]:

Նախապես Ա. Թամանյանը նախատեսել էր նախագծել քաղաքի իր գաղափարը, որը կունենար 150.000 բնակչություն, սակայն նրանից պահանջում էին ավելի մեծ քաղաք ստեղծել, որը կունենար 500.000 բնակչություն, իսկ 1970-ական թվականներին մեկ միլիոն բնակչություն: Տարածքային փոփոխությունները լավագույնս արտացոլված են Երևանի գլխավոր հատակագծում, որը կազմման շրջանից ի վեր անցել է փոփոխման որոշ փուլեր՝

- Երևանի գլխավոր հատակագիծը 150 հազար բնակչի համար կազմել է Ա. Թամանյանը, որը հաստատվել է ՀՍՍՀ Ժողկոմխորհի կողմից 1924 թվականին: Հատակագիծն իր մեջ ներառում էր սոցիալիստական քաղաքի՝ «քաղաք-այգի» սկզբունքը. քաղաքը ծավալվում էր կենտրոնից դեպի ծայրամասեր՝ ունենալով շրջանաձև այգու տեսք:
- 1934 թվականին Թամանյանը սկսել է մշակել «Մեծ Երևանի» հատակագիծը 500 հազար բնակչի համար, որը սակայն մնացել է անավարտ: 450 հազար բնակչի համար նախատեսված հատակագիծը մշակվել է ճարտարապետների խմբի կողմից (Ի. Մալոզյոմով, Ս. Կլեվիցկի, Ն. Զագորյան և այլք), որն ընդգրկում էր առաջին հատակագիծը՝ ընդլայնված տարածքով:
- 1951 թվականին ավարտին է հասցվում երրորդ հատակագիծը, որը ուշադրություն չէր դարձնում քաղաքի կենտրոնական հատվածին՝ ֆիքսվելով նոր տարածքների ներառման վրա:
- 1961 թվականին «Երևաննախագիծ» ինստիտուտի կողմից («Գիպրոգորի» ինստիտուտի մասնագետների մասնակցությամբ)

---

[118] **Балян К.** (2007). [Онлайн]. *Ереван. Фрагменты.* Доступно: http://elektra186.livejournal.com/296490.html?thread=2420778. [Просмотрено 17.09.2015].

մշակվեց քաղաքի մինչև 2000 թվականի զարգացման գլխավոր հատակագծի տեխնիկատնտեսական հիմնավորումը, որի հիման վրա կազմվեց նոր գլխավոր հատակագիծը (հեղինակներ՝ Մ. Մազմանյան, Է. Պապյան, Գ. Մուրզա, Ց. Չախալյան և ուրիշներ):

- Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման նախավերջին գլխավոր հատակագիծը մշակվել է 1971 թվականին, կենտրոնի մանրամասն հատակագծման նախագիծը՝ 1984 թվականին:
- Նոր՝ 2005-2020 թվականների հատակագիծը տարբերվում է նախորդ մշակվածներից քաղաքաշինական փաստաթղթի կարգավիճակով և բարձրացված խնդիրների բնույթով ու մշակման մեթոդիկայով[119]:

Հարկ է նշել, որ 1978 թվականին, երբ ծնվեց Երևանի միլիոներորդ բնակիչը, Երևանի բնակչությունը Հայաստանի ամբողջ բնակչության մեծամասնությունն էր կազմում, և հենց այս անհավասարակշռությունը դարձավ Երևանի բազմաբնույթ խնդիրների առաջացման հիմքը: Քաղաքի բնակչությունն աճեց և, հետևաբար, մեծացավ տարածությունը: Քաղաքային տարածության աճը, իհարկե, տեղի էր ունենում ոչ բավարար զարգացած ենթակառուցվածքների պայմաններում: Քաղաքի բնակչության ոչ բնական աճը բերեց բնակավայրերի ճգնաժամի, խմելու ջրի, կանաչապատման, մաքուր օդի բացակայության: Ստանդարտ շենքերի կառուցումը բերեց քաղաքի պատմական պատկերի խախտմանը, բարձրահարկ շենքերի շինարարությունը՝ ուրվագծի խախտմանը: Մասնավորապես, քաղաքաշինական հյուսվածքի ոչնչացման գործընթացը ավելի ակնհայտ երևում էր քաղաքի կենտրոնում, որտեղ 1960-70-ական թվականնե-

---

[119] **Մամյան Զ.** [Առցանց]. *Երևան քաղաքի հատակագծային զարգացումները գլխավոր հատակագծերում.* Հասանելի է E- Journal № 5, http://www.rcchd.icomos.org.ge/?l=E&m=4-4&JID=5&AID=38&l2, [Դիտված 14.01.2016]:

ին օղակաձև այգում և Աբովյան փողոցում տեղի ունեցան փոփոխություններ: Փորձելով դիմակայել 1980-ական թվականների տեխնոկրատացմանը, որոշ ճարտարապետներ փորձում էին հասարակության և իշխանությունների ուշադրությունը հրավիրել 19-20-րդ դարերում կառուցված երևանյան հին շենքերի պահպանման խնդրին (այսպես կոչված՝ հին տներին, որոնց տուֆի գույնը սև էր):

1970-80-ական թվականներին ճարտարապետները ակտիվ քննարկում էին կենտրոնական հրապարակում գտնվող ազգային պատկերասրահի բազմահարկ կառույցի քանդման նախագիծը, քանի որ այն չէր մտնում թամանյանական նախագծի մեջ: Արդյունքում, սակայն, շենքը չքանդվեց, քանի որ, հաշվի առնելով երկրի աղքատ վիճակը, անթույլատրելի էր ոչնչացնել նմանատիպ կառույցներ[120]:

Բացի այդ, պետական մակարդակով գործողություններ էին իրականացվում Երևանի կենտրոնի պատմական տեսքի պահպանման համար: Ըստ 2013 թվականի ՀՀ կառավարության կողմից ընդունված «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի հայեցակարգի[121] անհրաժեշտ էր իրավական հենքի ստեղծման միջոցով նախանշել մայրաքաղաքի զարգացման գործընթացում Երևանի փոքր կենտրոնի բարձրարժեք ճարտարապետական կերպարի միասնականության, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործման, առողջ և գրավիչ կենսամիջավայրի ձևավորման կարևորությունը[122]:

---

[120] **Епископосян Ш.** (2011). *Семиотическая организация и трансформация городского пространства центра Еревана*. Город, Миграция, Рынок: Новый взгляд на социокультурные проблемы в исследованиях ученых Южного Кавказа, Тбилиси: HBS, ст. 23:

[121] *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն.* ՀՈԴՎԱԾ 33.2:

[122] *«Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.* Հավելված ՀՀ կառավորության 2013 թ. մարտի 7-ի նիստի № 9 արձանագրային որոշման:

Ամփոփելով, կարելի է նշել, որ թամանյանական նախագծում Երևանի կառուցապատման մեջ մեծ դեր է խաղացել հանրային տարածության ձևավորումը (հրապարակների, շենքերի՝ ֆունկցիոնալ իմաստավորմամբ, փողոցների, այգիների տեսքով), որը հիմք կդառնար անկախության, ժողովրդավարության, ազգային ավանդույթների, ազգի միավորման և պատմական հայրենիքի վերամիավորման գործում: Ինչպես նկատում է Ծ. Եպիսկոպոսյանը, ժամանակի ընթացքում քաղաքի ազգային գաղափարախոսությունը փոխարինվեց տոտալիտար, հետագայում՝ տեխնոկրատական գաղափարախոսությամբ: Այսօրվա քաղաքի գաղափարախոսությունը կարելի է համարել սպառողական[123]: Հենց այդպես է բնութագրվում այն հասարակությունը, որն առաջացել է կապիտալիզմի զարգացման արդյունքում՝ ուղեկցվելով տնտեսական և տեխնիկական արագ զարգացումներով և սոցիալական փոփոխություններով[124]:

Իհարկե, հնարավոր չէ զերծ մնալ «աշխարհի» զարգացումներից. իրար փոխարինող, կամ միահյուսված գաղափարախոսությունների ազդեցություններից մասնավորապես՝ հանրային տարածության վրա, սակայն հնարավոր է դրանք օգտագործել քաղաքը նորովի, «թարմացված» ներկայացնելու և միևնույն ժամանակ հիմնային ուրվագիծը չկորցնելու համար: Հակառակ դեպքում, կբախվենք անդեմ, անճանաչելի, ինքնությունը կորցրած Երևանի: Ինչ որ առումով, քաղաքում միայն լոկալ (ոչ կոլեկտիվ) ինքնությունների դիտարկման հնարավորությունն արդեն իսկ վկայում է այն մասին, որ քաղաքը կորցրել է իր սիմվոլիկ հավաքականությունը:

---

[123] **Baudrillard J.** (1998). *The Consumer Society: Myths and Structures*. Sage.

[124] **Епископосян Ш.** (2011). *Семиотическая организация и трансформация городского пространства центра Еревана*. Город, Миграция, Рынок: Новый взгляд на социокультурные проблемы в исследованиях ученых Южного Кавказа, Тбилиси: HBS, ст. 25.

ԳԼՈՒԽ 6.
ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Երևանի քաղաքային տարածության զարգացման համատեքստում կարևոր է վերհանել քաղաքի բնակարանային ֆոնդի բաշխման, բնակտարածության ձևավորման և փոփոխման առանձնահատկությունները: Դա հատկապես դիտարկելի է արխիվային տվյալների վերլուծության և քաղաքային կենսափորձը ընդհանրացնող առօրյա լոկալ պրակտիկաների և դրանց վերաբերյալ երևանաբնակների ընկալումների ուսումնասիրության ճանապարհով:

Ըստ ՄԱԿ-ի իրականացրած ուսումնասիրության[125], 2002 թվականին Երևան քաղաքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 18.787 հզ. քառ.մ. էր: Սակայն այս բնակտարածությունը ժամանակի ընթացքում ենթարկվել է բազում փոփոխությունների՝ տարբեր ժամանակներում աչքի ընկնելով ծավալի և կազմի վերափոխումներով: Այդ փոփոխությունները պայմանավորված են եղել առանձին իրադարձություններով, ընդհանուր կառուցվածքային փոփոխություններով, ընդունված օրենքներով և այլն:

Սովետական ճարտարապետությունը և քաղաքաշինությունը ուսումնասիրող Մ. Մերովիչը նշում է, որ խորհրդային ճարտարապետությունը մեծ մասամբ թելադրված էր ղեկավար մարմինների կողմից: Արդյունքում, չի կարելի ուսումնասիրել խորհրդային ճարտարապետությունը՝ հիմնվելով էսթետիկ հայացքների, ճարտարապետական մտածողության վրա և չնկատել դրանում իշխանության, առ-

[125] *Բնակարանային ֆոնդի նկարագրերն ըստ երկրների. Հայաստան.* (2004). Միացյալ ազգերի կազմակերպություն, Ժնեվ, Շվեյցարիա:

կա գաղափարախոսության նպատակաուղղված ազդեցությունը[126]: Տեղի ունեցած բոլոր քաղաքական փոփոխությունները անմիջապես ստանում էին իրենց արտահայտումը ճարտարապետության մեջ:

1950-ական թվականներին ստալինյան կոնստրուկտիվիզմի ճարտարապետությանը գալիս է փոխարինելու խրուշչովյան տիպային ճարտարապետությունը, որը որոշակի փոփոխություններով գոյություն է ունեցել մինչ խորհրդային շրջանի փլուզումը: Ի. Ստալինի մահվանից հետո անհրաժեշտություն է առաջանում մեծացնել շինարարության տեմպերը և դարձնել այն տնտեսապես ավելի մատչելի: Այս առումով կարևոր իրադարձություն էր 1955 թվականին ԽՄԿԿ կենտկոմի ընդունած *«Նախագծման և շինարարության մեջ ավելորդությունների վերացման մասին»* որոշումը, որով կտրուկ փոփոխություն է տեղի ունենում քաղաքաշինության մեջ: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների՝ բազմաբնակարան շենքերի մեծ մասը (52%) Երևանում կառուցվել են 1960-80 թվականների ընթացքում[127]:

ՀՀ ազգային արխիվի *«Շենքերի պետական շահագործման հանձնման ակտերից»*[128] դուրս բերված տեղեկությունը թույլ է տալիս դիտարկել 1949-1995 թթ. Երևան քաղաքում շահագործման հանձնված շենքերի քանակի դինամիկ շարքը.

---

[126] **Меерович М. Г.** [Онлайн]. *Политическая история советской архитектуры и градостроительства.* Доступно: http://archi.ru/lib/publication.html?id=1850569830. [Просмотрено 08.05.2013].

[127] Հայաստան: (2004): *Բնակարանային ֆոնդի նկարագրերն ըստ երկրների.* Միացյալ ազգերի կազմակերպություն, Ժնեվ, Շվեյցարիա:

[128] ՀՀ ազգային արխիվ, ֆոնդ N 112, գործ N 3, 5, 9.

Գրաֆիկ 6.1.

Շահագործման հանձնված բնակարանների դինամիկ շարք



**1961 թվականի արխիվային փաստաթղթերը ոչ ամբողջական են, իսկ 1969 և 1970 թվականներինը՝ գտնված չեն*

Ըստ վիճակագրական տվյալների՝ նոր շինարարությունը շեշտակիորեն նվազել է 1990-ական թվականների սկզբներից ի վեր. 2001 թվականին այն կազմում էր 1991 թվականի ծավալների միայն մեկ տասներորդը: Հայաստանի բնակարանային սեկտորի վրա ազդեցություն ունեցած իրադարձությունների շարքում կարելի է առանձնացնել Խորհրդային Միության փլուզումը, 1988 թվականի Սպիտակի երկրաշարժը: Տնտեսական պայմանների համընդհանուր վատթարացման հետևանքով բնակարանային շինարարության տարեկան տեմպերը շեշտակիորեն նվազել են, և բազմաթիվ բնակարաններ մնացել են անավարտ: Սրա մասին են փաստում վիճակագրական տվյալները.

Աղյուսակ 6.1

Շահագործման հանձնված բնակմակերեսը՝ ըստ տարիների[129]

	1990	**1991**	**1992**	**1993**	**1994**	**1995**
Ընդ. (հզ.ք. մ)	1460	1909	360	370	305	330
1996	**1997**	**1998**	**1999**	**2000**	**2001**	**2002**
174	262	302	200	194	195	285

[129] Հայաստան: (2004): *Բնակարանային ֆոնդի նկարագրերն ըստ երկրների.* Միացյալ ազգերի կազմակերպություն, Շվեյցարիա:

Խորհրդային շրջանում բնակարանային ֆոնդը դասակարգում էր 4 կատեգորիաների՝ ***պետական բնակարաններ, հանրային ֆոնդ, կոոպերատիվների բնակարաններ և առանձնատներ***[130]**:** Բնակ-բաշխման գործընթացը կոորդինացնում էին շրջանային խորհուրդ-ները. յուրաքանչյուր տարի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեները նիստեր էին գումարում, որոնց ժամանակ որոշվում էր բնակարանային շինարարության և բաշխման տարեկան պլանը: 1957 թվականի հուլիսին կառավարությունը հաստատեց օրենսդրական որոշում՝ մեծացնելու շրջանային խորհուրդներին պատկանող բնակարանային ֆոնդի մասնաբաժինը: Հրամանագիրը պարտադիր դարձրեց կառուցողների հետ պայմանագիր կնքելը՝ միևնույն ժամանակ համաձայնեցնելով այն պետական սեկտորի հետ[131]:

Շինարարության աճի տեսանկյունից կարևոր իրադարձություն կարելի է համարել նաև Երևանի միլիոներորդ բնակչի ծնունդը 1978 թվականի նոյեմբերի 29-ին[132], ինչը հնարավորություն է տալիս Երևանին ունենալ մետրոպոլիտեն: Բնակչության աճը միևնույն ժամանակ առաջ բերեց 5 հարկանի շենքերի փոխարեն 9 հարկանի շենքեր կառուցելու անհրաժեշտություն:

Բնակչության թվի ավելացումը խթանում էր շինարարության ծավալների մեծացումը: Աճող շինարարությունը ապահովվում էր ոչ միայն Կենտրոնական գործադիր կոմիտեի, այլև մեծ արդյունաբերական վարչությունների Կապիտալ շինարարության վարչությունների կողմից: Յուրաքանչյուր վարչության տրվում էր որոշակի տարածք, որում կառուցվում էին բնակարաններ տվյալ գործարանի աշ-

---

130 *Բնակարանային օրենսգիրք,* հոդված 3. [Առցանց]: Հասանելի է http://www.irtek.am/views/act.aspx?aid=323&m=%27%27&sc: [Դիտված 01.09.2015]:

131 **Andrusz G. D.,** (1984), Housing and Urban Development in USSR, Albany: State University of New York Press, p. 49.

132 *Երևանի տարեգրությունը* (2009), Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան:

խատակիցների համար[133]: Սա իր հերթին առաջ էր բերում նույն թաղամասում և/կամ շենքում նույն խավի ներկայացուցիչների տեղայնացում: Այսպես, շատ թաղամասեր, շենքեր Երևանում համարվում էին բանվորական թաղամասեր, որոնք ստեղծվել էին գործարանների աշխատակիցներին բնակարանով ապահովելու նպատակով:

Այլ տարբերակ էր շինարարական կոոպերատիվների կողմից կառուցված բնակարանները, որոնք 1980-ական թվականների երկրորդ կեսին շրջանային խորհուրդների կողմից ստացան խոշոր աջակցություն[134]:

Առանցքային իրադարձություն էր 1993 թվականին ընդունված *«ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը*[135], որի համաձայն քաղաքաբնակները պետք է վճարեին մինիմալ աշխատավարձի 1 ամսվա չափով գումար և դառնային սեփականատեր: Այս գործընթացի արդյունքում բնակարանների 96%-ը դարձավ սեփականաշնորհված[136]: 1989 թվականին պետությունը սկսեց թույլ տալ բնակիչներին գնել իրենց բնակարանները պետությունից պաշտոնապես սահմանված արժեքով:

Այս գործընթացի առնչությամբ 1995 թվականի մայիսի 30-ին ընդունվեց օրենք, համաձայն որի կառավարությունը հրամայում էր տարածքային միավորումներին ստեղծել համապատասխան կառավարական միավորներ՝ համատիրություններ այն բոլոր տարածքնե-

---

[133] **Andrusz G. D.,** (1984), Housing and Urban Development in USSR, USA, p. 53.

[134] **Gentile M.** (2013) *Housing allocation under socialism: the Soviet case revisited*. Post-Soviet Affairs, Vol. 29, No.2, pp. 173-195.

[135] *ՀՀ օրենք ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին*: [Առցանց]: Հասանելի է http://parliament.am/legislation.php?sel=show&ID=2565. [Դիտված 22.12.2015]:

[136] **Sargsyan T.** (2013), Residental enviromental conditions on housing estates in Yerevan, Hungarian Geographical Bulletin 62, pp. 121-130.

ռում, ուր բնակարանների առնվազն 50%-ը սեփականաշնորհված էր՝ գործընթացը ավարտին հասցնելու և կոորդինացնելու նպատակով[137]:

Արխիվային տվյալների[138] վերլուծությունը թույլ տվեց դուրս բերել բնակարանների միջին ծավալը Երևանում: Այսպես, Երևանում մեկ սենյականոց բնակարանի միջին մեծությունը 40 քառ.մ. (բնակելի մակերեսի միջինը 19 քառ.մ.) է, երկու սենյականոց բնակարանինը՝ 57 քառ.մ. (բնակելի մակերեսի միջինը 32 քառ.մ.), երեք սենյականոցինը՝ 70 քառ.մ. (բնակելի մակերեսի միջինը 43 քառ.մ.), իսկ երեքից ավելի սենյականոց բնակարանինը՝ 95 քառ.մ. (բնակելի մակերեսի միջինը 53 քառ.մ.):

Առկա արխիվային տվյալների համաձայն՝ մեկ շնչին բաժին հասնող բնակելի մակերեսի միջին թիվը 1960-1985 թվականներին 9.2 քառ.մ. է: Այդ թիվը փոփոխության է ենթարկվել տարիների ընթացքում, և մեկ շնչին հասնող միջին տարածքի աստիճանական աճ է նկատվել:

Աղյուսակ 6.2.

Մեկ շնչին բաժին հասնող բնակմակերեսը՝ ըստ տարիների

1960	1965	1970	1975	1980	1985
7.22	7.44	8.29	9.59	10.07	12.5

Արխիվային վերլուծությունը պարունակում է տվյալներ նաև հերթագրված ցուցակների, մասնավորապես՝ հերթի մեջ գտնվելու ժամանակահատվածի մասին: 1960-1990 թվականների ընթացքում բնակարան հատկացված քաղաքաբնակների՝ հերթագրված լինելու ժամկետը միջինում 5 տարի 9 ամիս է:

---

[137] **Vanoyan M.** (2004), *Housing Policy In Armenia, Condominium Activity.* Working Paper № 04/10.

[138] Տե՛ս ՀՀ ազգային արխիվ, Շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների նիստերի արձանագրություններ:

Բնակարանի հատկացման հիմնավորումների շարքում կարելի է գտնել՝ ապրելու վատ պայմաններով, հիվանդությամբ, աճող ընտանիք լինելով, ամուսնալուծությամբ, կատարած լավ աշխատանքով, պատերազմի վետերան լինելով պայմանավորված իրավիճակների նկարագրություն:

Այս ամենը նաև տալիս է հնարավորություն հասկանալու ընդհանուր գործընթացի կազմակերպումը: Նկարագրված օրենսդրական կարգավորումները, բնակարանային ֆոնդի բաշխումը ազդեցություն են ունեցել բնակտարածության փոփոխությունների վրա, սակայն պետական մեխանիզմներից զատ կային նաև անհատական ռազմավարություններ, որոնք ևս ազդում են բնակտարածության վերարտադրության և փոփոխության վրա:

Խորհրդային և հետխորհրդային Երևանում բնակտարածության վերափոխման անհատական մեխանիզմները իրականացված խորին հարցազրույցների ժամանակ քննարկվել են մի քանի ասպեկտով՝ բնակարանի ստացումը, դրա իմաստավորումը, հարմարման գործընթացը, գրավչության ընկալումը, բնակտարածության փոփոխության ռազմավարությունները, բնակիչների կազմի փոփոխությունները:

Բնակարանի ստացման գործընթացը խորհրդային շրջանում կարգավորվում էր օրենսդրական ակտով, որի միջոցով կարելի է հասկանալ ժամանակաշրջանի նկարագիրը.

> *«... Բարդություններ չեն եղել բնակարան ստանալուց, սովետական շրջանում հիմնականում բարդություններ չէին լինում»;*
>
> *«... Մարդը երրորդ համարն էր տուն չէր ստանում, նախավերջին համարը ստանում էր: Բնակֆոնդի վրա արհկոմների պետերը, տնօրենները*

ի՞նչ փող էին աշխատում՝ միլիոններ էին աշխատում, համատարած էր»:

Ստեղծված էր որոշակի գաղափարախոսական իրավիճակ, որ ԽՍՀՄ-ը ստեղծվել է հավասարության հիմքով՝ *«բանվորի անունով»* և այն ամենը, ինչ արվում էր, արդեն գիտակցված անօրինականությունները, ընկալվում էին որպես *«չափավոր»:*

Անկախության հռչակումը այս առումով առանցքային էր անօրինականությունների չափի և քանակի տեսանկյունից. էական դեր խաղացին նաև պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին ՀՀ օրենքով առաջարկվող պայմանները և ստեղծված իրավիճակը.

«..Գալիս առնում էին սեփական տունը, ու դիմում օրգաններին, որ ուզում են քսան հարկանի շենք կառուցեն, ու քանի որ անտերություն էր, ասում էին՝ էհ հա կառուցի, որովհետև բոլորն էլ իրար ափպեր էին: Սովետի ժամանակ էդքան ուժեղ չէր, ասում էին ուզում ես կառուցես, էսքան տեղը շենք տալիս, գնա էսքան տեղը ազատ ա, ըտեղ կառուցի, ոչ մեկին չի խանգարում»:

Դիտարկելով նոր բնակարանում հարմարման գործընթացը՝ պարզ է դառնում, որ այն էականորեն պայմանավորված է նախկին ապրելավայրի և նոր բնակարանի մասին պատկերացումներով: Այս իմաստով Պ. Բուրդյեն մեկնաբանում էր բնակարանում ներդրումները տնային տնտեսության ստեղծման և տարածքում արմատավորվելու տեսանկյունից: Նա նշում էր, որ կառուցման նախագիծը մշտապես ասոցացվում է նորի ստեղծման հետ. նորը այստեղ ոչ միայն տարածքն է, այլև հարազատական կապը, համագոյության եզրերը՝

նոր փոխհարաբերությունների, դրվածքի ձևավորումն ու սկզբնավորումը[139].

«..Էրեխեքս կնքված չէին, որ եկանք էս բնակարան, կնքեցինք»;

կամ

«..Մեր տնով չբավարարվեցինք, մի սեղան էլ դիմացի հարևանի տանը քցեցինք»:

Նոր բնակարանի ստացումը մշտապես ուղեկցվում է ապրելակերպի փոփոխմամբ.

«..Մեր ունեցած կահույքը կամ ավելի թանկարժեք ապրանքները պահոցի նման դրել էինք մի ուրիշ տեղ չէինք օգտագործում, չէինք վայելում, ու երբ ստացանք էս բնակարանը, բերեցինք սկսեցինք վայելել, առնում կուտակում էինք մինչ էտ»:

Այն դեպքում, երբ բնակիչները տեղափոխվում էին ոչ իրենց կամքով (օրինակ՝ նախկին տունը քանդելու փոխարեն), նոր տանը հարմարման գործընթացը ուղեկցվում է դժվարություններով՝ սպասումների ֆրուստրացիայով:

Այստեղ հատկանշական է տվյալ տարածքում հնաբնակների դերը. եթե տվյալ տարածքում նախկինում եղած շենքի տեղում է կառուցվել նոր շենքը և առկա են հնաբնակներ, առաջանում է որոշակի տարբերակում, ինչը հնարավոր է մեկնաբանել ըստ Ն. Էլիասի: Միջխմբային դիսկրիմինացիան այստեղ առաջանում է զուտ տվյալ տարածքում ապրելու տևողությամբ պայմանավորված[140].

---

[139] **Bourdieu P.** (2005). *The Social Structures of the Economy.* Cambridge: Polity Press, pp. 15-89.

[140] **Elias N.** (1994), The Established and the Outsiders, London: Sage.

«..Մեր շենքում կային «ասվայենցիներ», ում տունը հենց ստեղ էր եղել, իրանք էին իսկական արաբկիրցիները»:

Ժամանակաշրջանը թելադրում էր գիտակցում, որ հարմարումը նոր վայրում ցանկացած դեպքում ժամանակ էր պահանջում, սակայն այստեղ էական է այն, թե կա արդյոք մինչ քեզ այդտեղ ապրող: Նոր բնակարան ստանալիս, եթե շենքը նոր է շահագործման հանձնվել, ապա «խաղի կանոնները» բոլորն էին սահմանում, մինչդեռ հետխորհրդային շրջանում յուրաքանչյուր նոր բնակիչ հանդիպում է հնաբնակի:

Նկատելի են նաև բնակարանային գրավչության փոփոխություններ. հիմնական չափորոշիչները, որոնցով տարանջատվում է գրավիչ տունը մեծ տարածքն է, կոմունալ հարմարությունները, ենթակառուցվածքային միավորներին (տրանսպորտ, խանութ, դպրոց, մանկապարտեզ) մոտիկ և հասանելի լինելը, բարձր առաստաղները, լայն միջանցքները, երկկողմանի պատշգամբը, ճիշտ ինժեներական նախագծումը, բնակարանի հարկը: Բակում պետք է լինի խաղահրապարակ, կանաչապատ լինի, ունենա մեծ տարածք, լինի ուղիղ: Միակ գործոնն այս համատեքստում, որ փոխել հնարավոր չէ, աշխարհագրական դիրքն է, ինչը և փաստում է քաղաքը որպես կառուցվածք դիտարկելու Պ. Բուրդյեի մոտեցումը ստրուկտուրալիստական կոնստրուկտիվիզմի շրջանակներում:

Ապրելավայրում ճաշակի դրսևորման հնարավորությունները ևս տարբեր են ԽՍՀՄ-ից առաջ և հետո: Առաջին հերթին փոփոխության է ենթարկվում շինարարության գաղափարը.

«Ստանդարտ նախագծեր էին, էս ա գծված, ստեղ էլ պետքա ապրես: Էտ հիմա են սարքելուց բարդշրահարկ շենքը կանչում հարցնում՝ ոնց ես ու-

զում: Ու դու քո ճաշակով քո եղածի չափով ոնց, ինչ ուզում ես արա»:

Բացի այս, այստեղ հետաքրքիր է առկա մտածողությունը, որ

«..Մարդիկ էլ կային եթե տուն էին ստանում, ֆրի էր, գնում ապրում էին»:

Եթե խորհրդային շրջանում բնակարանը ապրելավայր էր, ապա հետխորհրդային շրջանում ընդգծվեց դրա՝ ինքնաներկայացման միջոց լինելը:

Խորհրդային ժամանակաշրջանում՝ հատկապես խրուշչովյան շրջանում, շեշտը դրված էր արագ կառուցման վրա՝ հաշվի առնելով այն, որ Երևանում մասնավորապես ավելանում էր բնակչությունը, շահագործման էին հանձնվում նոր գործարաններ և անհրաժեշտ էր բնակատեղով ապահովել դրանցում աշխատողներին: Շինարարությունը այս շրջանում կենտրոնացած էր քանակի, ոչ որակի վրա: Այդ ժամանակաշրջանում բնակարանի ստացումը ենթադրում էր.

«..միանգամից վերանորոգում, որովհետև էն ինչ հանձնում էին մեզ՝ կիսաֆաբրիկատ էր»:

«Չափավոր» անօրինականությունների դրսևորումներից էր բնակարանի փոփոխությունների ընդունելի լինելը.

«..Մի 80 սմ, որ առաջ էիր գնում, ոչ մեկ բան չէր ասի: Ժէկը փոքր մաղարիչ էր վերցնում ու թողնում: Լինում էր, որ մենակ դու առաջ տված չէիր լինում, կասեր՝ բա չես ուզում առաջ տաս, հավասարվես»:

Բնակարանում փոփոխությունների իրականացումը մի քանի իմաստավորում ուներ: Նախ այն մեկնաբանվում էր ժամանակի ընթացքում ընտանիքի կազմի մեծացմամբ և հարմարավետության ստեղծման ձգտումով. երբ յուրաքանչյուրին հասնող բնակմակերեսի ծավալը փոքրանում է, նոր տարածքի անհրաժեշտություն է առաջա-

նում: Այնուամենայնիվ, հատկանշական է նաև այն, որ քաղաքաբնակների կողմից փոփոխություններ իրականացվում էին նաև տեղափոխման ժամանակ, երբ դեռևս դժվար է դատել հարմարավետության մասին, իսկ բնակմակերեսն իր հերթին հատկացվում էր տնային տնտեսության անդամների քանակով (անգամ 6 ամսական երեխան հաշվարկվում էր անդամների քանակում):

Այստեղ խնդիրը նաև սեփականության ձեռքբերման մեջ է. բաց պատշգամբը փակ դարձնելը հնարավոր է սեփականության զգացման դրդմամբ, ինչը նաև դրսևորվում է վերջին հարկի բնակիչների մոտ՝ տանիքի օգտագործման հարցում.:

> *«..որ բանալին [տանիքի] ուզեն հասարար կտանք»;*
>
> *«..քանի որ տանիքը շատ լավ ա սարքած, միշտ հարցնում ենք ինչի համար են գնում»;*
>
> *«..վերջին հարկինի պլյուսն ա՝ տանը ինչքան չօգտագործվող իր կա, տանիքում ա»:*

Բնակարանային փոփոխությունների համար առանցքային է տնային տնտեսության անդամների քանակի ավելացումը, որը ենթադրում է թե՛ բնակարանի ներսում փոփոխություններ, թե՛ հավելյալ տարածքի ձեռքբերում:

Հետխորհրդային շրջանում կտրուկ փոփոխությունների «թույլատրելիության» պայմաններում շենքը կարող է արտացոլել ակնհայտ անօրինականություն.

> *«..ինչ տեսք կունենա, որ լուցկու բոլոր հատերը տուփից մեծ լինեն, իսկ մեկը՝ դուրս ցցված. Նույն ձևով էլ շենքը, կարող ա բոլոր հարկերը նույն շարքով լինեն, մեկ էլ մի հատը՝ մի մետր առաջ»:*

Մինչդեռ խորհրդային շրջանում իրականացվող անօրինականությունները ունեին քողարկված բնույթ.

«..Կարողա պրոֆսոյուզը որոշեր, որ ոչ թե առաջին համարին տան, այլ երրորդին: Ասենք էլ մարդը ծանոթ ունի իշխանությունում, կամ ուզումա մի Ռայսովետի նախագահի աչքը մտնի, իրա բարեկամին տուն ա տալիս, բայց պարտադիր պետք ա հրաժարվեր առաջին համարը»:

Ժամանակագրական այն հիմնական փուլերը, որոնցով զարգացել է Երևանի բնակտարածությունը, երևում է յուրաքանչյուր տարում շահագործման հանձնված բնակելի շենքերի քանակի մասին արխիվային տվյալներից դիտարկումից:

Աղյուսակ 6.3.

Յուրաքանչյուր տարում շահագործման հանձնված բնակելի շենքերի քանակը[141]

1949	**1950**	**1951**	**1952**	**1953**	**1954**	**1955**	**1956**
19	20	27	27	30	25	32	66
1957	**1958**	**1959**	**1960**	**1961**[142]	**1962**	**1963**	**1964**
47	87	139	119	18	107	147	163
1965	**1966**	**1967**	**1968**	**1969**	**1970**[143]	**1971**	**1972**
98	134	138	122	-	-	112	176
1973	**1974**	**1975**	**1976**	**1977**	**1978**	**1979**	**1980**
157	122	130	96	115	125	142	99
1981	**1982**	**1983**	**1984**	**1985**	**1986**	**1987**	**1988-90**
116	87	142	128	99	131	77	1
1991	**1992**	**1993**	**1994-95**	-	-	-	-
28	12	10	10	-	-	-	-

[141] *Տվյալները՝ ՀՀ Ազգային արխիվի 112 ֆոնդից:*
[142] *1961 թվականի համար արխիվային փաստաթղթերը ամբողջական չեն:*
[143] *1969 և 1970 թվականների համար արխիվային փաստաթղթերը գտնված չեն:*

Քաղաքաբնակների գիտակցությունում, ըստ հարցազրույցներից ստացված տվյալների, որպես բնակտարածության փոփոխմանը բնորոշ փուլեր առանձնանում են *«մինչև 88-89 թթ.»*՝ այս շրջանում կառուցվում էին պլանային տիպային շենքեր; *«90-ականների սկիզբ, մուք տարիներ, վատ տարիներ»*՝ *«բան չէր արվում, մեռած տարիներ էին»; «90-ականների վերջ»*՝ նոր տիպի շինարարության սկիզբ: Տրվում են *«սովետի ժամանակ»* (առանց տատանումների) և *«սովետից հետո»* (կտրուկ փոփոխությունների) բնորոշումները.

> *«..Սովետի ժամանակ կառուցվում էին պլանային շենքեր էն տեղերում որտեղ ծառ չկար, կամ քանդվում էին հին շենքեր, որոնք արդեն վթարային էին, տեղը կառուցվում էին տիպային բարձրահարկ շենքեր: Հետո եկավ երկրորդ էտապը, որ սկսեց շինարարության արագ թափ, սկսեցին կառուցել ցանկացած տիպի շենք ցանկացած վայրում առանց հաշվի առնելու քաղաքի ճարտարապետական տեսքը, էս 90-ականների վերջում և Երևանը կամաց-կամաց կորցրեց դեմքը ու էտ վիճակը շարունակվում ա. կարողա 2 հարկանի շենքի կողքը 22 հարկանի շենք վեր գոյացած լինի, որը չի ապահովում ոչ մի քաղաքաշինական նորմ»:*

Խորհրդային շրջանում շինարարության ոլորտում նորմատիվ փաստաթուղթը ընդունվել է արդեն 1955 թվականին, որը հաստատվել է ԽՍՀՄ մինիստրների խորհրդի պետական կոմիտեի կողմից: Շինարարական նորմերն ու կանոնները ընդգրկում էին ընդհանուր դրույթներ, նախագծման նորմերը, շինարարության նորմերն ու կանոնները, գնահատման նորմերն ու կանոնները:

Հիմնական կառուցվածքափոխ նշանակություն ունեցած իրադարձությունների թվում նշվում են[144]՝

- Երևանի՝ որպես արդյունաբերական կենտրոն հռչակվելը (հատկապես նշանավորվեց գործարանների կառուցման մեծ թափով, մարզերից բանվորական ուժի ներհոսքով, ինչի հետևանքով *«..հինգ հարկանի շենքերը դարձան քիչ Երևանի համար ու սկսեցին բարձրահարկեր կառուցել. ժողովուրդը շատ էր, որ կարողանային նույն մակերեսի վրա տեղավորեին, պետք էր բարձրահարկ կառուցել»*):
- Մետրոյի կառուցումը,
- Երկրաշարժը (շինարարությունը որոշ շրջան դադար է ապրում),
- ԽՍՀՄ-ի փլուզումը (նշանավորվում է *«..էն ինչ չի արգելվում, կարելի է»* կարգախոսով),
- Անկախության հռչակումը (հողատարածքներ հատկացվեցին մասնավոր շինարարության համար),
- Սեփականաշնորհման գործընթացը (*«..կար էն միտքը, որ կարելի ա տարածքներ վերցնել ու սեփականաշնորհել»*),
- Կամրջի կառուցումը (Դավթաշենի պարագայում, ինչը *«..ուղիղ գծով բաժանեց Դավթաշենի պատմությունը «Կամրջից առաջ»-ի և «Կամրջից հետո»-ի»*):

Կառուցվածքի փոփոխության տեսանկյունից նշանակալի են նաև *քաղաքական* (քաղաքապետի, թաղապետի փոփոխություն) և *տնտեսական* (երկրի ծանր տնտեսական վիճակը խորհրդային կարգերի փլուզման և պատերազմական շրջանում) գործոնները:

Անկախության հռչակումից հետո փոփոխության է ենթարկվում բնակչության կազմը, այն է՝ նյութական և մարդկային ռեսուրսների

---

[144] *Իրադարձությունները թվարկվում են ռեսպոնդենտների նշած պարբերակով և մեկնաբանմամբ:*

փոփոխությամբ: Խորհրդային շրջանում կառուցվածքը ենթադրում էր բնակարանային կազմի կայունություն, որը նաև բերում էր բնակ-բաշխման ժամանակ ստեղծված մի իրավիճակի պահպանման, երբ նույն գործարանի աշխատողներին նույն շենքում, թաղամասում բնակարաններ էին հատկացվում, որը բերում էր իր հետ Երևանում այնպիսի միավորների առանձնացում, ինչպիսիք են՝ *«Կաուչուկի շենք»; «ՀՎԴ-ի շենք»; «Արվեստագետների շենք»; «Պոլիտեխնիկի շենք»* և այլն: Արդյունքում, տեղի է ունենում սոցիալական տարածության իրացում ֆիզիկական տարածությունում:

Բնակելի շենքերին տրված այս անվանումները պահպանվել են նաև մեր օրերում և չնայած ներկայումս այս շենքերի բնակչության կազմը ենթարկվել է փոփոխությունների, այդուհանդերձ, անվանումը պահպանվել է: Սա ևս փաստում է խորհրդային իրականության սիմվոլիկ վերարտադրումը հետխորհրդային ժամանակաշրջանում: Ներկայումս կառուցվող նմանատիպ շենքերը (*«Ավանի դասախոսական շենք»*), ըստ ռեսպոնդենտների, չեն կարող ներկայացնել խորհրդային շրջանին բնորոշ մոդել, քանի որ այդպիսի շենքեր կարող են ամեն թաղամասում կառուցվել՝ կառուցվածքը թույլատրում է, չկա ընդհանուր վերահսկողություն:

ԳԼՈՒԽ 7.
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԱԲՆԱԿՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Քաղաքային տեղերի սիմվոլիկ կառուցվածքը քաղաքաբնակի ընկալումները պայմանավորող ու դրանով պայմանավորված ընդհանրություն է: Համադրելով ստանդարտացված հարցազրույցների, դիտարկումների և մտային քարտեզագրման արդյունքները՝ փորձենք պարզել, թե քաղաքային գոտիները ինչպես են արտացոլվում քաղաքաբնակների ընկալումներում և ինչպես է քաղաքային գոտիների սիմվոլիկ իշխանությունը[145] բաշխված Երևանում այսօր:

Փորձելով բացահայտել երևանաբնակների կապվածությունը իրենց համայնքին, շեշտադրվել է Երևանի քաղաքային գոտիների և լոկալ համայնքների դասակարգումը՝ ըստ Երևանի վարչական համայնքների: Հարցին՝ «Կցանկանայիք արդյոք փոխել Ձեր բնակության վայրը՝ տեղափոխվելով Երևանի այլ համայնք», ըստ համայնքների, երևանաբնակները տվել են հետևյալ պատասխանները.

Աղյուսակ 7.1.

Բնակության վայրի փոփոխության հավանականությունը

Համայնք	Այո	Ոչ
1. Դավթաշեն	5.6%	94.4%
2. Արաբկիր	9.1%	90.9%
3. Քանաքեռ-Զեյթուն	28.0%	72.0%
4. Նոր Նորք	30.0%	70.0%
5. Աջափնյակ	30.4%	69.6%
6. Կենտրոն	34.0%	66.0%

[145] Տե՛ս **Bourdieu P.** (1989). *Social Space and Symbolic Power.* Sociological Theory, Vol. 7 (1), pp. 14-25:

7. Ավան	34.8%	65.2%
8. Էրեբունի	50.0%	50.0%
9. Շենգավիթ	51.0%	49.0%
10. Մալաթիա-Սեբաստիա	53.5%	46.5%

Հետաքրքիր է, որ կապվածությունը տեղին առնչվում է համայնքին կապվածության և համայնքի դրական բնութագրի հետ: Դա ակնհայտ է դառնում անհատների կողմից համայնքները՝ որպես ապրելու կամ աշխատելու/սովորելու համար ցանկալի/ոչ ցանկալի տարբերակելիս (տե՛ս աղյուսակներ 7.2 և 7.3):

Աղյուսակ 7.2.

Համայնքների՝ որպես ապրելավայրի գրավչությունը

Համայնք	**Ո՞ր համայնքներում կցանկանայիք ապրել (%)**	**Ո՞ր համայնքներում չէիք ցանկանա ապրել (%)**
1. Արաբկիր	19.2	1
2. Կենտրոն	25.3	9.9
3. Դավթաշեն	8	1.2
4. Ավան	7.2	0.8
5. Քանաքեռ-Զեյթուն	7.2	1.8
6. Նորք Մարաշ	0.5	0.5
7. Աջափնյակ	5.7	5.7
8. Նոր Նորք	11.3	11.3
9. Նուբարաշեն	0	4.4
10. Էրեբունի	4.9	11.9
11. Մալաթիա-Սեբաստիա	4.7	15.8
12. Շենգավիթ	6	35.6

Աղյուսակ 7.3.

Համայնքների՝ որպես աշխատավայրի գրավչությունը

Համայնք	Ո՞ր համայնքներում կցանկանայիք աշխատել/սովորել (%)	Ո՞ր համայնքներում չէիք ցանկանա աշխատել/սովորել (%)
1. Կենտրոն	55.3	5.1
2. Արաբկիր	13.3	1.9
3. Դավթաշեն	3.5	3.2
4. Ավան	1.8	1.9
5. Նորք Մարաշ	0.4	0.6
6. Քանաքեռ-Զեյթուն	1.3	2.5
7. Աջափնյակ	3.5	5.7
8. Էրեբունի	3.1	7.6
9. Նոր Նորք	5.8	14.6
10. Նուբարաշեն	0	10.1
11. Մալաթիա-Սեբաստիա	1.8	13.3
12. Շենգավիթ	10.2	33.5

Կենտրոն համայնքից զատ, մյուս երկու համայնքները, որոնք որակվում են որպես ամենագրավիչը երևանաբնակների կողմից, ***Արաբկիրն ու Դավթաշենն են:*** Քաղաքի ամենապահանջված մասը սովորելու, աշխատելու և ժամանցի համար ***Կենտրոնն է***, ուր գտնըվում է Երևանի *վարչական, մշակութային և առևտրական կենտրոնների* զգալի մասը:

«Հիմնականում ինչո՞ւ եք այցելում Երևանի նշված համայնքները» հարցին տրված պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.

Աղյուսակ 7.4.

Համայնքներ այցելելու առիթները

Համայնք	Այցելության առիթներ					
	Աշխատանք (%)	Ժամանց (%)	Կրթություն (%)	Հյուր եմ գնում (%)	Այլ (%)	Երբեք նշված առիթներով չեմ այցելել (%)
1. Կենտրոն	13	40.90	5	23.90	2.60	14.60
2. Մալաթիա-Սեբաստիա	7.20	14.40	1	26.10	11.70	39.70
3. Արաբկիր	11.90	7.40	0.70	38.70	4.50	36.70
4. Նոր Նորք	8.50	3.30		34.50	6.50	47.30
5. Ավան	7.10	3.30	0.30	34.90	4.30	50.00
6. Դավթաշեն	5.90	3.10		32.10	6.20	52.70
7. Էրեբունի	7.80	2.90	0.50	29	5.60	54.20
8. Աջափնյակ	6.60	2.50	0.30	29.70	8.10	52.80
9. Քանաքեռ-Զեյթուն	8.20	2	1.50	30.70	7.20	50.40
10. Շենգավիթ	9.10	1.10	0.60	31.30	5.30	52.60
11. Նորք Մարաշ	5.70	0.50		13.50	7.50	72.70
12. Նուբարաշեն	4.70			8.30	3.40	83.60

Եթե Կենտրոնը ամենագրավիչն է աշխատելու/սովորելու համար, ապա բնակության համար նախընտրելի համայնքներն են՝ ***Դավթաշենը, Ավանը, Աջափնյակը, Քանաքեռ-Զեյթունը, Նոր Նոր-***

քը: Սա նաև պայմանավորված է վերոնշյալ համայնքներին տրված հետևյալ բնորոշումներով:

Աղյուսակ 7.5.

Երևանի համայնքների հետ ասոցացվող հատկանիշները

Հատկանիշներ		Համայնք
1	***Խաղաղ***	Դավթաշեն
2	***Նոր***	Դավթաշեն

Հատկանիշներ		Համայնք
1	***Խաղաղ***	Ավան
2	***Գունավոր***	Ավան

Հատկանիշներ		Համայնք
1	***Խաղաղ***	Աջափնյակ
2	***Փոքր***	Աջափնյակ

Հատկանիշներ		Համայնք
1	***Խաղաղ***	Քանաքեռ-Զեյթուն
2	***Նոր***	Նոր Նորք

Հատկանշական է, որ Արաբկիր համայնքը, չնայած համայնաբնակների՝ ենթադրվող ուժեղ կապվածությանը (տե՛ս աղյուսակ 7.1), դուրս է մնացել քաղաքային տեղերի վերաբերյալ երևանաբնակների դրական և բացասական բնորոշումներից. ո՛չ Արաբկիր համայնքը, ո՛չ կոնկրետ համայնքային տեղերը գրեթե չեն հիշատակվել հարցման ընթացքում: Սա մասամբ պայմանավորված է Դավթաշեն համայնքի ընկալմամբ. դրան նպաստել է 1996 թվականին Դավթաշենի կամրջի շահագործումը, որի շնորհիվ Դավթաշեն համայնքն իր գրավչությամբ Երևանի համայնքների մեջ կիսում է առաջինից երրորդ հորիզոնականները Կենտրոն և Արաբկիր համայնքների հետ

միասին (տե՛ս աղյուսակներ 7.1, 7.2, 7.3): Դավթաշենի դեպքը յուրահատուկ է գրավիչ «տեղի ստեղծման» տեսանկյունից (տե՛ս Գլուխ 3): Սա հետաքրքիր դեպք է, թե ինչպես «մարգինալ» համայնքը փոխել է իր ստատուսը ճարտարապետական-վարչական լուծմամբ:

Նկար 7.1. Երևան. Դավթաշենի կամուրջ, Արաբկիր և Դավթաշեն համայնքները կապող հատված

Համաձայն հետազոտության արդյունքների, *«խաղաղությունը»* նշվում է որպես բնակության համար ամենակարևոր հատկանիշ, որին հաջորդում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ *«նոր», «զուսավոր»* կամ *«փոքր»:* Հետաքրքրական է Էրեբունի համայնքի դեպքը. այն կրում է Երևանի պատմական անունը, ներառում Երևանի պատմական հատվածը՝ Էրեբունու թանգարանը և ամենահին

բնակեցված թաղերից մեկը՝ Կայարանը, որն արդեն իսկ Երևանի առաջին քաղաքային հատակագծի մասն էր կազմում: Դա արտացոլվում է կայարանցիների ընկալումներում՝ մարդկանց, ովքեր իրենց ընկալում են որպես Երևանի ամենահին համայնքի բնակիչներ: Կայարանը միևնույն ժամանակ մոտ է քաղաքի կենտրոնին և, ինչպես նշում են ֆոկուս խմբերի ժամանակ, «10 րոպեի ճանապարհ է Կայարանից քաղաքի կենտրոն հասնելը»: Շնորհիվ իր տեղակայման, ***«պատմականի»*** և ***«հնի»*** հետ նույնացման, Էրեբունի համայնքն ունի իր հստակ դիրքը Երևանի համայնքները դասակարգելիս (տե՛ս աղյուսակ 7.6):

Աղյուսակ 7.6.

Էրեբունի համայնքի հատկանիշները

Հատկանիշներ		Համայնք
1	***Պատմական***	Էրեբունի
2	***Հին***	Էրեբունի

Ամենաբացասական ասոցիացիաները վերագրվում են Շենգավիթ համայնքին, որը ամենաքիչ գրավիչն է բնակության համար: Մասնավորապես, բացասական բնորոշումները կապված են Շենգավիթի թաղերից *Չարբախի* հետ (տե՛ս աղյուսակ 7.7):

Աղյուսակ 7.7.

Չարբախի հատկանիշները

Հատկանիշներ		Համայնք
1	***Ճանչրալի***	Չարբախ (Շենգավիթ)
2	***Վախեցնող***	Չարբախ (Շենգավիթ)
3	***Աղքատ***	Չարբախ (Շենգավիթ)
4	***Անգույն***	Չարբախ (Շենգավիթ)

Երևանի ընդհանուր համապատկերում բացասական բնորոշումներով հատկապես առանձնանում են *Նուբարաշենը, «Թոխմախ Գյոլը», «3-րդ մասը», «Սարի թաղը», «9-րդ մասիվը»* (տե՛ս աղյուսակ 7.8):

Աղյուսակ 7.8.

Քաղաքային տեղերի բացասական բնորոշումները

Հատկանիշներ		Քաղաքային տեղեր	
1	***Վախեցնող***	Նուբարաշեն	Թոխմախ Գյոլ (Էրեբունի)
2	***Ձանձրալի***	3-րդ մաս (Շենգավիթ)	9-րդ մասիվ (Նոր Նորք)
3	***Աղքատ***	Նուբարաշեն	Սարի թաղ (Էրեբուն)
		3-րդ մաս (Շենգավիթ)	9-րդ մասիվ (Նոր Նորք)

Նուբարաշեն

Չնայած մեծ ֆիզիկական տարածքին՝ 18.11 քառ.կմ, Նուբարաշենի բնակչությունն ընդամենը 9,561 է: Խորհրդային շրջանում այն կառուցվել է որպես նոր և առաջադեմ, այն հազվադեպ համայնքներից, որն ուներ հատակագիծ և հովանավորվում էր հայ մեծահարուստ Պողոս Նուբարի կողմից, ում անունն էլ ստացել է հետագայում: Խորհրդային շրջանում համայնքի ֆիզիկական տարածությունում տեղի ունեցած որոշ փոփոխություններից հետո այն զիջում է իր դիրքերը՝ դառնալով պակաս գրավիչ: Խորհրդային շրջանում այն անվանափոխվում է Նուբարաշենից Սովետաշեն, չնայած ներկայումս կրկին կրում է իր նախնական անվանումը: Այս համայնքում են գտնվում *քաղաքային աղբանոցը և քրեակատարողական հիմնարկը,* որոնք որպես «սիմվոլիկ պատ» են հանդես գալիս Նուբարաշեն համայնքի և Երևանի մնացած հատվածի միջև: Արդյունքում, համայնքը որակվում է որպես *«վախեցնող» և «աղքատ»:*

Սարի թաղ

Նորք Մարաշ համայնքից Կենտրոն համայնք հասնելու համար պահանջվում է մոտավորապես 5 րոպե մեքենայով և 25 րոպե զբոսնելով, մինչդեռ այն համարվում է քաղաքի ամենաանշուք համայնքը: Հետաքրքրական է Սարի թաղի և Նորք Մարաշ համայնքի համեմատությունը. Նորք Մարաշը լինելով ամենափոքր համայնքը 4.6 քառ.կմ տարածքով աշխարհագրորեն մոտ է Սարի թաղին: Հարևան քաղաքային գոտիները քաղաքի կենտրոնին միանում են կարճ ճանապարհով, երկուսն էլ ընդգրկում են սեփական տներ, որոնք սակայն ունեն տարբեր սիմվոլիկ նշանակություններ: Ավելին, երևանաբնակների ընկալումներում սեփական տանը բնակվելը հակադրվում է քաղաքային կենսակերպին. տուն կառուցելը բնորոշ չէր խորհրդային շինարարությանը և փոխարենը կառուցվում էին բարձրահարկ բազմաբնակարան շինություններ: Ներկայումս ևս կառուցվում են բարձրահարկ շինություններ փոքր պատուհաններով և առանց բակերի: Ճարտարապետական շեղումները արվարձանային հատվածներում և մի քանի ֆունկցիոնալ օբյեկտները նպաստում են այս իրավիճակին: Մասնավորապես, Սարի թաղը կապվում է Կենտրոնին ոչ գրավիչ հատվածով՝ «Գումի շուկայով» (ներկայումս «Տաշիր» առևտրի կենտրոն), որը, լինելով Կենտրոն համայնքի վարչական տարածք, դուրս է Երևանի Կենտրոնի մտային քարտեզներից (մանրամասն տե՛ս գլուխ 8): Նորք Մարաշը կապվում է Կենտրոնին ամենակարևոր սիմվոլիկ հատվածներից մեկով՝ Աբովյան փողոցով և «Պլանի գլխով»: Սարի թաղը չի ընդգրկում ֆունկցիոնալ օբյեկտներ, մինչդեռ Նորք Մարաշում առկա են հեղինակավոր բժշկական հաստատություններ, հյուրանոցներ, դեսպանատներ:

Նկար 7.2- Սարի բաղ, Էրեբունի համայնք, Երևան:

«Թոխմախ Գյոլ», «3-րդ մաս» և «9-րդ մասիվ»

Այս երեք քաղաքային լոկալ տեղերն ունեն սիմվոլիկ կառուցվածքների՝ նման, բայց տարբեր հիմքեր: «Թոխմախ Գյոլը» *հետերոտոպիկ պարածք է,* որը ասոցացվում է գերեզմանոցի քրեական պատահարների հետ: Ի հակադրություն սրա, «3-րդ մասն» ու «9-րդ մասիվը» երևանաբնակների ընկալումներում նույնացվում են *«ֆանֆրալի» և «աղքատ» բնակգոտիների հետ:* Եթե «3-րդ մասը» պատկանում է Շենգավիթ համայնքին, որը Երևանի համայնքների շարքում ունի ասոցատիվ բացասական կերպար, ապա «9-րդ մասիվը» պատկանում է Նոր Նորք համայնքին, որը, ընդհակառակը, ունի դրական կերպար: Չնայած դրան Նոր Նորքի իններորդ զանգվածը՝ «9-րդ մասիվը» տարբերվում է որպես *մարգինալ գոտի:* Չնայած

ասոցատիվ նմանություններին, տարբեր են *«3-րդ մասի»* և *«9-րդ մասիվի»* սիմվոլիկ բովանդակությունները.

«3-րդ մասը» Երևան քաղաքի ամենահին հատվածներից է, որը մշտապես սահմանվել է իր բնակիչներին բնորոշ նկարագրի համատեքստում: Այն նույնացվում է հանցավոր հեղինակությունների հետ և մտային կառուցվածքներում բնակիչը՝ *«3-րդ մասցին»,* կոնկրետ վարքային մոդելներով, արտացոլում է ավելին, քան ինքնին «3-րդ մասը»՝ որպես քաղաքային բնակավայր:

«9-րդ մասիվի» պարագայում բնակչի կերպարն այնքան էլ կարևոր չէ. բնակիչները ընկալումների ձևավորման մեջ պասիվ կողմ են և այստեղ կենտրոնական է ֆիզիկական տարածության սիմվոլիկ նշանակությունը: «9-րդ մասիվը» կառուցվել է Խորհրդային շրջանի վերջին տարիներին և Նոր Նորք համայնքի վերջին հատվածն է: Չնայած իր «նոր» լինելուն, այն չի ասոցացվում նորի հետ: Սրա պատճառը այս տարածքի ձևավորման ժամանակաշրջանն է. այն՝ որպես բնակգոտի սկսեց ձևավորվել ԽՍՀՄ անկման շրջանում՝ փոխակերպվող և անկանոն պայմաններում: Երևանաբնակների հիշողությունում 1990-ական թվականները նույնացվում են «ցրտի», «սովի», «պատերազմի» և «մթի» հետ, որոնք ներկայացնում են «9-րդ մասիվի» սիմվոլիկ նկարագիրը:

Երևանի Կենտրոնը որպես սիմվոլիկ իշխանության կրող

Չնայած Երևանի քաղաքային համայնքների/տեղերի վերաբերյալ ընկալումների ընդհանրական բաշխմանը, նկատելի է Երևանի կենտրոնի սիմվոլիկ իշխանությունը այլ համայնքների նկատմամբ: Սիմվոլիկ տեսանկյունից Երևանը բաժանվում է «Կենտրոնի» և «ոչ-Կենտրոնի» և «ոչ-Կենտրոնի» առանձնահատկությունները սահմանվում են «Կենտրոնի» հետ կապի միջոցով: Անդրադառնալով երևանաբնակների ինքնանույնականացմանը՝ ակնհայտ է դառնում,

որ քաղաքի ինքնությունը զարգանում է Կենտրոն համայնքը շեշտադրելով: Որոշ սիմվոլիկ վայրեր, որոնք առկա են քաղաքաբնակների ընկալումներում (օրինակ՝ Գայի արձան, Փլեյ Սիթի (Play City) և այլն) ոչ թե ինքնություն սահմանող տեղեր են, այլ ուղենիշ-կողմնորոշիչներ:

Երևանաբնակների ընկալումներում, Կենտրոնը ամենագրավիչն է սովորելու, աշխատելու և ժամանցի համար: Քաղաքաբնակների ընկալումներում Կենտրոնը քաղաքի հոմանիշն է. հաճախ Կենտրոնի հետ կապված օգտագործվում են *«գնում եմ քաղաք», «իջնում եմ քաղաք»* արտահայտությունները: Կենտրոնի մեկ այլ սիմվոլիկ յուրահատկություն արտահայտվում է դիխոտոմիկ կերպով. հին երևանցու ֆենոմենը նույնացվում է իրական երևանցու հետ, ով ապրում է քաղաքի կենտրոնում: Մյուս կողմից, Կենտրոնը նույնացվում է նորի և ժամանակակից քաղաքային միջավայրի հետ:

Աղյուսակ 7.9.

Կենտրոնի հատկանիշները

Հատկանիշներ		Համայնք
1	***Պայծառ***	Կենտրոն
2	***Աղմկոտ***	Կենտրոն
3	***Մեծ***	Կենտրոն
4	***Նոր***	Կենտրոն
5	***Պատմական***	Կենտրոն

Կենտրոնը հագեցած է նաև իր տարածությունը պայմանավորող սիմվոլիկ բաղադրիչ-տարրերով՝ *Կասկադ, Հանրապետության հրապարակ, Մատենադարան, Աբովյան փողոց և այլն* (տե՛ս աղյուսակ 7.10): Կենտրոնի քաղաքային տարածության առավել ամբողջական նկարագիրը կքննարկվի «Գլուխ 8»-ում:

Աղյուսակ 7.10.

Կենտրոն համայնքի քաղաքային գոտիների հատկանիշները

Հատկանիշներ		Քաղաքային գոտիներ	
1	***Պայծառ***	Կենտրոն	
2	***Աղմկոտ***	Կենտրոն	
3	***Գունավոր***	Հանրապետության հրապարակ (Կենտրոն)	Կասկադ (Կենտրոն)
4	***Մեծ***	Կենտրոն	Առևտրական կենտրոն-ներ (Կենտրոն)
		Հաղթանակի զբոսայգի (Կենտրոն)	Հանրապետության հրա-պարակ (Կենտրոն)
5	***Պատմական***	Կենտրոն	Մատենադարան (Կենտրոն)
6	***Ազգային***	Հաղթանակի զբոսայգի (Կենտրոն)	Մատենադարան (Կենտրոն)
7	***Հին***	Աբովյան փողոց (Կենտրոն)	Կոնդ (Կենտրոն)

Հյուսիսային պողոտան որպես «հակասական վայր»

Հետխորհրդային շրջանի Երևանի հետաքրքիր քաղաքային ֆեն-ոմենների է Հյուսիսային պողոտան: Այն Ա. Թամանյանի նախա-գծի մաս էր, որը իրար պետք է միացներ քաղաքի կենտրոնի երկու կարևոր տարրերը՝ Օպերան և Հանրապետության հրապարակը: Այս նախագիծը կյանքի կոչվեց միայն 2001 թվականին՝ արդեն հետ-խորհրդային շրջանում: Չնայած Հյուսիսային պողոտան ներկա-յումս տուրիստական տեսարժան վայր է, գնումների և ժամանցի հա-մար կարևոր գոտի, սակայն ունի հետխորհրդային շինարարության և քաղաքային կենսակերպի որոշ բնորոշիչներ: Համաձայն երևա-նաբնակների շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազո-տության արդյունքների, Հյուսիսային պողոտայի սիմվոլիկ կերպա-

ին են վերագրվում միաժամանակ դրական և բասացական բնութագրիչներ, որոնցից ամենաշատ հանդիպողներն են՝ *«նորը», «վախեցնողը», «արհեստականը», «օտարը», «էլիտարը»* (տե՛ս աղյուսակ 7.11):

Աղյուսակ 7.11.

Հյուսիսային պողոտայի հատկանիշները

Հատկանիշներ		Քաղաքային տեղեր
1	***Նոր***	Հյուսիսային պողոտա (Կենտրոն)
2	***Վախեցնող***	Հյուսիսային պողոտա (Կենտրոն)
3	***Արհեստական***	Հյուսիսային պողոտա (Կենտրոն)
4	***Օտար***	Հյուսիսային պողոտա (Կենտրոն)
5	***Էլիտար***	Հյուսիսային պողոտա (Կենտրոն)

Նկար 7.3- Հյուսիսային պողոտա, Կենտրոն համայնք, Երևան:

ԳԼՈՒԽ 8.
ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս Երևան քաղաքի կենտրոնի (հատկապես կենտրոնի հանրային տարածության) սիմվոլիկ իշխանությունը[146] քաղաքի այլ համայնքների, հատկապես ծայրամասերի նկատմամբ: Ըմբռնելու համար Երևանի կենտրոնի հանրային տարածության, դրա տարրերի սիմվոլիկ բաշխվածությունը հավաքագրված մտային քարտեզների վերլուծության արդյունքնում կառուցվել է Երևանի կենտրոնի սիմվոլիկ քարտեզը:

Մինչ Երևանի կենտրոնի մտային կառուցվածքի ներկայացումը, հարկ է ընդգծել վերջինիս վարչական սահմանները. համաձայն ՀՀ «Երևան քաղաքի ինքնավարման»[147] օրենքի գլխավոր պլանի, Երևանի Կենտրոն համայնքի հյուսիսային սահմանը սկսվում է Հրազդան կամուրջը Լենինգրադյան փողոցին կապող մասից, անցնում է կամուրջի հարավարևելյան շրջանով, հատում Հրազդան կիրճը (Հրազդանի կամրջով) և շարունակվում գետի ձախ ափով մինչև նախկին Երևանի հիդրոէլեկտրակայանի արևելյան սահմանները: Այդ մասը տարածվում է կառավարական շենքի հյուսիսարևելյան ցանկապատից մինչև Պռոշյան փողոց, հետո ուղիղ մինչև Բաղրամյան պողոտա, հատում այն և շարունակվում մինչև Երևան-Սևան մայրուղու կիրճի եզրը: Այնուհետև, սահմանն անցնում է մայրուղու

---

[146] Տե՛ս Bourdieu P. (spring, 1989). *Social Space and Symbolic Power.* Sociological Theory, Vol. 7, No. 1, pp. 14-25.

[147] *ՀՕ-5-Ն օրենքը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին.* ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 26.12.2008 թ., ՀՀ Նախագահն այն ստորագրել է 15.01.2009 թ., Օրենքն ուժի մեջ է մտել 26.01.2009 թ., [Առցանց]: Հասանելի է https://www.yerevan.am/am/ra-law-on-local-government-in-the-city-of-yerevan: [Դիտված 08.06.2015]:

հարավային եզրի երկանյքով, անցնում Հաղթանակ զբոսայգու հարավային մուտքով, շարունակվում Երևան-Սևան մայրուղու հյուսիսային եզրից մինչև կենտրոնական ջրամբար՝ ներառելով գազանանոցի հյուսիսային և հարավային դարպասները և Նորքի ստորին լանջը, հասնում մինչև Ավանի կիրճի երկաթուղային կամրջին:

Արևելյան հատվածը սկսվում է Ավանի կիրճի երկաթուղային կամրջից և շարունակվում մինչև Հանրապետության մարզադաշտի դիմացի սարալանջերը (ներառյալ Այգեստանի հարավարևելյան մասի հարակից շենքերը): Այնուհետև սահմանն անցնում է մայրուղու արևմտյան եզրի երկայնքով մինչև Տիգրան Մեծ պողոտան՝ հատելով Մովսես Խորենացի փողոցը:

Հարավային հատվածը սկսվում է Տիգրան Մեծ պողոտայի և երկաթուղային կամրջի խաչմերուկից, շարունակվում Քրիստափորի փողոցով դեպի արևմուտք, հատում Արշակունյաց պողոտան և իջնում Հրազդան գետի աջ ափ: Այնուհետև սահմանն անցնում է Հրազդան գետի աջ ափի երկայնքով մինչև Ծովակալ Իսակով պողոտայի խաչմերուկը հատելը: Արևելյան հատվածը շարունակվում է Ծովակալ Իսակով պողոտայի հարավարևելյան եզրից 350 մ դեպի հյուսիս-արևելք, շրջվում ուղիղ անկյունով դեպի հյուսիս արևմուտք, անցնում «Արմստանոք» ձեռնարկության եզրով մինչև Լենինգրադյան փողոց և, շրջվելով դեպի հյուսիս-արևելք, շարունակվում է մինչև Հրազդան կամուրջ: Ստորև ներկայացված է Երևանի քարտեզը, որտեղ առանձնացված են կենտրոնի վարչական սահմանները:

Նկար 8.1 Երևանի կենտրոնի վարչական սահմանները

Համեմատելով Երևանի կենտրոնի վարչական՝ «իրական», և մտային քարտեզները՝ անհրաժեշտ է նշել, որ մտային քարտեզները տարբերվում են՝ կախված քաղաքաբնակների՝ Երևանի կենտրոնում լինելու հաճախականությունից *(կենտրոնում աշխատողներ, կենտրոնի բնակիչներ, կենտրոն այցելողներ)*. այստեղ առկա է որոշակի

օրիանաչափություն՝ կապված քաղաքային տարրերը հիշելու և դրանք իրար հետ կապելու տեսանկյունից: Եթե այցելուները Երևանի կենտրոնը ընկալում են քաղաքային տարածության հիմնական արտահայտիչ տարրերով («Օպերա», «Հրապարակ», «Կասկադ»), ապա բնակիչներն ու կենտրոնում աշխատող այլ համայնքների բնակիչների մտային քարտեզներում, բացի նշված նշանակալի տարրերից, նաև տեղեկատվություն է տրամադրվում նրանց *բնակության վայրի,* իսկ աշխատողի դեպքում՝ *իր աշխատավայրին մոտ գտնվող տեղերի մասին (փողոցներ, շենքեր, արձաններ):* Բացի այդ, հարցվողներից և ոչ մեկը հստակ պատկերացում չունի քաղաքի կենտրոնի վարչական սահմանների մասին:

Օրինակ, 1-ին մտային քարտեզի կրողը 35 տարեկան արական սեռի կենտրոնի այցելու է: Առաջին տարրը, որ նա նկարեց թղթի վրա, Օպերան էր՝ կլոր շրջանակով, այնուհետև հրապարակը՝ էլիպսաձև, Կասկադը՝ աստիճանների տեսքով, իսկ «Պապլավոկ» այգին, Սիրահարների այգին, Կարապի լիճը նկարեց ավելի խառը գծերով: Այսինքն, անհատը, ազդվելով ֆիզիկական տարածության մեջ այդ տարրերի դիրքից, ձևից, նույն կերպ, ելնելով իր տեսողական փորձից, այն պատկերում է իր մտային քարտեզում:



Մտային քարտեզ 1.

2-րդ մտային քարտեզի կրողը 25 տարեկան Մոսկովյան-Աբովյան խաչմերուկի մոտակայքի կոմերցիոն օբյեկտի աշխատակից է: Այն, ինչից նա սկսեց քարտեզի պատկերումը հետևյալ արտահայտությունն էր՝ *«Yerevan. Older than Rome»:* Այնուհետև նշեց Կասկադը՝ հատելով այն Մոսկովյան փողոցի հետ, որտեղ, ինչպես նշվեց, նա աշխատում է: Դրան հաջորդեցին Օպերան, Հանրապետության Հրապարակը, Աբովյան փողոցը, Հյուսիսային պողոտան, որոնք նա նշել է թղթի կենտրոնում՝ ցույց տալով այդ տարրերի դոմինանտությունը մյուս փողոցների նկատմամբ, ինչպիսիք են Թումանյան, Սայաթ-Նովա, Պուշկին փողոցները: Բացի այդ, այստեղ կարելի է տեսնել Աբովյան փողոցի առաջնայնությունը բոլոր նշված տարրերի նկատմամբ, քանի որ այն նկարում նշված է 3 անգամ.

- *Երթուղի 1. Աբովյան փողոցը՝ որպես ճանապարհ, որը թույլ է տալիս հասնել Հանրապետության Հրապարակ:*
- *Երթուղի 2. Աբովյան փողոցը, որպես տեղ, որը Հյուսիսային պողոտայով կապվում է Օպերային:*
- *Երթուղի 3. Աբովյան փողոցը՝ որպես վայր, որտեղ գտնվում են Մոսկվա կինոթատրոնը, Ազնավուրի հրապարակի շատրվանը,* ուր ռեսպոնդենտը սիրում է գնալ ժամանցի նպատակով:

Այսինքն, Աբովյան փողոցն իր սիմվոլիկ նշանակությամբ ավելին է, քան ուղղակի ճանապարհ:



Մտային քարտեզ 2.

Իսկ մտային քարտեզ 3-ի հեղինակը ապրում է Կասկադի մոտակայքում (22 տարեկան իգական սեռի ներկայացուցիչ), ընդ որում ձախ կողմում գտնվող բնակելի տներից մեկի բնակիչ է, որոնք հստակորեն երևում են նկարում: Սույն նկարում ամեն տարր արտահայտիչ կերպով է նկարված՝ առանց որևէ անվանում գրելու: Լինելով կենտրոնի բնակիչ՝ հետազոտության մասնակիցը նկարել է այն ամենը, ինչը մոտ է իր «բակին», որին, ըստ երևույթին, շատ մանրամասն ծանոթ է (սկսած Ա. Թամանյանի, Կոմիտասի, Մ. Սարյանի, Ա. Խաչատրյանի արձաններից, հարող այգիներից, վերջացրած Ազատության հրապարակով, Օպերան հարող փողոցների ծառերով և սրճարաններով):



Մրայիկ քարտեզ 3.

Համադրելով Երևանի կենտրոնի մտային քարտեզները՝ դրանք կարելի է բաժանել 3 խմբի՝

1. *Մասնակի քարտեզներ, որոնք պարունակում են իրական քարտեզի մասնիկներ՝ կտրված Երևանի կենտրոնի մյուս մասերից (այդպես են Երևանի կենտրոնը պատկերել մտային քարտեզ պատկերողների 51%-ը):*
2. *Մասնակի ամբողջական քարտեզներ, որոնք բաղկացած են քաղաքի մեկ կամ մի քանի մանրամասն նկարված մասնիկներից, որոնք միահյուսված են համաքաղաքային կառուցվածքին (այդպես են պատկերել 29%-ը):*
3. *Ճակատային քարտեզներ. այսպիսի քարտեզներում առկա են իրարից անկախ քաղաքային տարրեր (այդպես են պատկերել պատկերողների 20%-ը):*

(Առավել շատ մտային քարտեզներ կարող եք տեսնել հավելված 1-ում):

Երևանի կենտրոնի մտային քարտեզների հիմնական ակնհայտ յուրահատկությունն այն է, որ միայն ճակատային քարտեզներում են բացակայում ճանապարհները/փողոցները, իսկ մյուս բոլոր քարտեզներում դրանք առկա են: Ք. Լինչն իր քաղաքի վիզուալ ընկալման տեսության մեջ առանձնացրել է այն հիմնական տարրերը, որոնց միջոցով մարդն իր գիտակցության մեջ ստեղծում է քաղաքի կառուցվածքը: Կարելի է ասել, որ հեղինակի կողմից առանձնացված տարրերը քաղաքային հանրային տարածություններն են, որոնք զանգվածային օգտագործման են ծառայում: Այդպիսի տարրերն են *ճանապարհները, սահմանները, գոտիները, ուղենիշները, հանգույցները:*

Ընդհանրացնելով մտային քարտեզների կոնտենտ վերլուծության արդյունքները՝ *Երևանի կենտրոնի սիմվոլիկ սահմանները* ուրվագծելի են հետևյալ կերպ. Երևանի կենտրոնի հյուսիսային սահմա-

նը հատում է *Բաղրամյան – Իսահակյան փողոցը,* ապա հասնում *Կասկադ,* որին հաջորդում է *Մաշտոց պողոտայի հյուսիսային հատվածը* մինչև *Մատենադարան:* Հյուսիսարևելյան մասն ամբողջանում է հատկապես *Աբովյան փողոցով:* Հարավարևելյան մասը հատկանշական է *Ալեք Մանուկյան – Նալբանդյան* փողոցներով, ապա *Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանով («Ժողինստիտուտ»)* և *Երևանի պետական համալսարանով:* Հարավային սահմանը սկսվում է *Սուրբ Գրիգոր Լուսավորիչ* եկեղեցով, ապա անցնում *«Ռոսիա» առևտրի կենտրոնին* հարող *Տիգրան Մեծ փողոցով,* և ձգվում մինչև *Խորենացի փողոց*: Հարավարևմտյան սահմանը եզրափակվում է *Երևանի քաղաքապետարանի շենքով, Կիրովի այգով,* իսկ արևմտյան սահմանը՝ *Սուրբ Սարգիս եկեղեցով, Կապույտ մզկիթով* և *Փակ շուկայով (ներկայիս «Պրոսպեկտ մոլով»):*

Երևանի կենտրոնի նման «նեղ» սիմվոլիկ-մտակառույցը կարելի է բացատրել քաղաքի կենտրոնը և՛ «գնումների», և՛ «ժամանցի» կենտրոնները նույնացնելով, քանի որ դրանք արտահայտում են քաղաքի առավել «ակտիվ» միջուկը, որտեղ գտնվում են խանութներ, սրճարաններ և մշակութային կյանքն արտահայտող այլ տարրեր: Այսուհանդերձ, պակաս կարևոր չեն ոչ «հմայիչ» տարածքները քաղաքի հետագա պլանավորման հարցում:

Երևանի կենտրոնի մտային քարտեզի ֆեսավորման ընթացակարգ

Մտային քարտեզագրման գործընթացում կարևոր է ոչ միայն պատկերի բովանդակությունը, այլև պատկերման կամ քարտեզագրման հաջորդականությունը: Այդ տեսանկյունից, Երևանի կենտրոնի քաղաքային միջավայրի տարրերը նկարելու հաջորդականությունը մեզ թույլ կտա բացահայտել, թե որ տարրերն են առաջնահերթ նշվում ռեսպոնդենտների կողմից, Երևան քաղաքը քարտեզագրելիս:

45 մտային քարտեզներում ռեսպոնդենտները ընդհանուր առմամբ նշել են ավելի քան ***110*** քաղաքային տարր, դրանցից առավել հաճախ (2 և ավելի անգամ) հիշվել են ***81-ը***, իսկ գրեթե միշտ՝ ***18-ը*** *(տե՛ս գրաֆիկ 8.1):* Չնայած դրան, երևանաբնակները կենտրոնը պատկերելիս միայն երեք տարրից են սկսում իրենց քարտեզները՝ *Հանրապետության հրապարակը,* որի դեպքում գծում են էլիպսաձև շրջանակ, *Օպերայի և բալետի թատրոնը*՝ գծելով կլոր շրջան, այնուհետև մյուս քաղաքային տարրերն իրար են կապվում *Աբովյան փողոցով:*



Գրաֆիկ 8.1. Երևանի կենտրոնի ամենահիշելի տարրերը՝ ըստ մտային քարտեզների

Իսկ ինչու՞ են հատկապես այդ վայրերը ռեսպոնդենտների համար հիշելի և ճանաչելի: Օգտվելով Ք. Լինչի քաղաքային տարածու-

թյան տարրերի տիպաբանությունից՝ ***օպերան, ըստ էության, դիտվում է որպես ուղենիշ, Հանրապետության հրապարակը՝ որպես հանգույց, Աբովյան փողոցը՝ որպես ճանապարհ***[148]**:**

Հաշվի առնելով հարակից տարրերը՝ որպես կենտրոնական շրջաններ առանձնացվում են՝

- ✓ *Երևանի կենտրոնի «կենտրոնը» կամ քաղաքի կենտրոնի ուժեղ կետերը,* ներառյալ Հանրապետության հրապարակը և Օպերայի ու բալետի թատրոնը՝ որպես հանրային գործառույթների հիպերկենտրոնացված վայրեր:
- ✓ *Երևանի կենտրոնի «կենտրոնական միջուկը»,* որը հիմնականում ներառում է Օղակաձև պուրակի սահմաններում գտնվող տարածությունը, որտեղ գտնվում են համաքաղաքային նշանակության ամենանշանակալի և յուրահատուկ օբյեկտների ճարտարապետապլանային միավորումները:

Ուղենիշները քաղաքի և դրա առանձին մասերի ճանաչման բանալիներն են: ***Օպերան, որպես ուղենիշ*** տարբեր ուղղություններից տեսանելի է, ինչպես նաև իր բարձրությամբ և ճարտարապետական ձևով կտրուկ տարբերվում է հարևանությամբ գտնվող տարրերից: Օպերայի գմբեթը ճանաչվում է ճշգրտորեն, այն անխզելիորեն կապված է քաղաքի պատմության հետ, դրա գտնվելու վայրը համընկնում է երթուղային հանգույցի հետ:

Հանրապետության Հրապարակը, որպես հանգույց, քաղաքացու համար հատուկ նշանակություն ունի: Ըստ Ա. Թամանյանի, Հանրապետության հրապարակի տարածքի հիմնական գործառույթը քաղաքի կենտրոնական հաղորդակցական վայր լինելն է, որտե-

---

[148] Տե՛ս **Lynch K.** (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press:

ղից սկիզբ են առնում մի շարք կենսական նշանակության փողոցներ՝ այն կապելով քաղաքի մյուս հիմնական կետերի հետ: Ինչպես Ք. Լինչն է նշում, քանի որ այդպիսի վայրերում պետք է որոշում կայացնել հետագա տեղաշարժման վերաբերյալ, ուշադրությունը կենտրոնացվում է ու շրջակա տարրերն ընկալվում են հատուկ սրությամբ: Այսպիսով, բոլոր այն տարրերը, որոնք գտնվում են Հանրապետության հրապարակում՝ *Ազգային պատկերասրահ, ՀՀ Կառավարության շենք, ՀՀ Արտաքին գործերի նախարարության շենքը, Հայ Փոստ,* ռեսպոնդենտների կողմից հաճախակի նշվում էին մտային քարտեզներում՝ դիտարկվելով որպես ուղենիշներ՝ ելնելով իրենց գտնվելու վայրից:

Աբովյան փողոցը, որպես ճանապարհ. ռեսպոնդենտների մտային քարտեզներում ամենից հաճախ նշվում են ճանապարհները: Սրանք, ըստ Ք. Լինչի քաղաքային տարածության կառուցման կարևորագույն տարրերն են: Փողոցի հիշելի լինելը պայմանավորված է նրա իրականացրած գործառույթներով, ըստ այդմ, այն ձեռք է բերում տարբեր իմաստավորումներ: Փողոցի յուրահատուկ բնութագիրը, կամ գործառույթը նրան արտահայտիչ տեսք է տալիս: Աբովյան փողոցը ռեսպոնդենտները ասոցացնում են *խանութների, հանդիպումների, գնումներ կատարելու, զբոսանքի ու ժամանցի սիրելի վայրի հետ:* Միևնույն ժամանակ, Աբովյան փողոցը նշվում է որպես քաղաքի խաղաղ մասերից մեկը: Իսկ երեկոյան ժամերին փողոցը վերածվում է մարդաշատ և աշխույժ զբոսավայրի:

Փողոցները քաղաքի բաց հանրային տարածության կարևոր մասն են կազմում: Շատ քաղաքաբնակների համար փողոցները ներկայացնում են այն, ինչ գտնվում է իրենց տնից, բնակարանից դուրս: Մարդիկ իրենց ֆունկցիոնալ, սոցիալական և ժամանցային գործունեությամբ, գնումներով, խաղերով, հանդիպումներով, այլ մարդկանց

հետ ինտերակցիաներով կախված են փողոցներից: Փողոցները և դրանց մայթերը քաղաքի հիմնական հանրային տարածություններն են: Փողոցները կարևոր տեղ են զբաղեցնում հանրային տարածության վերաբերյալ գրականության մեջ և հանրային ոլորտի ամենավառ սիմվոլն են: Հետևաբար, ինչպես Վ. Մեհթան է նշում.

> *«Հանրային ոլորտի կամ քաղաքային հանրային տարածության վերաբերյալ դիսկուրսը քննարկելի է փողոցների միջոցով»*[149]:

Բացի այն, որ փողոցները նյութականացնում են ճանապարհներ (փողոցներ, մայրուղիներ, երկաթուղիներ), որոնցով մարդիկ մի վայրից մյուսն են տեղափոխվում, տարբեր գիտնականներ, այդ թվում նաև Վ. Մեհթան, փողոցն ավելի շուտ դիտարկում են որպես սոցիալական տարածություն՝ առավել, քան որպես տեղաշարժման ուղի[150]: Փողոցները հնարավորություն են տալիս ստեղծել կարճաժամկետ, ցածր հաճախականությամբ կապեր, որոնք ձևավորում են կարճ փոխազդեցություններ այլ մարդկանց հետ, սակայն այդ նույն կարճ փոխազդեցությունները կարող են հիմք հանդիսանալ մարդկանց միջև երկարաժամկետ (այդ թվում, անդեմ) փոխազդեցությունների հաստատման համար:

Մտային քարտեզների վերլուծության արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ փողոցը քաղաքային հիմնարար տարր է, որը մեծ մասամբ հիշատակվում և նկարվում է քարտեզներում (նույնիսկ երբ չի հիշվում փողոցի անվանումը, այնուամենայնիվ, նկարվում է դրա ուրվագիծը):

Ընդհանուր առմամբ, Երևանը բնորոշող հիմնական փողոցներն են՝ Աբովյան (54%), Հյուսիսային պողոտա (41%), Թումանյան (41%), Մաշտոց պողոտա (38%), Սայաթ-Նովա (31%): Հետաքրքիր

---

[149] **Mehta V.** (2014). *The Street: A Quintessential Social Public Space*. Routledge, p. 25.
[150] Տե՛ս նույն տեղում:

է, որ ոչ շատ վաղ անցյալում կենտրոնական էր համարվում նաև Տերյան փողոցը (11%), սակայն այսօր այն չի համարվում կենտրոնական՝ պայմանավորված նորակառույց Հյուսիսային պողոտայով: Բացի այդ, ստվերում են մնացել այնպիսի փողոց/պողոտաներ, ինչպիսիք են Վարդանանց, Բաղրամյան (չնայած դրանք մտնում են կենտրոնի վարչական սահմանների մեջ), ինչպես նաև հին և «հիպերկենտրոնացված» Պուշկին, Սարյան, Արամի փողոցները:

Փողոցների ցանցը ստեղծում է որոշակի մշակութային տարածություն քաղաքային կառուցվածքում: Ելնելով մտային քարտեզներում հիշելի տարրերի դասավորվածությունից կարելի է առանձնացնել կենտրոնի հիմնական փողոցների սիմվոլացված հատվածները՝ Թումանյան փողոց՝ տուն-թանգարանից մինչև Աբովյան փողոցի հետ հատվելը, Սայաթ-Նովա պողոտան՝ Ֆրանսիայի հրապարակից մինչև Նալբանդյան փողոց, Մաշտոց պողոտան՝ Մատենադարանից մինչև Թումանյան փողոց: Այս հատվածների ներսում գտնվում է Օպերայի և բալետի թատրոնը, որով և այն դառնում է քաղաքի կենտրոնի սիմվոլիկ կառուցվածքի զարկերակը:

Աբովյան փողոցը, ի տարբերություն մյուս բոլոր փողոցների, բացի այն, որ ամենաշատն է նշվում մտային քարտեզներում, նաև միակ փողոցն է, որ նկարվում է ամբողջությամբ՝ Հանրապետության հրապարակից մինչև Աբովյան պուրակ («Պլանի գլուխ»):

Թումանյան փողոցը նույնացվում է քաղաքային միջավայրի այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են «Թումանյանի տուն-թանգարանը», «Թումանյանի շաուրմա» արագ սննդի կետը, ինչպես նաև Կարապի լիճը ու Հյուսիսային պողոտան: Հետաքրքիրն այն է, որ Հյուսիսային պողոտան, լինելով առանձին փողոց, ասոցացվում է նաև Թումանյան փողոցի հետ:

Չնայած Հյուսիսային պողոտան համարվում է երևանյան քաղաքային միջավայրի ակնառու տարր, վերջինիս հանդեպ վերաբեր-

մունքը երևանցիների շրջանում տարբեր է: Մի կողմից այն համարում են գեղեցիկ՝ եվրոպական չափանիշներին համապատասխան, դինամիկ, աշխույժ, իսկ մյուս կողմից՝ համարում են քարերի աշխարհի, «դատարկ բնակարանների, անկենդան պատուհանների» ամբողջություն, ուր կյանք չկա, ուր անիմաստ շենքեր են, ճնշող միջավայր է, որը գլխացավի առաջացման պատճառ է դառնում:

Թումանյան փողոցը նկարագրվում է հետևյալ հատկանիշներով՝ «հանգիստ», «փափուկ», «գեղեցիկ», «երիտասարդական», «ապահով»: Սայաթ-Նովա փողոցը ասոցացվում է Օպերայի շենքի, Տիկնիկային թատրոնի, շախմատի տան, Անի հյուրանոցի հետ:

«Սայաթ-Նովա փողոցը Նոր Երևանի առաջին փողոցն էր, որը դարձավ «վերածննդի» սիմվոլ: Այն նորառոճ, ֆանտաստիկ փողոց է»[151]:

Մաշտոցի պողոտան համարվում է կենտրոնի «երակը», որտեղ աչքի են ընկնում Մատենադարանը, Մարգարյան հիվանդանոցը, Փակ շուկան: Փողոցը քաղաքաբնակների կողմից նկարագրվում է որպես «գործնական», «ուրախ», «լայն», «ակտիվ», «աղմկոտ», «երկար», «ուղիղ», որտեղ մարդիկ կարծես ինչ որ տեղ են շտապում: Փակ շուկան հարող տարածքը նկարագրվում է որպես մարդաշատ, տհաճ հոտով, աղմկոտ, կեղտոտ:

Աբովյան փողոցը՝ որպես Երևանի կենտրոնի հանրային տարածության քվինտէսենցիա

Աբովյան փողոցի աչքի ընկնող տարրերից են Մոսկվա կինոթատրոնը, Աբովյանի արձանը, այստեղ են գտնվում տարաբնույթ ժամանցի վայրեր ու լոկալացված կոմերցիոն կենտրոններ, բրենդային խանութներ: Այս փողոցը քաղաքաբնակների կողմից նկա-

[151] **Лурье С., Давтян А.** (2012). *Ереванская цивилизация*. Lap Lambert Academic Publishing, ст. 34.

բագրվում է որպես «ռոմանտիկ», «հանգիստ», փողոց, որտեղից «հնության հոտ է գալիս», որտեղ մարդիկ սովորաբար նախընտրում են ուղղակի զբոսնել: Սակայն այս հատկանիշները բնորոշ են միայն Մոսկովյան փողոցից մինչև Հանրապետության հրապարակ ընկած հատվածին, իսկ Մոսկովյան փողոցից մինչև Աբովյանի արձանը ընկած հատվածը ասոցացվում է քառսային մի վայրի հետ, որտեղ անհարմար են ճանապարհները, շատ են մեքենաները, կեղտոտվածությունը, փոշին:

Երևանաբնակների պատկերացումներով Աբովյան փողոցը Երևանի սիրտն է.

> *«Հիմնականում բոլոր թաղամասերը, կինոթատրոնները այստեղ են գտնվում, հայտնի մարդկանց, սիրելի դերասանների այստեղ ավելի մեծ է հավանականությունը որ հանդիպես (30 տ., իգ., Էրեբունու բնակիչ, աշխատում է Կենտրոնում)»:*

Աբովյան փողոցը մայրաքաղաքի ամենաբանուկ փողոցն է թե՛ ցերեկային, թե՛ երեկոյան ժամերին. այն հանդիպումների, գնումներ կատարելու, զբոսանքի ու ժամանցի սիրելի վայր է: Աբովյան փողոցը քաղաքի խաղաղ մասերից մեկն է: Երեկոյան ժամերին փողոցը վերածվում է մարդաշատ և աշխույժ զբոսավայրի՝ երևանաբնակների ընկալումներում մնալով «խաղաղ»:

Աբովյան փողոցի յուրահատկությունը մեկնաբանելու տեսանկյունից, անդրադառնանք վերոնշյալ փողոցի պատմությանը և վերջինիս ֆիզիկական տարածության դիտարկումներ իրականացնենք: Ա. Թամանյանի քաղաքաշինական նախագծում, որն իրականացվեց 20-րդ դարում, Հին Երևանից պահպանվեց միայն Աս-

տաֆեսկայա (Աբովյան) փողոցը՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք[152]:

Երևանի առաջին գլխավոր փողոցը՝ ներկայիս Աբովյանը, ունի ավելի քան մեկ դարի պատմություն՝ ի սկզբանե անվանվելով Աստաֆեսկայա, ի պատիվ Երևանի նահանգապետի՝ Աստաֆեի:

«Աստաֆեսկայա» փողոցը եղավ Երևանի առաջին պլանավորված փողոցը: Այստեղից էլ «պլան» բառը քաղաքացիների մոտ ստացավ ավելի շուտ փողոց ներկայացնող իմաստ: Միևնույն ժամանակ, գործածական դարձավ նաև «Պլանի գլուխ» անվանումը, որը «Աստաֆեսկայա» փողոցի վերին մասն էր[153]: Ի դեպ, ներկայումս վերոնշյալ վայրը կոչվում է Աբովյանի պուրակ, ուր կանգնած է Խ. Աբովյանի արձանը, սակայն «Պլանի գլուխ» բնորոշումը շարունակում է մնալ տարածված:

Անցյալում, ներկայիս Աբովյան փողոցում էին գտնվում քաղաքի ճարտարապետական հնագույն կոթողներից երկուսը՝ Պողոս-Պետրոս և Կաթողիկե եկեղեցիները, որոնք դասվում էին Հայաստանի նյութական մշակույթի հնագույն հուշարձանների շարքին: Պողոս-Պետրոս եկեղեցին հինգերորդ դարի, իսկ Կաթողիկեն տասներեքերորդ դարի կոթողներ էին: Առաջինը գտնվում էր «Մոսկվա» կինոթատրոնի տեղում, իսկ երկրորդը՝ Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների անկյուններում գտնվող Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի նախկին շենքի տեղում[154]:

Ի՞նչ ենք մենք *կարդում* Աբովյան փողոցով անցնելիս: Ինչպես Վ. Մեհթան է նշում փողոցի գծայնությունը և որոշակի ուղղվածությունը անընդհատ վիճարկելի է դարձնում այն հարցը, թե արդյոք

---

[152] **Лурье С., Давтян А**. (2012). *Ереванская цивилизация*. Lap Lambert Academic Publishing, ст. 30.

[153] Տե՛ս **Ավետիսյան Կ. Մ., Ավետիսյան Ա. Ա.** (1979): Հայրենագիտական էտյուդներ: Երևան: «Սովետական գրող»:

[154] Տե՛ս նույն տեղում:

փողոցները այն ճանապարհներն են, որտեղով կարելի է հասնել նախընտրելի սպառման վայր, թե՞ այն իրենից ներկայացնում է մարդկանց զբաղմունքի (խաղերի, ժամանցի) վայր: Այս տեսանկյունից փողոցն ավելին է, քան ուղղակի ճանապարհը: Ճանապարհը և վայրը «մրցում» են փողոցում՝ համախմբելով վարքային դրսևորումները, որոնք առկա են շարժմանը զուգահեռ՝ տարածության մասին բացասական, կամ դրական վերաբերմունք ձևավորելով[155]:

Մտային քարտեզների հիման վրա Աբովյան փողոցը սիմվոլիկ կերպով բաժանվում է 2 հատվածի՝

(1) Ոչ գրավիչ- Աբովյան պուրակից մինչև Աբովյան-Մոսկովյան խաչմերուկ:

(2) Գրավիչ- Աբովյան-Մոսկովյան խաչմերուկից մինչև Հանրապետության հրապարակ:

Իսկ ո՞րն է փողոցի երկրորդ հատվածի գրավչության պատճառը: Փորձենք փնտրել պատասխանը տվյալ տարածության ֆիզիկական բնութագրիչներում՝ կիրառելով Կ. Գիրցի[156] մանրակրկիտ նկարագրման մեթոդը:

Աբովյան փողոցի *(Աբովյան-Մոսկովյան խաչմերուկից մինչև Հանրապետության հրապարակ)* կարևոր հատկանիշ են լայն մայթերը: Մայթին հատկացված տարածքը վերլուծենք Վ. Մեհթայի կողմից առանձնացված 3 գոտիների միջոցով[157]՝

- ✓ Առաջին գոտին գտնվում է շենքերի եզրերին, և, ըստ էության, օգտագործվում է ելքի և մուտքի, ցուցափեղկերին նայելու,

---

[155] **Mehta V.** (2014). *The Street: A Quintessential Social Public Space*. Routledge, p. 182.

[156] ***Մանրակրկիտ նկարագրման*** **(thick describtion)** մեթոդը առաջադրվել է Կ. Գիրցի կողմից, որը թույլ է տալիս իրականացնել դիտարկման օբյեկտի՝ երևանաբնակների մտային քարտեզների հիման վրա դուրս բերված քաղաքային տարրի՝ Աբովյան փողոցի պատմական, միկրոֆիզիկական, սոցիալական, վարքային հագեցվածության ուսումնասիրում: Մանրամասն տե՛ս Geertz C. (1973). *The interpretation of culture.* -N.Y.: Basic books, էջ՝ 5:

[157] **Mehta V.** (2014). *The Street: A Quintessential Social Public Space*. Routledge, p. 12.

կանգնելու համար: Բացի այդ, եթե փողոցի լայնությունը թույլ է տալիս, կոմերցիոն սուբյեկտները/կետերը համապատասխան ծառայություններից օգտվելու պայմաններ են ստեղծում մարդկանց համար: Աբովյան փողոցում մասնավոր առևտրային և սպառման կետերի առկայությունը փողոցը առավել աշխույժ, մարդաշատ դարձնելու կարևոր գործոններից է:

- ✓ Երկրորդ գոտին հետիոտնային տեղաշարժման համար է նախատեսված, սակայն մարդիկ չեն վարանում կանգնել այստեղով անցնելիս, հատկապես երբ կարճաժամկետ այցելու են:

Հետևաբար, հետիոտնային գոտու համար կարևոր է մի կողմից բավականաչափ լայն ճանապարհը, որը մարդկանց թույլ կտա հանգիստ՝ առանց իրար «հրմշտելու» տեղաշարժվել, մյուս կողմից, զբոսավայր հանդիսանալը, ուր մարդիկ բացի նրանից, որ կարող են տեղաշարժվել, նաև կարող են սոցիալական փոխազդեցության մեջ մտնել: Այս երկու գործողությունները (տեղաշարժվելը և սոցիալական փոխազդեցությունը) չպետք է խանգարեն մեկը մյուսին, հակառակ դեպքում տարածության մասին բացասական վերաբերմունք կձևավորվի:

- ❖ Երրորդ գոտին հիմնականում օգտագործվում է մշտական բնույթի և այլ սոցիալական գործողությունների իրականացման համար՝ նստելու, մարդկանց դիտելու, խաղեր խաղալու, կարդալու, խոսելու, երաժշտություն լսելու և այլն: Այս գոտին ավելի շատ է կահավորված (նստարաններ, կրպակներ, գովազդային ցուցանակներ, լուսավորման սյուներ, ծառեր, կանաչապատում, կանգառներ):

Աբովյան փողոցի այս հատվածի մյուս յուրահատկությունը կայանում է նրանում, որ այստեղ *երթևեկությունը միակողմանի է*, որն էլ

այն դարձնում է *«հանգիստ, ռոմանտիկ, ներդաշնակ»,* որտեղ «*ես ինձ կզգամ իմ ափսեում*»: Բացի այդ, Աբովյան փողոցում, ինչպես նաև Երևանի կենտրոնի հիմնական փողոցների «*սիմվոլիզացված*» հատվածներում (Թումանյան փողոց՝ տուն-թանգարանից մինչև Աբովյան փողոցի հետ հատվելը, Սայաթ-Նովա պողոտան՝ Ֆրանսիայի հրապարակից մինչև Նալբանդյան փողոց, Մաշտոց պողոտան՝ Մատենադարանից մինչև Թումանյան փողոց) բացակայում են **կանգառները**, որոնք մարդկանց և տրանսպորտային միջոցների ատրակտորներ են:

Մինչդեռ Աբովյան փողոցի առաջին հատվածը *(Աբովյան պուրակից մինչև Աբովյան-Մոսկովյան խաչմերուկ)* բնորոշվում է մարդկանց հիպերկենտրոնացմամբ, որտեղ երթևեկությունը երկկողմանի է, մայթերը նեղ են, իսկ կանգառները օրվա ծանրաբեռնված ժամերին՝ մարդաշատ:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ Երևանի կենտրոնի հանրային տարածության սիմվոլիկ կառուցվածքում տեղ գտած բաղադրիչների վերաբերյալ հիշվում է այն ամենը, ինչը դրական ընկալումներ ունի քաղաքը «սպառողի» համար: Բացի այդ, երևանաբնակը ձգտում է ***«լինել», և միևնույն ժամանակ «չլինել» քաղաքի կենտրոնում:*** «Լինելու» իմաստով հասկացվում է քաղաքային հանրային տարածության դրական որակների հետ առնչվելը, իսկ «չլինելու» իմաստով՝ բացասական որակների հետ առնչվելը:

Քաղաքային հանրային տարածության դրական որակները, որոնց կարիքը զգում է երևանաբնակը, և որոնց «սպառողն» է, մնում է նույնը՝

(1) ***անվտանգության զգացում,***

(2) ***պատկանելության զգացում,***

(3) ***հարմարավետության զգացում,***

(4) հաճույքի զգացում,

(5) *սոցիալական փոխազդեցության հնարավորություն:*

Անվտանգության զգացում. որպես անվտանգ ընկալվում են այն փողոցները, որտեղ առկա են խանութներ, սրճարաններ, ռեկրեացիոն այլ վայրեր, իսկ տարածքը բնակելի է: Հետևաբար, քաղաքային փողոցների անվտանգությունն ապահովվում է խանութների, ակումբների, ռեստորանների և այլ «երրորդ կարգի տարածությունների»[158] առկայությամբ՝ որպես ամբողջ օրվա անվտանգությունն ապահովող բաղադրիչ: Երևանաբնակները Աբովյան փողոցի երկրորդ հատվածը համարում են անվտանգ:

Իսկ փողոցի անվտանգության նվազման վրա ազդում են աղբի, գրաֆիտի, վանդալիզմի և վատ պահպանված շենքերի առկայությունը:

Պատկանելության զգացում. այն, որ երևանաբնակները Աբովյան փողոցի երկրորդ հատվածում «իրենց զգում են իրենց ափսեում», առաջացնում է պատկանելության զգացում և էմոցիոնալ բավարարվածություն, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս ունենալ հանրայնության, համայնքային կյանքին հաղորդակից լինելու զգացում: Հետևաբար, մարդկանց, տարածության և իրադարձությունների փոխկապվածությունն առաջացնում է համայնքին պատկանելու և այդ կապերն իմաստավորելու և արժևորելու զգացում: Սովորաբար պատկանելության զգացումը բավարարում են փոքր, լոկալ բիզնեսները կամ Ռ. Օլդենբուրգի կողմից բնորոշված «երրորդ տարածությունները»[159]: Այդպիսի տարածքները սովորաբար հանրային են, սակայն, միևնույն ժամանակ, մասնավոր: Նման տարածքները առաջ են բերում «կոլեկտիվ-սիմվոլիկ սեփականության» զգացում և մարդկանց համար ստանում համայնքային նշանակություն:

---

[158] **Oldenburg R.** (1989). *The great good place*. New York: Paragon House, p. 15.
[159] Տե՛ս նույն տեղում:

Ֆիզիկական հարմարավետության զգացում. Աբովյան փողոցը, երևանաբնակների մատնանշմամբ, հանդիպումների, գնումներ կատարելու, զբոսանքի ու ժամանցի սիրելի վայր է, որը, պայմանավորված փողոցի Ֆիզիկական բնութագրիչներով, նպաստում է մարդկանց երկար ժամանակ հանրային տարածությունում մնալուն և սոցիալական վարք դրսևորելու հնարավորություն է տալիս: Ֆիզիկական այդպիսի բնութագրիչներ են նստարանները, փողոցային այլ կահույքները և ֆիզիկական արտեֆակտները, մայթերի լայնությունը, ծառերը, բուսականությունը, սննդի կետերը, տարաբնույթ խանութները:

Հաճույքի զգացում. երևանաբնակների ասոցիացիաներում Աբովյան փողոցի երկրորդ հատվածը վիզուալ գեղեցիկ պատկեր ունի: Այսինքն, հաճույքի զգացումը ապահովվում է փողոցում ընկալման գործընթացից՝ լույսից, ձայներից, հոտերից, հպումներից, գույներից, ձևերից, տեքստուրայից և այլն, ֆիքսված, կիսաֆիքսված և տեղաշարժվող տարրերից, որոնցով կահավորված է փողոցը:

Այն քաղաքային հանրային տարածքները, որոնք բավարարում են մարդկային առաջին չորս կարիքները (անվտանգություն, պատկանելություն, հարմարավետություն, հաճույք), հավանական է, որ մեծ քանակությամբ մարդկանց ներգրավեն տվյալ տարածք՝ հնարավորություն ստեղծելով բավարարել սոցիալական շփման և փոխազդեցության կարիքները: Այս տեսանկյունից քաղաքային ամենահիշելի/ամենաճանաչելի հանրային տարրերը («**Օպերա», «Հրապարակ», Աբովյան փողոց**) բավարարում են մարդկանց վերոնշյալ պահանջմունքները և հանգեցնում ամենակարևորին՝ *սոցիալական շփման և սոցիալական փոխազդեցության:*

Ընդ որում, փողոցը քաղաքային հանրային այն քվինտէսենցիալ տարրն է, որով անհատը, առաջին հերթին, պատկերացում է կազմում քաղաքի մասին: Քաղաքի վերաբերյալ դրական կարծիքը մե-

ծապես պայմանավորված է նրանով, թե ինչպես է «փողոցային տարածությունը» կազմակերպված: Վերոնշյալ տարածությունը կարող է փոխել մարդկանց կյանքի ոճը, վերաբերմունքը քաղաքի հանդեպ, որն էլ այն կարևոր պատճառներից է, որ մարդիկ չեն ցանկանա հեռանալ քաղաքից: Հետևաբար, իմաստավորել «փողոցային տարածությունը» (ֆիզիկական, սիմվոլիկ) նշանակում է բարելավել ամբողջ քաղաքային տարածությունը:

Ամփոփելով, կարող ենք պնդել, որ Երևանի կենտրոնի հանրային տարածության սիմվոլիկ իշխանության ձևավորումն ու վերարտադրությունը պայմանավորված են տարածությունը բնորոշող նարատիվների և սիմվոլների համադրությամբ. հատկապես գերակա են *անվտանգությունը, պատկանելությունը, հաճույքն ու հարմարավետությունը* խորհրդանշող բաղադրիչները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Alexander C. (2002-05). *The nature of order (4 vols).* Berkeley: Center for Environmental Structure.
2. Alexander C., Ishikawa S., & Silverstein M. (1977). *A pattern language.* New York: Oxford University Press.
3. Andrusz G.D., (1984), Housing and Urban Development in USSR, Albany: State University of New York Press.
4. Bennett J.G. (1993). *Elementary systematics: A tool for understanding wholes.* Santa Fe, NM: Bennett books.
5. Baudrillard J. (1998). *The Consumer Society: Myths and Structures*. Sage.
6. Boffet A. & Rocca Serra, S. (2001). *Identification of spatial Structures within Urban Blocks for Town characterization*. Proceedings of ICC'01 3..
7. Bourdieu P. (2005). *The Social Structures of the Economy.* Cambridge: Polity Press.
8. Bourdieu P. (1989). Social Space and Symbolic Power. *Sociological Theory,* Vol. 7 (1), pp. 14-25.
9. Delanty G. & Engin F.I. (Eds.). (2003). *Handbook of Historical Sociology.* London: SAGE
10. Durkheim E. (1997). *The Division of Labour in Society.* New York: The Free Press, 1997.
11. Elias N. (1994). *The Established and the Outsiders*. London: Sage.
12. Foley D.L. (August, 1980). *The Sociology of Housing.* Annual Review of Sociology, Vol. 6, pպ. 457-478.
13. Foucault M. (October, 1984). *Of Other Spaces: Utopias and Heterotopias.* Architecture /Mouvement/ Continuité.
14. Geertz C. (1973). *The interpretation of culture.* -N.Y.: Basic books.
15. Gentile M. (2013) *Housing allocation under socialism: the Soviet case revisited*. Post-Soviet Affairs, Vol. 29, No.2, pp. 173-195.
16. Goffman E. (1959). *The Presentation of Self in Everyday Life*. USA, New York: Gader City.
17. Habermas J. (1989). *The structural transformation of the public sphere: an inquiry into a category of bourgeois society.* Cambridge, Mass.: MIT Press, p. 135.
18. Howard E. (N.D.). [Online].*Garden cities of tomorrow.* Available from: http://www.library.cornell.edu/Reps/DOCS/howard.htm. [Accessed 24.11.2015].
19. Jacobs A. (1993). *Great Streets.* Cambridge, MA: The MIT Press.

20. Kemmis D. (1990). *Community and the politics of place.* Norman, Oklahoma: University of Oklahoma Press.
21. Lamprecht C. (1889). *Etudes sur l'etat economique de la France pendant la premiere partie de Moyen Age.* Ed. fr.
22. Lefebvre H. (1991). *The Production of Space*. Oxford: Blackwell.
23. Lofland L. (1973). *A World of Strangers: Order and action in urban public space.* New York: Basic Books.
24. Lynch K. (1960). *The Image of the City*. Cambridge MA: MIT Press.
25. Меерович М.Г. [Онлайн]. *Политическая история советской архитектуры и градостроительства.* Доступно: http://archi.ru/lib/publication.html?id=1850569830. [Просмотрено 08.05.2013].
26. Mehta V. (2006). *Lively streets: Exploring the relationship between built environment and social behavior*. University of Meryland (College Park, MD).
27. Mehta V. (2013). *The Street: A Quintessential Social Public Space*. London & New York: Routledge.
28. Mumford L. (1961). *The City in History: Its Origins, Its Transformations, and Its Prospects*. New York: Marcourt, Brace & World.
29. Najafi M. & Shariff M. (2011). *The concept of a place and sense of place in architectural studies.* International Journal of Human and Social Sciences, 6(3), pp. 187-193.
30. Oldenburg R. (1989). *The great good place.* New York: Paragon House.
31. Relph E. (1976). *Place and placelessness.* London: Pion.
32. *Sargsyan T.* (2013), Residental enviromental conditions on housing estates in Yerevan, Hungarian Geographical Bulletin 62, pp. 121-130.
33. *Savage M.* (2011), The Lost Urban Sociology of Pierre Bourdieu, The New Blackwell Companion to the City Edited by Gary Bridge and Sophie Watson.
34. Seamon D. (2004). *Grasping the dynamism of urban place: Contributions from the work of Christopher Alexander, Daniel Kemmis, and Bill Hillier.* In: Mels, T (Ed.), Reanimating places (pp. 123-45). Burlington, Vt: Ashgate.
35. Seamon D. (2008). *Place, placelessness, insideness, and outsideness in John Sayles' Sunshine State.* Aether: Journal of Media Geography, 3. 1-19.
36. Seamon D. (2012). *Place, Place Identity, and Phenomenology: A Triadic Interpretation Based on J.G. Bennett's Systematics*. In Casakin H. & Bernardo F. (Eds.).The Role of Place Identity in the Perception, Understanding, and Design of Built Environments, London: Bentham Science Publishers, pp. 3-21.

37. Shamai S. (1991). *Sense of place: An empirical measurement.* Geoforum, 22 (3), pp. 347-358.
38. Simmel G. & Wolff K.H. (1950). The Metropolis and Mental Life. *The Sociology of Georg Simmel.* Glencoe, Ill.: Free Press.
39. Thomas M. (1991). *The Demise of Public Space*. Town Planning Responses to City Change, Avenbury: Aldershot.
40. Toennies F. (2001). *Community and Civil Society*. Cambridge: Cambridge University Press.
41. Tonnelat S. (2010).*The sociology of urban public spaces.* WANG Hongyang, SAVY Michel and ZHAI Guofang (eds.), Territorial Evolution and Planning Solution: Experiences from China and France, Paris, Atlantis Press.
42. Tuan Y.F. (1977). *Space and Place: The perspective of experience.* Minneapolis: University of Minnesota Press.
43. Vanoyan M. (2004), *Housing Policy In Armenia, Condominium Activity.* Working Paper N04/10.
44. Walzer M. (1986). *Pleasures and cost of urbanity*. Dissent, 33 (4), pp. 470-475.
45. Whyte W. (1988). *City: Rediscovering the Center.* New York: Doubleday.
46. Балян К. (2006). [Онлайн]. *Город, смотрящий на Арарат.* Доступно: http://www.projectclassica.ru/school/18_2006/school2006_18_03a.htm. [Просмотрено 17.09.2015].
47. Балян К. (2007). [Онлайн]. *Ереван. Фрагменты.* Доступно: http://elektra186.livejournal.com/296490.html?thread=2420778. [Просмотрено 17.09.2015].
48. Бауман З. (2008). *Город страхов и город надежд*. Логос, N 3 (66).
49. Бродель Ф. (1986). *Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв.* Т.1: Структуры повседневности: возможное и невозможное, Москва: Прогресс.
50. Бродель Ф. (1994). *Что такое Франция? Пространство и История*. Москва: изд. им. Сабашниковых.
51. Бурдье П. (1994). *Начала*. Москва: Издательство "Socio-Logos".
52. Бурдье П. (2007). *Социология социального пространства*. Москва: Институт экспериментальной социологии; СПб.: Алетейя.
53. Вебер М. (1994). *Город. Избранное.* Образ общества. М.: Юристъ, ст. 704.
54. Вебер М. (1994). *Город. Избранное.* Образ общества. М.: Юристъ.

55. Верлен Б. (2001). *Общество, действие и пространство: альтернативная социальная география*. Социологическое обозрение.
56. Веселкова Н.В. (2010). *Ментальные карты города: вопросы методологии и практики использования*. Социология: методология, методы, математическое моделирование, № 31.
57. Гаспарян М. (2008). *Архтектура Еревана XIX – начала XX века.* Ереван: Изд. “Ушардзан”.
58. Глазков К. (2013). *Экскурсия по городу: ментальные карты как инструмент изучения образа города, Мониторинг общественного мнения: экономические и социальные перемены*. Выпуск № 5 (117).
59. Глазычев В.Л. [Онлайн]. *Поэтика городской среды*. Доступно: http://www.glazychev.ru/habitations&cities/1986_poetika.htm. [Просмотрено 31.01.2016].
60. Глазычев В.Л. (2012). *Как создать центр города?* http://www.youtube.com/watch?v=g8IjFu2DN9s.
61. Гутнов А., Глазычев В. (1990). [Онлайн]. *Мир архитектуры. Лицо города.* Доступно: http://www.glazychev.ru/books/mir_architectury/glava_7/glava_07-04.htm. [Просмотрено 04.03.2015].
62. Епископосян Ш. (2011). *Семиотическая организация и трансформация городского пространства центра Еревана*. Город, Миграция, Рынок: Новый взгляг на социокультурные проблемы в исследованиях ученых Южного Кавказа, Тбилиси: HBS.
63. Лурье С., Давтян А. (2012). *Ереванская цивилизация*. Lap Lambert Academic Publishing.
64. Мамфорд Л. (дата нет). [Онлайн]. Город в истории. Доступно: http://www.ukrainica.org.ua/ukr/projects/misto_i_chas/993-993. [Просмотрено 08.07.2014].
65. Милграм С. (2000). *Эксперимент в социальной психологии.* Санкт-Петербург: Питер.
66. *О планировке гор. Эривани*. (1968). «Բանբեր Հայաստանի արխիվների», N2.
67. Степанцов П., Безруков В. (2008). *Проблема Места и Я (Self) в социальной географии и философии.* Социологическое обозрение. Том 7. № 3.
68. Таманян А. (1968). *О планировке гор. Эривани*. «Բանբեր Հայաստանի արխիվնե-րի».

69. *Ա. Թամանյանի երկու նամակը.* (1969). «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3.
70. Ավետիսյան Կ. Մ., Ավետիսյան Ա. Ա. (1979): Հայրենագիտական էտյուդներ: Երևան: «Սովետական գրող»:
71. *Բնակարանային օրենսգիրք,* հոդված 3. [Առցանց]: Հասանելի է http://www.irtek.am/views/act.aspx?aid=323&m=%27%27&sc: [Դիտված 01.09.2015]:
72. Դյուրկհայմ Է. (2006). *Սոցիոլոգիական մեթոդի կանոնները.* Երևան: Սարգիս Խաչենց:
73. *Երևանի տարեգրությունը* (2009), Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան:
74. *«Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.* Հավելված ՀՀ կառավորության 2013 թ. մարտի 7-ի նիստի № 9 արձանագրային որոշման:
75. Հայաստան: (2004): *Բնակարանային ֆոնդի նկարագրերև ըստ երկրների.* Միացյալ ազգերի կազմակերպություն, Շվեյցարիա:
76. *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն.* հոդված 33.2:
77. ՀՀ ազգային արխիվ, Շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների նիստերի արձանագրություններ.
78. ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ N 112, գործ N 3, 5, 9:
79. *ՀՀ օրենք Երևան քաղաքի ինքնակարման:* (Տարեթիվ չկա): [Առցանց]: Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին: Հասանելի է https://www.yerevan.am/am/ra-law-on-local-government-in-the-city-of-yerevan: [Դիտված 04.09.2015].
80. *ՀՀ օրենք ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին:* [Առցանց]: Հասանելի է http://parliament.am/legislation.php?sel=show&ID=2565. [Դիտված 22.12.2015]:
81. *ՀՕ-5-Ն օրենքը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին.* ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 26.12.2008 թ., ՀՀ Նախագահն այն ստորագրել է 15.01.2009 թ., Օրենքն ուժի մեջ է մտել 26.01.2009 թ., [Առցանց]: Հասանելի է https://www.yerevan.am/am/ra-law-on-local-government-in-the-city-of-yerevan: [Դիտված 08.06.2015]:
82. Մամյան Զ. [Առցանց]. *Երևան քաղաքի հարակագծային զարգացումները գլխավոր հարակագծերում.* Հասանելի է E- Journal № 5,

http://www.rcchd.icomos.org.ge/?l=E&m=4-4&JID=5&AID=38&l2, [Դիտված 14.01.2016]:

83. Պետրոսյան Ա. (2007-2010). [Առցանց]. *Հյուսիսային պողոտա /դիտարկումներ Ալ. Թամանյանի քաղաքաշինական ծրագրերի վերաբերյալ.* Հասանելի է http://araycho.blogspot.am/2010/03/blog-post_15.html. [Դիտված 07.05.2015].

ՀԱՎԵԼՎԱԾ


Գրիգորյան փ.
Գայի պող.
Գայի փ.
Գայի 1-ին նրբանցք
Գայի 2-ին նրբանցք
Գայի 3-ին նրբանցք
Գայի 4-ին նրբանցք
Գայի 5-ին նրբանցք
Գայի 6-ին նրբանցք
Գայի 7-ին նրբանցք
Գայի 8-ին նրբանցք
Գայի 9-ին նրբանցք
Գայի 10-ին նրբանցք
Գայի 11-ին նրբանցք
Գայի 12-ին նրբանցք
Գայի 13-ին նրբանցք
Գայի


Respublic
beketon
Amiryan
Abovyan
PARPETCI
MASHTOC
TUMANYAN
OLD Yer
K.L
BAGHRAMYAN
S.NOVA
CASCADE






1. Marriot hotel
2. National hotel
3. Royal tulip hotel
Erevan square
(opera)
north. ave.
abovyan
republic
square
E2
E3
Republic
square
Masltots ave. (prospekt)
Vazgen sargsyan


Institute of Ancient Manuscripts
Matenadaran
National Library
Abovyan st.
YSMU
Panchikanots
KASKAD
av. Mashtots
Yeritasardakan
YSU
Cinema "Nairi"
av. Baghramyan
OPERA HOUSE
SWAN LAKE
tunnel to "Mankakan yerkatughi"
Yotnaghbyur "pulpulak"
National Gallery
AMIRYAN str.
Republic square
St. Sargis
hotel "Metropol"


Я само не Picasso.
JAZZVE


Тамоч, 21
Заправка
Заправочная
Дыхательный
Мусорный бак
Чистый воздух


Lake
Tumanyan
Moscow cinema.
Abovyan
Metro
Amiryan



площадь



Фонтан





Сүрөт 1. Мектеп




Grand
Candy




Площадь Ленина
Проспект
Сквер
Парк
Ул. Ленина
Ул. Дзержинского
Ул. Свердлова
Ул. Горького
Ул. Ленинградская
Ул. Свет-Ковш
Ул. Абовяна
Ул. Терина
Ул. Дзержинского
Ул. Ленинградская
Ул. Ленинградская
Ул. Ленинградская



Мелик, 23, 3 мас



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՈԿԱԼ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլ՝ 9,875 + 1 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1